

ԱՐԵՄՏԱԶԱՅԱՍՏԱՂ, ԹԷ ԹՈՒՐՔԻԱ...

ԻՍԼԱՄԱՅԱԾ ԿԱՍ ԾՊՏԵԱԼ ՀԱՅԵՐ,

ԹԷ ՊԱՐԶԱՊԵՍ ՀԱՅԵՐ...


Շատ յաճախ այս հարցումները կը կրկնենք մեր մտքերուն մէջ եւ ամէն անգամ, որ կը փորձենք պատասխան մը տալ, կը գտնուինք երկմտանքի դէմ յանդիման, որովհետեւ եթէ հարցերուն մօտենանք զգացական դիտանկիւնէ, անոնք մեզ կ'առաջնորդեն պատասխանի մը, իսկ իրապաշտ ակնոցով նայելով՝ անոնք մեզ կը մղեն որդեգրելու տարբեր վերաբերում: Առաջադրուած հարցումը անշուշտ չի վերաբերիր Արեւմտահայաստանի հայկականութեան եւ այժմու Թուրքիոյ տարածքին գտնուող բռնագրաւեալ հողերուն հայութեան պատկանելիութեան: Ինչպիսի՛ շրջան կրնայ եղած ըլլայ այն, ուր գոյութիւն ունեցած են խաչքար, հայկական իւրայատուկ ճարտարապետութեամբ կերտուած եկեղեցիներ, իսկ այսօր նոյն վայրերուն մէջ տակաւին գոյութիւն ունին «հայկականութիւն» արտացոլող աւերակներ, աւելի՛ն. հոն կ'ապրին ծպտեալ կամ կրօնափոխ եղած հայեր. անիկա հայաբնակ ու հայկական շրջան մըն է անպայման: Սակայն ճիշդ այս կետէն կը սկսի հարցը: Այն հողերը, որոնց մասին կը խօսինք եւ վստահութեամբ կը յայտարարենք, թէ անոնք Մերն են, խորքին մէջ այսօր Արեւմտահայաստան չեն կը ներկայացնեն: Նորօրեայ ո՛չ մէկ քարտէսի վրայ մենք կը կարդանք Արեւմտահայաստան բառը, այդ անուանումը միայն կը կրկնենք մե՛նք, որովհետեւ չենք ուզեր ընդունիլ մեր հողերուն դժբախտ ճակատագիրը: Յետո՞յ... Հարկ է, որ ալ դուրս գանք մեր զգացական աշխարհէն եւ իրականութիւնը տեսնելով գործնականի անցնինք: Անին մերն է կ'ըսենք, բայց աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել Անին մերն էր եւ կրկին մերը պիտի ըլլայ, եթէ զայն վերադարձնելու աշխատանք տանինք: Վերադարձնելու աշխատանքը չի կատարուիր այդ շրջանները այցելելով, անոնց գեղեցկութեամբ հրապուրուելով կամ աւերակները դիտելով, անոնց կորուստը ողբալով ու ափսոսալով: Այդ վերաբերումը միայն ու միայն մեր զգացական աշխարհին գոհացում տալ կը նշանակէ: Ի՛նչ անձնատէր կեցուածք...

Իտեալին ձգտիլն ու հաւատալը անշուշտ կարելոր են, մասնաւորաբար մեր՝ երիտասարդութեան համար: Մենք պէտք է ունենանք այդ խոր հաւատքն ու ապրինք վեհ իտեալով, բայց եւ այնպէս այդքանով պէտք չէ բաւարարուինք, այլ պէտք է համապատասխան աշխատանք տանինք այդ ուղղութեամբ, որպէսզի աւելի հաւաստի կերպով հաստատումներ կատարենք:

Այսօր Թուրքիոյ տարածքին, անցեալի մեր հողերուն վրայ կ'ապրին բազմահազար ծպտեալ քրիստոնէայ հայեր, նաեւ իսլամացած հայեր, որոնց մէկ մասը կ'արտայայտուի իր հայկական արմատներուն մասին, իսկ միւսը՝ կը ծածկէ այդ մէկը, սակայն բոլորն ալ կ'ենթարկուին նոյն ծանր եւ դաժան վերաբերումին: Տեղական իշխանութիւնները խտրականութիւն կը դնեն անոնց եւ այլ քաղաքացիներու միջեւ, ինչպէս նաեւ իսլամները կը մերժեն զանոնք ընդունիլ իբրեւ «իսկական իսլամներ»: Ընդհանրապէս կը քննադատուի այս մօտեցումը... Արդարութիւն պահանջելու ճիշդ կեցուածք: Սակայն եթէ մենք կ'ընդունինք, որ անոնք հայ են եւ կը հաւատանք, որ զանոնք ներգրաւելը առաւելութենէ աւելի անհրաժեշտութիւն է, ուրեմն առաջին հերթին մենք պէտք է արդար մօտեցում ցուցաբերենք անոնց նկատմամբ (այստեղ կ'ընդհանրացնենք կրօնափոխ եղած հայութեան սահմանումը՝ ընդգրկելու համար Թուրքիոյ տարածքէն դուրս ապրողները եւս):

Երիտասարդական մակարդակով նպատակայարմար գործուղումներ կազմակերպելով, իսկ պետական մակարդակով աւելի հիմնական ու լուրջ ծրագիրներ մշակելով եւ համապատասխան որոշումներ որդեգրելով միայն գործնական քայլ առած կ'ըլլանք կրկին Արեւմտահայաստան ունենալու եւ առանց «ծպտեալ» ու «կրօնափոխ» բառերու օգտագործումին, պարզապէս հայեր ունենալու գծով...

Պահը արդէն հասած է խօսքի ու ափսոսանքի սահմաններէն քիչ մը անդին երթալու, ուխտագնացութեան պիտակին տակ մեր բռնագրաւեալ շրջանները այցելելով չգոհանալու, այլ լուրջ աշխատանք տանելու, որպէսզի այդ հողերը կրկին մերը ըլլան, եւ մենք հոն ուխտի չերթանք, այլ՝ բնակութեան:





**«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ԶԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ Է
ՅԵՏԵԻԼ ԱՐԵՄՏԱԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ
ՈՒՆԵՑԱԾ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԶԱՍԿՆԱԼ,
ԹԵ ԻՆՉ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ԶՈՆ»
«ՌԱԶՄԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ԶԱՅԿԱԶ ԱԼՎՐՑԵԱՆ**

Արեւմտահայաստանի մէջ ապրող, տարբեր անուններով ծանօթ եւ հայկական արմատներ ունեցող հայութեան պարզած պատկերին, անոնց անցեալին, ներկային ու ապագային, ինչպէս նաեւ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած վերջին զարգացումներուն մասին խօսեցաւ Արեւմտահայոց հարցերու ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն, «Ակունք» ուսումնասիրական կեդրոնի ղեկավար Զայկազ Ալվրցեան: «Ռազմիկ»ի հետ իր ունեցած գրոյցին ընթացքին անդրադարձ կատարուեցաւ նաեւ դէպի Արեւմտահայաստան կատարուած ուխտագնացութիւններուն դրական ու ժխտական կողմերուն, Զայկազ Ալվրցեան այս իմաստով փոխանցեց իր տեսակէտն ու կարծիքը: Ալվրցեան յոյս յայտնեց, որ Թուրքիոյ կացութիւնը կրնայ փոխուիլ եւ Արեւմտահայաստանի մէջ ապրող հայութեան կացութիւնը կրնայ մեծ փոփոխութիւն կրել:



«ՌԱԶՄԻԿ».- Ի՞նչպէս կրնաք բացատրել «Ակունք» ուսումնասիրական կեդրոնի ստեղծման հրամայականն ու անոր գործունեութիւնը:

ԶԱՅԿԱԶ ԱԼՎՐՑԵԱՆ.- «Ակունք»ը կայքէջը հիմնադրած է Արեւմտահայերու հարցերու ուսումնասիրական կեդրոնը: Այս կեդրոնին նպատակն է ուսումնասիրական նիւթերը մեր ժողովուրդին հասցնել եւ բնականաբար, երբ կ'ըսենք մեր ժողովուրդին նկատի պէտք է ունենանք նաեւ Արեւմտահայաստանի, Կիլիկիոյ եւ Թուրքիոյ մէջ ապրող հայերը: Ճիշդ ասոր համար է, որ կայքէջը հիմնուեցաւ երկու լեզուով՝ հայատառ ու թրքատառ, ինչպէս նաեւ նիւթերը թարգմանաբար կը հրատարակենք: Պէտք է յիշեցնենք, որ մեր նիւթերը ընթերցող արեւմտահայերու եւ թուրքերու թիւը շատ անլի մեծ է, քան ամբողջ հայկական աշխարհի հայալեզու ընթերցողներուն թիւը: Զետաքրքրական է նաեւ, որ կայքէջին հայալեզու բաժինը կ'ընթերցեն մեծ թիւով արեւմտահայեր:

«Ռ».- Ինչպէ՞ս կը հաւաքէք նիւթերը եւ ուսումնասիրութիւններ կը կատարէք:

Զ. Ա.- Մենք առաջին հերթին կ'օգտուինք «Ասպարեզ»ի վրայ եղած պաշտօնական տեղեկութիւններէն եւ ուսումնասիրութիւններէն, այսինքն այն տեղեկութիւններէն, որոնք կը վերաբերին արեւմտահայերու եւ Թուրքիոյ մէջ ապրող հայերու իրավիճակին ու իրադարձութիւններուն: Կ'օգտագործենք նաեւ տեղեկութիւններ հայկական մամուլներէն, որոնք կը հրատարակուին Պոլսոյ մէջ կամ թրքական լրատուական միջոցներուն կողմէ: Ինչպէս նաեւ կ'օգտագործենք Թուրքիոյ մէջ յունական, ասորական եւ քրտական տեղեկութիւնները, որոնք այս նիւթերուն կամ խնդիրներուն մասին կը խօսին, նաեւ հայկական մամուլը՝ ըլլայ ատիկա Զայաստանի կամ սփիւռքի մէջ լոյս տեսնող, որովհետեւ մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերուի այս նիւթին շուրջ, ուսումնասիրութիւններ կը կատարուի այս գծով: Կ'օգտագործենք նաեւ հայ ու թուրք պատմագրութեան վերջին տարիներու նոր ուսումնասիրութիւն-

ներու տուեալները, բանավեճերը, աշխարհի տարբեր մասերու եւ թուրքիոյ, յատկապէս Պոլսոյ մէջ կատարուած Յայկական հարցին նուիրուած խորհրդողածողութիւնները, ինչպէս նաեւ սիւթերը եւ տեսակետները թուրք մտաւորականութեան այն հատուածին, որոնք ճշմարտութեան կողմնակից են, Յրանդ Տինքի գինակիցները եւ այս շարժման զօրակիցներն են: Բայց անշուշտ այս բոլորէն բացի մենք ալ կը կատարենք մեր հիմնական ուսումնասիրութիւնները. մեր տուած այցելութիւնները, գործուղումները, դիտարկումները կ'օգտագործենք պատրաստելու համար ուսումնասիրութիւններ: Կը հրատարակենք համշէնահայերուն վերաբերող գիրք՝ հայերէնով ու թրքերէնով, նաեւ թրքերէնով փոքրիկ աշխատութիւն մը՝ «Յայերուն իրաւունքներու խնդիրները թուրքիոյ մէջ» խորագիրով, որ լուրջ ուսումնասիրութիւն է միջազգային դիտանկիւնէ դիտուած: Այս գիրքը կը խօսի այն մասին, թէ փոքրամասնութիւնները եւ հայերը ի՞նչ իրաւունքներ ունին թուրքիոյ մէջ՝ թրքական եւ միջազգային օրէնքներու տեսանկիւնէ, նաեւ այն մասին, թէ անոնց իրաւունքները ինչպէ՞ս պետք է պաշտպանուին, կարելիութիւն կա՞յ զանոնք պաշտպանելու եւ ի՞նչ են խոչընդոտները: Այս բոլոր ուսումնասիրութիւնները կը նպաստեն մեր աշխարհաճանաչողութեան եւ կարելիութիւն կու տան, որ հասկնանք, թէ ի՞նչ կը կատարուի թուրքիոյ մէջ իրենց ինքնութեան վերադարձող հայկական շրջանակներուն մէջ:

«Ռ.»- Քանի՞ տարիէ ի վեր կը գործէ կայքէջը:

Յ. Ա.- Կայքէջը կը գործէ շուրջ տարիէ մը ի վեր, բայց կէդրոնի գործունեութիւնը աւելի հին է, որովհետեւ մինչ այդ արդէն նախապատրաստական աշխատանքներ տարած էինք, տեղեկութիւններ հաւաքած, ապա ուսումնասիրութիւն կատարած: Այս բոլոր տուեալները հասունցուցին կայքէջը:

«Ռ.»- Ձեզէ առաջ արդէօք այս հարցով հետաքրքրուողներ գոյութիւն ունեցա՞ծ են, պատմագրական այլ աշխատանքներ տարուա՞ծ են:

Յ. Ա.- Արեւմտեան Յայաստանի մասին կատարուած ուսումնասիրութիւնները դժբախտաբար կը վերաբերին մինչեւ 1915 կամ առաւելագոյնը 1920 թուականներուն տիրող կացութեան: Այսինքն մեր պատմութեան մէջ Արեւմտահայաստանը միշտ ներկայացուած է այդ ժամանակահատուածին մէջ, ապա պատմագրութեան համար փակ շրջան մը եղած է, սակայն փոքրիկ աշխատութիւններ կատարուած են՝ ոչ ուսումնասիրական: Վերջին քանի մը տարիներուն ընթացքին է միայն, որ ժապաւէններ պատրաստուեցան այս մասին՝ տարբեր հետազօտողներու կողմէ, որոնք այցելեցին Արեւմտահայաստան եւ իրենց վկայութիւնները սփռեցին այս մասին կամ ուսումնասիրութիւններ պատրաստեցին: Իբրեւ առաջին ուսումնասիրութիւն թրքերէն պետք է յիշենք Ռուբէն Մելքոնեանի աշխատութիւնները՝ մէկը Պոլսոյ հայ համայնքին, իսկ միւսը իսլամացած հայութեան խնդիրներուն մասին: Ես նոյնպէս գրած եմ յօդուածներ, որոնք հրատարակուած են մամուլով, «Դրօշակ»ի մէջ: Հոն անդրադարձ կը կատարենք Արեւմտահայաստանի խնդիրներուն, բնակչութեան պատկերին, ազգային կազմին, տնտեսական ու քաղաքական կացութեան: Վերջին 10-15 տարիներուն այդ շրջանը եւ թուրքիան հայութեան համար փակ էին, միայն վերջերս կարելիութիւններ ստեղծուեցան ուսումնասիրութիւններ կատարելու:



«Ռ.»- Ի՞նչ էր ժողովուրդին եւ հասարակութեան մօտեցումն ու վերաբերումը այս աշխատանքին նկատմամբ, մանաւանդ որ անկա դէպի Արեւմտահայաստան նոր ուղի կը բանայ:

«Ռ.»- Ի՞նչ էր ժողովուրդին եւ հասարակութեան մօտեցումն ու վերաբերումը այս աշխատանքին նկատմամբ, մանաւանդ որ անկա դէպի Արեւմտահայաստան նոր ուղի կը բանայ:

Յ. Ա.- Այս երեւոյթը ժողովուրդին մօտ հետաքրքրական արձագանգ մը տուաւ. բնական է, որ ժողովուրդը հետազօտողներէն մէկ քայլ առաջ ըլլայ, բայց երբ հետազօտողները տարբեր աշխատանքներ կը տանին, ժողովուրդն ալ իր կարգին, որոշ աշխատանք կը տանի, ինչպէս՝ դէպի Կիլիկիա ու Արեւմտահայաստան ուխտագնացութիւններ, որոնք յատուկ նպատակներու կը ծառայեն եւ առիթ կ'ըլլան, որ ծանօթանան իրենց հայրենիքին: Այս ուղղութեամբ մեծ շարժում կայ թէ՛ Յայաստանի եւ թէ՛ սփիւռքի մէջ, մասնաւորաբար ռուսահայութեան մօտ: Հետաքրքրական է, որ այս սիւթերուն շուրջ բազմաթիւ կայքէջներ կը գործեն իրենց աշխարհագրական անուններով, ինչպէս՝ Կիլիկիա, Վան, Մուշ եւ այլն: Ասոնց մեծ մասը ռուսահայերու կը պատկանին. մեր նպատակն է համագործակցիլ այդ




բոլոր կայքէջներու պատասխանատուներուն հետ, որպէսզի նաեւ մեր սիրտերը հասցնենք անոնց:

ներով. հետեւաբար, Թուրքիոյ մէջ ազգային հարցերը շատ սուր են եւ հասունցած:

«Ռ.»- Ինչպէ՞ս կարելի է բացատրել արեւմտահայութեան վիճակը, անոնց պահանջները, ազգային զարթոնքը. արդեօք ներքին յեղափոխութեան մը տուեալները կա՞ն:

«Ռ.»- Ի՞նչ է հիմնական տարբերութիւնը եւ կապը համշէնահայերուն եւ արեւմտահայերուն միջեւ:



Յ. Ա.- Թուրքիոյ մէջ արդէն իսկ յեղափոխութիւն կայ. արդարեւ, ազգային փոքրամասնութիւնները՝ յոյները, քիւրտերը, լազերը եւ այլն, զարթոնք կ'ապրին, ինչպէս նաեւ հայերը, որոնք կը վերականգնեն իրենց պատմական յիշողութիւնը, կը վերանորոգեն եկեղեցիները եւ կը ստեղծեն հայրենակցական ու ազգային միութիւնները: Ուրեմն պէտք է հասկնանք այս յեղափոխութիւնը, սակայն արագ վազելը եւս ճիշդ չէ, որովհետեւ պէտք է օրինական ձեւով ապստամբութիւն կատարուի եւ միջազգային ճանաչում ունենայ, ինչպէս է կացութիւնը այսօր քիւրտերու պարագային: Ինչպէս գիտենք, ազգային հարցը միշտ ալ կարելոր դերակատարութիւն ունեցած է կայսրութիւններու անկման մէջ. արդարեւ, չլուծուած ազգային հարցը կը պայթեցնէ կայսերական կառոյցները, իսկ Թուրքիան իր կառուցուածքով փոքր կայսրութիւն է, որովհետեւ ստեղծուած է բազմաթիւ ազգերու հայրենիքին վրայ եւ փորձած է զանոնք բռնի կերպով թրջացնել, բայց ձախողեցաւ, որովհետեւ եթէ յաջողած ըլլար, այսօր ազգային խնդիրներու դէմ յանդիման չէր գտնուեր: Յոս պէտք է հասկնանք, որ երբ ստեղծուեցաւ Թուրքիոյ Հանրապետութիւնը, անհկա հիմնուեցաւ երկու կէտերու վրայ՝ ոչ իսլամները արտաքսել կամ դուրս մղել Թուրքիայէն, իսկ իսլամ այլազգները՝ քիւրտերը կամ զազաները, թրջացնել: Մօտ մէկ դար անցաւ եւ տեսանք, որ այս քաղաքականութիւնը ձախողեցաւ, որովհետեւ ոչ թուրք իսլամները՝ քիւրտերն ու ալաուիները ապստամբեցան, իսկ միւս ազգութիւնները ուզեցին վերադառնալ իրենց ինքնութեան, անշուշտ նաեւ կորուստներ տուին, արտաքսուեցան եւ ջարդուեցան, բայց հիմնական տարրը մնաց եւ այսօր այդ հիմնական տարրն է, որ կը պաշտպանէ իր հիմնական պահանջները եւ ահա այսպէս Թուրքիոյ մէջ ծնունդ առին ազգային քաղաքական խնդիրներ: Իսկ եթէ Թուրքիա ժողովրդավարական ճանապարհ գտնէ եւ փորձէ հարցը լուծել այդ միջոցով, ապա վստահ, որ այս ազգերը պիտի փորձեն անջատուիլ Թուրքիայէն՝ ժողովրդավարական միջոց-

ներով. հետեւաբար, Թուրքիոյ մէջ ազգային հարցերը շատ սուր են եւ հասունցած:

Յ. Ա.- Համշէնահայերը, ինչպէս նաեւ արեւմտահայերը իսլամացած հայեր են. համշէնահայերուն ծովումը սկսաւ մօտ 300 տարիներ առաջ, անոնք պատերազմների մղեցին եւ պայքարեցան, բայց որպէս փոքրամասնութիւն միշտ ալ պարտութիւն կրեցին, եւ անոնց մէկ մասը ծովուեցաւ դրացի ժողովուրդներու մէջ՝ ընդունելով իսլամական դաւանանքը: Համշէնահայերը քաղաքական եւ բաժանման պատճառով Մեծ Հայքի թագաւորութեան մաս

չէն կազմած, անոնք եղած են Բիւզանդական կայսրութեան ենթակայ, ապա 13-րդ դարէն սկսեալ Տրապիզոնի կայսրութեան մէկ մասը, յետոյ երբ թուրքերը գրաւեցին այդ տարածքը անհկա ինկաւ Օսմանեան տիրապետութեան տակ: Իսկ Արեւմտեան Հայաստանի հայութիւնը միշտ ալ Բարձր Հայքի թագաւորութեան մաս կազմած է, բայց երկու շրջաններուն մէջ ալ Նոյն մշակոյթը կը գործէ, տարբերութիւնը միայն շրջանի ու տարածքի տարբերութիւն է եւ ոչ թէ ցեղային:

Համշէնահայերուն եւ արեւմտահայերուն միջեւ կան նաեւ կապեր, որոնք ձեւաւորուած են քանի մը հիմքերու վրայ. ի վերջոյ այս բոլոր խումբերը Թուրքիոյ Հանրապետութեան քաղաքացի են, հետեւաբար ընկերային ու տնտեսական շփումներ կան իրարու միջեւ: Իբրեւ արդիւնք վերջին զարթոնքին, մտերմութիւն հաստատուեցաւ, բազմաթիւ մշակութային խումբեր համախմբուեցան երկու շրջաններու մէջ, եկեղեցիներ կառուցուեցան, փոխ այցելութիւններ եւ համերգներ կատարուեցան, ժապաւեններ կը նկարահանուին. անոնց կարգին է համշէնահայու մը կողմէ նկարահանուած ժապաւենը՝ Տիգրանակերտի եկեղեցւոյ մէջ եւ հոն ապրող հայերուն մասին: Համշէնահայերը նաեւ թրջական քաղաքական կեանքին մէջ մեծ դերակատարութիւն ունեցած են՝ Թուրքիոյ Նախկին վարչապետ Մեսութ Ելմազը համշէնահայ է, 1915-1920 թուականներու Թուրքիոյ վարչապետ Թալէթ փաշան համշէնահայ է, ինչպէս նաեւ թրջական բանակի զօրավարներ, ոստիկանապետեր, նշանաւոր վաճառականներ եղած են համշէնահայեր:

«Ռ.»- Ի՞նչ է արեւմտահայերուն ճակատագիրը եւ ի՞նչ դժուարութիւն կը գտնեն անոնք՝ վերադառնալու իրենց արմատներուն:

Յ. Ա.- Արեւմտահայերուն ճակատագիրը իրենց ձեռքն է. օրինակ՝ տերսիմահայերը հիմնեցին Յայրենակցական միութիւն մը եւ յայտարարեցին իրենց հայ ըլլալը, պահանջեցին հայկական եկեղեցիներու վերանորոգումն ու վերակառուցումը, սկսան հիմնել հայկական վարժարաններ, մկրտուիլ: Այս է իրենց նպատակը՝ «Ապրե՛ք ըստ ինքնութեամբդ»: Վերջերս անոնք նաեւ կը զարգացնեն իրենց մշակոյթը եւ կ'ընդունին իրենց ազգային դաւանանքը: Գալով դժուարութիւններուն, այսօր թրքական կառավարութիւնը յօժարական գիշումներ չ'ըներ. արտաքին քաղաքականութիւնը ճնշումներու կ'ենթարկէ Թուրքիան, ուր այսօր ազգային փոքրամասնութիւնները առաւել եւս իրաւունքներ կը պահանջեն: Այսօր կը տեսնենք, որ աշխարհի չորս ծագերուն փոքր ազգեր անկախութիւն կը նուաճեն, ինչպէս՝ Զոսովոն եւ Մոնթենեկոն, կայսրութիւններ կը կործանուին, օրինակ Սուտանը, որ բաժնուեցաւ երկուքի: Թուրքիա չի կրնար գերծ մնալ այս շարժումներէն եւ դէպքերէն, մանաւանդ որ Թուրքիա կ'ուզէ անդամակցիլ Եւրոպական միութեան եւ կ'ուզէ ազատական երեւիլ: Այսպիսով, Թուրքիա սկսաւ ժողովրդական քայլեր որդեգրել, որոնցմէ պիտի օգտուին այլ ցեղեր, սակայն Թուրքիա նաեւ լաւապէս կը գիտակցի, որ այս քայլերը խնդիրներ պիտի յառաջացնեն, այդ պատճառով ալ մտահոգ է ան: Ճիշդ այս պատճառով է, որ թրքական կառավարութեան մօտեցումը փոփոխեցաւ՝ փանթուրանիզմէն դէպի իսլամիզմ. առաւել շեշտը կը դրուի իսլամական օրէնքներուն վրայ՝ փորձելով շահարկել կրօնը, իսկ ազգայնամուլ կուսակցութիւններ կը սպառնան կառավարութեան, բայց միեւնոյն ատեն անոնք կը տեսնեն, որ ներկայ իրավիճակով չեն կրնար ազգային փոքրամասնութիւններու հարցը լուծել, ուրեմն ստիպուած են քայլեր առնել: Իսկ եթէ Թուրքիա չկարենայ լուծել քրտական հարցը, ապա վստահ, որ 20 միլիոն քիւրտերը պիտի չընդունին ձուլուիլ եւ «թուրք» կոչուիլ, հետեւաբար պիտի շարունակեն իրենց ապստամբութիւնը եւ պայքարը: Սակայն այս պայքարին կամ հարցին լուծումը օղակներու դրութեամբ կապուած



է այլ հարցերու, այսինքն, եթէ թրքական կառավարութիւնը լուծէ քրտական հարցը, ապա ստիպուած պիտի ըլլայ լուծելու Թուրքիոյ մէջ այլ ցեղերու հարցերը:

Այսինքն Ղարաբաղի հարցի լուծումը միայն Ղարաբաղեան հարց չէ եղած, այլ ամբողջ Խորհրդային Միութեան մէջ անոր փլուզումէն ետք նման հարցեր կային: Խորհրդային Միութիւնը իր բոլոր ուժերով չկարողացաւ դիմադրել այս հարցին. ասիկա հզօրագոյն գէնքն է. այլ խօսքով եթէ նոյնիսկ կայ այն մտայնութիւնը, թէ Թուրքիա հզօր պետութիւն է, կ'ուզէմ շեշտել, որ Խորհրդային Միութիւնն ալ հզօր պետութիւն էր, Ազրայէճան ալ հզօր պետութիւն էր, բայց ո՞վ յաղթեց պատերազմը՝ Արցախը, թէ՞ Ազրայէճանը: Պետք չէ մեր ուղեղին մէջ կաշկանդումներ ստեղծել եւ մտածել, որ արդեօք այս հարցը արդարա՞րէք է եւ լուծում կա՞յ:

«Ռ.»- Դուք ըսած եք, որ Արեւմտահայաստանը ամբողջ մըն է, այսինքն զայն գրաւելու համար պետք է ներս մտնել: Հարցումս կը վերաբերի դէպի Արեւմտահայաստան կազմակերպած զանգուածային ուխտագնացութիւններուն. այսինքն՝ այսպիսի արշաւներ կազմակերպելով մենք Թուրքիոյ տնտեսութեան եւ զբօսաշրջութեան թափ տուած չէ՞նք ըլլար, նաեւ առանց մտածելու, որ ատոր հասոյթին մեծ մասը Թուրքիա կ'օգտագործէ հակահայ պայքար տանելու համար՝ Նախիջեւանի խաչքարները փճացնելու, Ղարաբաղի դէմ եղած գործողութիւններուն նպաստելու:

Յ. Ա.- Վերջին 10 տարիներուն ընթացքին հայերը արդէն կ'երթային Թուրքիա եւ Արեւմտահայաստան, իւրաքանչիւրը իրեն յատուկ նպատակի համար՝ զբօսաշրջութիւն, վաճառականութիւն եւ կամ տեսնելու իրենց պապենական հողը: Այս գործընթացը մեր կամքէն անկախ սկսած է: Մենք մեր ժողովուրդը Արեւմտահայաստան «տանելու կամ չտանելու» ո՛չ ուժը, ո՛չ ալ իրաւասութիւնը ունինք: Անձնապէս, ինչպէս նաեւ Դաշնակցութիւնը, ինչպէս նաեւ շատեր, դէմ ենք Թուրքիա զբօսաշրջութեան երթալու ու հոն զուարճանալու գաղափարին, մենք չենք քաջալերել այդ մէկը: Բայց մենք կը քաջալերենք ոչ թէ Թուրքիա, այլ Արեւմտեան Հայաստան ու Կիլիկիա տրուած այցելութիւնները, որոնք ճանաչողական բնոյթ ունին եւ առիթ կու տան հայուն կապ



հաստատելու իր այնտեղի հայրենակիցներուն հետ, շօշափելու իր հողը, գիտելիքներ ձեռք բերելու: Մենք մեծապես կ'օգտուինք ասկէ՝ զօրացնելով մեր հայրենիքին վերատիրանալու կամքը: Չմտածենք, որ հոն ծախսած մեր գումարները մեծապես կը հօգորացնեն Թուրքիան, այլ ընդհակառակն, մեր հողերը այցելելն ու զանոնք մեզի համար շօշափելի դարձնելը կը հարուածէ Թուրքիան, որովհետեւ որքան դուն զօրանաս ու հայրենիքին վերատիրանալու հրամայականը զօրանայ, այնքան կը տկարանայ Թուրքիան: Երբ ես կ'այցելեմ իմ պապենական հողս իմ դրամս կը ծախսեմ հայերուն խանութներէն առելուոր ընելով, այսպիսով նաեւ օգտակար դարձած կ'ըլլամ հայուն. այսօր ո՞ր երկիրը թրջական արտադրութիւն չի ներմուծեր, Պէյրուսը թրջական արտադրութիւն չի՞ վաճառեր, Նոյնիսքն հայը որքան թրջական ապրանքներ կը բերէ Թուրքիայէն ու կը վաճառէ հայուն:

Մենք այս հարցը ծայրայեղութեան տարած ենք: Անշուշտ երբ քայլ մը առնես տեղ մը շահելու դիմաց ուրիշ տեղ բան մը կը կորսնցնես, բայց մենք արգիլելով կարողացած ենք բան մը իրականացնել: Երբ որ գործընթաց մը կայ եւ դուն հոնկէ շահ ունիս, նախընտրելի է հակադրուելու փոխարէն շահդ ձեռք բերես: 15-20 տարի առաջ մենք կարելիութիւնը չունէինք կապ հաստատելու Արեւմտեան Յայաստանի հետ, չէինք իսկ գիտեր ինչ էր վիճակը արեւմտահայերուն, իսկ այսօր այդ կարելիութիւնը կայ, ուստի պէտք է օգտուիլ առիթէն:

Հարկ է յստակացնել նաեւ, որ ուխտագնացութիւն չի նշանակեր զանգուածային երթեր, այդ կրնայ պատահիլ մէկ անհատով իսկ:

Կ'ուզեմ ձեր ուշադրութեան յանձնել հետեւեալը՝ գիտնալով, որ հոս իրենց հայրենակցական միութեան մէկ ճիւղը կայ, վերջերս Պէյրուս ժամանած էին իսլամացած արեւմտահայեր ու ծանօթանալէ ետք իրենց հայրենակիցներուն՝ կապ հաստատած ու մեկնած են: Հետեւաբար, եթէ մենք չէրթանք, անոնք կու գան: Անոնք կ'երթան նաեւ Յայաստան, Իրան, Նոյնիսկ Եւրոպա ու առելուոր կը կատարեն, կը ծանօթանան հայուն ու կը մկրտուին: Ինչո՞ւ արգիլենք, երբ այս մէկը մեր ժողովուրդը կը տանի գիրար ճանչնալու, մերձենալու, ինչպէս նաեւ ժողովուրդները եւ անոնց խնդիրն ու դատը միասնական դարձնելու հայանպաստ գործընթացին ճամբով: Պէտք չէ Արեւմտահայաստան երթալու խնդիրը արհեստականօրէն լրջացնել ու ձեւին համար բովանդակութիւնը զոհել:

«Ռ.».- Այցելելով Արեւմտահայաստան՝ մենք կապ կը հաստատենք նաեւ թուրքերու հետ. արդէօք

այդ մէկը կրնա՞յ բացասական ազդեցութիւն ձգել մեր վրայ եւ մենք սկսինք հանդուրժողական կեցածք որդեգրել թուրքին հանդէպ:

Հ. Ա.- Ասիկա անելի զգայուն եւ լուրջ հարց է: Գիտենք, որ մեր հարցը Թուրքիոյ հետ է եւ օր մը անպայման պիտի լուծուի հարցը: Այսօր այդպիսի խնդիր սկսած է հայ եւ թուրք մտաւորականներու մակարդակով եւ անոնց միջեւ տեղի կ'ունենան քննարկումներ. խումբ մը թուրք մտաւորականներ՝ հաւաքուած Հրանդ Տինքի սպանութեան շուրջ, սկիզբ դրին այն արշաւին, որ թուրք պետութենէն կը պահանջէ Հայոց ցեղասպանութեան ճանաչում. ասոնք պատահական մարդիկ չեն, այլ լուրջ մտաւորականներ, պատմաբաններ, հետազոտողներ, նուազեւթան թափնեկիր՝ Օրհան Փամուք եւ այլն: Թուրքիոյ մէջ պատմաբան Այշէ Կիւլ «Ռատիքալ»ի մէջ կը գրէ Թուրքիոյ քաղաքականութիւնը քննադատող այնպիսի յօդուածներ, որ Նոյնիսկ հայ իրականութեան մէջ նման համարձակ յօդուածներու չենք հանդիպիր. այսպիսի առիթներէ պէտք է օգտուիլ: Պէտք է նաեւ ձերբազատիւնը զոհի բարոյութեն, որովհետեւ մէկը զոհին հետ չի բանակցիր: Մենք զոհ չենք: Յստակացնենք, որ թրջական բանակը հայկական բանակին բնաւ չէ յաղթած: Պատմութեան մէջ երկու առիթ ունեցած ենք թուրքերու դէմ պատերազմելու եւ երկուքն ալ յաղթած ենք՝ Սարդարապատի ճակատամարտը եւ Արցախի պատերազմը: Երկու յաղթանակի առիթով ալ պետութիւն ստեղծած ենք՝ Յայաստանի առաջին Հանրապետութիւն եւ Արցախի Հանրապետութիւն:

«Ռ.».- Ի՞նչ խօսք ունիք ԼԵՄԻՆ:

Հ. Ա.- Երիտասարդներուն եւ որեւէ երիտասարդական կազմակերպութիւններու կարելուր խնդիրներէն մէկը Արեւմտահայաստանի ծանօթանալն է. հոն տեղի ունեցող գործընթացներուն հետեւիլն է առաջին քայլը: Հասկնալ, թէ հոն ի՞նչ կը կատարուի, կարդալ, ուսումնասիրել, հետաքրքրուիլ, պատկերացում կազմել եւ ապա եթէ անոր մէջ փափաք արթնցաւ երթալու եւ տեսնելու, այդ մէկը խրախուսելի է, յատկապէս երբ վերադարձին ան ուսումնասիրութիւն մը կամ յօդուած մը գրէ, ժապաւեն մը նկարահանէ կամ լուսանկարներու ցուցահանդէս ընէ եւ այս բոլորը դարձնէ ժողովուրդին սեփականութիւնը:

**Հարցազրոյցը վարեց՝ Հ. ԱՒԵՏԱՆԵԱՆ
Արտագրում՝ Արագ Գոճայեան
եւ Եղիկ Թաշճեան**

«ՊԵՏՔ Է ԼՈՒՐՁ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԱՆԻՆՔ ԲՐՏԱՑԱԾ ՀԱՅԵՐՈՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ՓՐԿԵԼՈՒ ԵՒ ՉԱՆՈՆՔ ԴԵՊԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

«ՌԱԶՄԻԿ»ԻՆ Կ'ԸՍԵ ԳԵՈՐԳ ԱԲԷԼԵԱՆ



Հայոց ցեղասպանության վերապրողներու հետքերով ընթացող, վերապրողներուն կողմէ պատմուած պատմութիւններու «որսորդութիւն» կատարող եւ զանոնք գիրքերու մէջ ամփոփելով հայ թէ օտար ընթերցողին ներկայացնող Գեորգ Աբելեանն էր «Ռազմիկ»ի գրուցակիցը: Գ. Աբելեան ո՛չ միայն վերապրողներու պատմութիւնները վերաթարմացնելով կը փորձէ նահատակներուն ու Ցեղասպանութենէն ճողոպրածներուն պատգամներուն շարունակութիւնը երաշխաւորել, այլ ան կը բացայայտէ գոյութիւնն ու պարագան իսլամացած, քրտացած հայերու, որոնք թէեւ կ'ապրին իբրեւ քիւրտ, սակայն իրենց արեան մէջ հայու արիւն կը հոսի ու անոնց մէջ վառ է հայկական ոգին: Հարցազրոյցին ընթացքին Գ. Աբելեան խօսեցաւ իր գիրքերուն մասին, անոնց ծննդեան դրդապատճառներուն անդրադարձաւ, նաեւ յատուկ կերպով լուսարձակի տակ առաւ իսլամացած հայերու իրավիճակը, անոնց զգացումները, կեանքը եւ անորոշութեամբ լի ապագան...

«ՌԱԶՄԻԿ».- Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս սկիզբ առաւ «Ցկեանս նահատակութիւն»ը եւ ինչո՞ւ շարունակուեցաւ «Աղբարի՛կ, ափիկ մը ջո՛ւր»ով:

ԳԵՈՐԳ ԱԲԷԼԵԱՆ.- 1994-ին ես գրած էի «Աննա հարսը» վէպը, որ ընտանիքիս բռնազաղթի պատմութիւնն է, թէ ո՛ւր գացած են, ի՞նչ ըրած են... Շեշտը դրած եմ յատկապէս մեծ մօրս Աննային վրայ, որ արկածախնդրական կեանք մը ապրած է, բայց դժբախտաբար գեղեցիկ վերջ մը չունեցաւ անոր կեանքը:

Ըսեմ, որ հայրս միշտ փափաքած էր այդ պատմութիւնը գրել, բայց չէ կրցած այդ մէկը իրականացնել: Օր մը որոշեցի հօրս երազը իրականացնել ու գրեցի «Աննա հարսը» վէպը: Գիրքը բաւական դրական ընդունելութիւն գտաւ. տարիներ ետք մեր տան պարտեզը կ'աշխատէի, յիշեցի կնոջ մը մասին, որ շրջան մը առաջ գտնուած էր Զեսապ բերուած էր. բռնազաղթէն 50 տարի ետք Դամասկոսէն գտնուած

էր: Կանգ առի եւ ես ինձմէ հաշիւ պահանջեցի, որ ի՞նչ իրաւունք ունիմ միայն մեծ մօրս մասին գրելու, երբ իրեն նման ուրիշներ շատ կան: Հետեւաբար, որոշեցի այդ կնոջ մասին ալ գրել. ան կը կոչուէր Չարուհի Աֆարեան, որուն նախապէս տրուած անունը Չարիֆէ էր: Ապա յաջորդաբար յիշեցի Զեսապի մեր փոքրիկ գիւղին մէջ ապրող այլ անձեր, որոնք նմանօրինակ ճակատագիրներ ու պատմութիւն ունեցած են: Մէկ փնտռտուքը տարաւ ուրիշ տեղ եւ ուրիշ փնտռտուքի, այդպիսով պատմութիւններուն առաջին հատորին թիւը արդէն հասաւ 17-ի: Բոլորը գրեցի, կը մնար վերնագիրը, որ բաւական ժամանակ առաւ: Պահ մը յիշեցի Գեղանուշ «ախրկիւնը». իր տղուն դիմելով՝ նամակով մը ստացայ անոր կեանքին պատմութեան մասին. Գեղանուշ եղած է տեօրթելոյցի (Չորք մարզպան), որբ մնացած է, հասած է Զեսապ եւ հոն ամուսնացած է: Ան կորսնցուցած է իր հայրը, մայրը, հարազատները եւ նոյնիսկ իր անունը: Արդեօք որքա՞ն տառապած է այդ կինը, ինչպէս Չարիֆէն: Չարիֆէն 50 տարի չէ



համարձակած, նոյնիսկ իր գաւակներուն ըսել, որ ինք հայ է, քեսապցի է... Ամբողջ 50 տարի լուռ տառապած է կինը. եթէ ասիկա ցկեանս նահատակութիւն չէ, հապա ի՞նչ է: Հետեւաբար գիրքին անունը վերջապէս որոշեցի «Յկեանս նահատակութիւն» դնել: Մեր մէկուկէս միլիոն նահատակները ճիշդ է, որ չարչարանք ենթարկուեցան, բայց անոնք սպաննուեցան ու վերջ, մինչդէռ վերապրող ակա-

ցելութիւններ կատարուին եւ մեծ աշխատանք տարուի: Շաբաթ մը ետք Մոնթրէալ էի, դարձեալ շնորհահանդէսի, ուր ներկայ էին աւելի քան 200 անձեր: Թէ՛ գիրքիս գերագանց ներկայացումը, զոր կատարեց նախկին աշակերտներէս մէկը, եւ թէ՛ ներկաներու թիւը, անոնց խանդավառութիւնն ու հետաքրքրութիւնը զիս մղեցին յայտարարելու, որ ե՛ս պիտի ըլլամ Սուրիոյ շրջաններ այցելողը եւ անձամբ պիտի շարունակեմ այս աշխատանքը: Ասիկա սկիզբը եղաւ գործս շարունակելու:



«Ռ.».- Ինչո՞ւ երկրորդ գիրքին անունը «Աղբարի՛կ, ափիկ մը ջո՛ւր» է:

Գ. Ա.- Գիրքին առաջին պատմութիւնը Յակոբ Դանիէլեան անունով մէկու մը պատմութիւնն է, որ պատմեց իր աղջիկը՝ Չարուիի Պօշնաքեան: Պատմած ատեն այնքան լացաւ, ես ալ յուզուեցայ, որովհետեւ խօսեցաւ իր հորաքրոջ մասին, որ նաեւ Չարուիի կը կոչւէր. գաղթի ժամանակ գետեզերքէն կը քալէին հայերը, սակայն թուրքերը չէին արտօներ, որ մօտեան, յետոյ կար այն, որ ջուրն ալ դիակներով լեցուն էր, դժուար էր մօտենալ: Աղջնակը

նատեսները տակաւին չեն ազատած, տառապանքը ամէն օր ասոնց սրտերուն մէջ է. անոնք մինչեւ մահ արդէն իսկ նահատակներ են... ցկեանս նահատակներ:

Գիրքի հրատարակութենէն ետք երդուեցի այլեւս այս նիւթին մասին չգրել, որովհետեւ բաւական ծանր էր հոգեկանիս համար: Սակայն տակաւին նոր հրապարակ իջած էր գիրքը, երբ Քեսապէն կին մը, իմ աշխատանքէս ներշնչուած, իր հօրը պատմութիւնը գրեց եւ «Ազգակ»ին մէջ հրատարակեց: Պատմած էր իր հօր տառապանքին, չարչարանքին ու կեանքի ընթացքին մասին:

Խանդավառութիւնս վերստին աշխուժացաւ, որոշեցի դիմել այդ կնկան՝ պատմութիւնը աւելի մանրամասն գիտնալու համար, մինչ այդ պատմութիւններ ծագեցան հոսկէ ու հոնկէ: Քանատայի մէջ կայացած գիրքիս շնորհահանդէսին ընթացքին յայտարարեցի, որ լսած եմ, թէ Տեր Չօրի եւ Գամիշլիի կողմերը կան մեծ թիւով անձեր, որոնք հայկական արմատներ ունենալու են ու կոչ ուղղեցի, որ հոն այ-

ջարդէն վերապրած իր միակ եղբօրը կ'աղաչէ, որ ափիկ մը ջուր տայ իրեն. տե՛ս հակասութիւնը՝ գետը քովդ է, բայց ափիկ մը ջուր չես կրնար ունենալ: Վերջապէս աղջիկը կը լռէ, եղբայրը ետին կը դառնայ, որ աղջկան սեփ-սեւ լեզուն բերնէն կախուած է, ծարաւէն խեղդուած ու գետին ինկած է: Երբ ասիկա լսեցի, ուղղակի ըսի, որ ասիկա գիրքիս խորագիրը պիտի ըլլայ, որովհետեւ շատ խօսուն պատկեր է, եւ մեզ ոչնչացնելու թուրքերուն ամենէն հիմնական միջոցներէն մէկը ջուրէն զրկելն էր քալողները: Այդ մեզ տառապեցնող ջուրը պէտք էր վերնագիրը ըլլար, իսկ Արա Ազատ այս միտքը արտայայտեց իր հասկցած ձեւով ու արուեստով:

«Ռ.».- Խօսեցէք դեպի սուրիական շրջաններ ձեր կատարած ուղեւորութեան մասին, ձեր հանդիպած քրտացած հայերուն ձգած տպաւորութեան մասին:

Ճ. Ա.- Խոստումը տալէս եւ Լիբանան վերադառնալէս ետք, քիչ մը աւելի լրջօրէն երբ մտածեցի այս քայլին մասին, բաւական դժուար թուեցաւ, սակայն կարգ մը բարեկամներու օգնութեամբ կարելի եղաւ

իրականացնել այս մեկը: 2009-ի մայիսին որոշեցի երթալ: Հասանք Գամիշլի, անցանք Տեր Չօրէն եւ Մարկատէն: Ճամբան, հակառակ անոր որ ինքնաշարժով եւ շատ հանգստաւետ պայմաններու մէջ էինք, ջուրով ու սնունդով օժտուած, յոգնած զգացի, իսկ ինքնաշարժէն դուրս նայելով թախիծով կը մտածէի, որ մեր նախնիները ինչպէ՞ս քալած են այս անապատներէն, անօթի ու ծարաւ, մերկ ու յետիոտն, ինչպէ՞ս դիմացած են: Իսկապէս մէջս մեծ պայքար մը ծայր տուաւ:

Գամիշլիի կաթողիկէ վանքին մէջ կանգ առինք եւ սիրով հիւրընկալուեցանք: Ուրեմն աշխատանքը պիտի սկսեր փնտռելու Եղեռնի ընթացքին կորսուած, ապա գտնուած հայեր եւ կամ իսլամացած հայեր: Մեզի հետ կապ հաստատող վարդապետին ծնողքը անոնցմէ էին: Գացինք Իրաքի սահմանի կողմերը, Հիւսէյն Խալիլ անուանով մարդ մը բերին, անոր հարց տուի, թէ ի՞նչ է մօրը անունը՝ «Հայաստան է», ըսաւ: Ինք միայն քրտերէն կը խօսէր, ուստի մեզի ընկերակցողները նաեւ թարգմանի դեր կատարեցին: Ու պատմեց իրենց ցաւալի պատմութիւնը, որ իսկապէս ցնցիչ էր: Հարցուցի նաեւ մեծ մօր անունը, չպատասխանեց, քիչ ետք կրկնեցի հարցումս, անգամ մը եւս պատասխան չստացայ: Շեշտեցի, որ կ'ուզեմ մեծ մօր անունը գիտնալ. ըսաւ՝ «պրն. չէ՞ս հասկնար, ես մեծ մօրս անունը չեմ գիտեր, որովհետեւ մեծ մայրս քրտական գիւղի մը մէջ ձգած է իր աղջիկը (իմ մայրս) եւ առանց ետեւ դառնալու հեռացած է. այդ պատճառով ամբողջ կեանքին ընթացքին մայրս իր մօր անունը բերանը չառաւ»: Ահաւասիկ ի՞նչ խոր տառապանք, նահատակութեան նահատակութիւնն է այս: Վերադարձանք Գամիշլի, կրկին անձնաւորութիւններ, կրկին պատմութիւններ: Երկրորդ օրը գացինք կօշիկի վաճառականի մը մօտ. Մուսթաֆա Ապտալլայի բացատրեցի հոն գտնուելուս պատճառը եւ արաբերէնի թարգմանուած գիրքէս օրինակ մը տուի իրեն: Մօտեցաւ, թելը երկարելով եւ հագլածը վեր քաշելով՝ ըսաւ. «Ա՛ս երակներուն մէջի արիւնը հայու արիւն է: Բայց մենք չենք գիտեր ճիշդ



ի՞նչ ենք՝ հա՛յ ենք, թէ՞ քիւրտ, քրիստոնեա՛յ ենք, թէ՞ իսկամ: Զիւրտերն ալ մեզ կը մերժեն, հայերն ալ»: Ան ուներ զոյգ տղաք, որոնցմէ իւրաքանչիւրը զոյգ անուն կը կրէր՝ Մուհամետ-Սարօ եւ Ահմետ-Կարօ: Մարդուն հարց տուինք, թէ ինչո՞ւ նաեւ հայկական անուն դրած էր, պատասխանեց, թէ այս մեկը ընելը իր հօրը կտակն էր: Անոնք կ'ապրին իբրեւ քիւրտ եւ իսլամացած, քրտերէն կը խօսին, բայց պետութիւնը նոյնիսկ լաւ գիտէ, թէ իրենց արմատները հայկական են, իրենք հայ են:

Յաջորդ օրը բժիշկ Հաքիմ-Եանին հետ գացինք Ռաս Ուլ Այն: «Զիւրտ»ի մը տունը մտանք ու զարմացանք՝ պատին վրայ Եռագոյնը, Լիզպոնի տողոց նկարը, Մեծն Տիգրանի պատկերը եւ ՀՄԸՄ-ի շուշանածաղիկը տեսնելով: Երբ հարց տուինք, թէ այս բոլորը ինչո՞ւ հոն էր, պատասխանեցին. «Ասոնք ՄԵՐՆ են»:

Բայց անոնք նիստ ու կացով, կենցաղով քիւրտ էին. հոն եղած ատենս բաւական յուզիչ ու ցնցիչ պատկեր մը պարզուեցաւ դիմացս: Տան տողոցմէ մեկը մոթորսիքլէթին վրայ դրած էր 4 փոքրիկ աղջիկներ՝ Նանորը, Նայիրին, Արմինէն եւ Մենարը... (Չորս քրտացած հայ աղջիկներուն լուսանկարները ետեւի կողքին վրայ զետեղուած է: «Ռ.»): Հայեր, քրտացած հայ մանուկներ: Ես ինձի հարց տուի, թէ ի՞նչ պիտի ըլլար այս աղջնակներուն ապագան, անոնք հա՛յ, թէ՞ քիւրտ մայրեր պիտի ըլլային... Անոնց բջիջայիններուն մէջ հայկական ազգային գիւնանշաններու եւ դէմքերու նկարներ կային, անոնցմէ մեկը նոյնիսկ փորձած է հայերէն տորվիլ, սակայն օգնողի չգոյութեան պատճառով չէ յաջողած:

Աւելի ուշ գացինք արաբացած քրիստոնեայ հայ ընտանիքի մը քով, որուն բնակարանը պիտի գար քրտացած հայ կին մը, որ պատմէ իր պատմութիւնը: Կիւնը մտաւ սենեակ եւ բոլորս ալ սեղմեց իր կուրծքին՝ ըսելով. «Դուք ի՛մ հարազատներս էք, ի՛մ. իմ արիւնս հայու արիւն է»: Բոլորին աչքերը լեցուեցան... Այս կիւնը եւ իրեն նման կացութեան մէջ եղող հայերը ըսին, որ իրենք անտեսուած են, ոչ ոք կը փնտռէ գիրենք, կը հարցնէ իրենց մասին, ատոր



համար ալ մեր այցելութենէն շատ գոհ մնացին: Յետաքրքրական էր նաեւ այդ կնոջ աղջկան հետ ունեցած հանդիպումս: Աղջիկը՝ Պիլինտա, կ'ապրի Դամասկոս, երբ հոն կը գտնուէի հեռաձայնեցի, որպէսզի հանդիպինք, եկաւ, շատ հարազատութեամբ փաթթուեցաւ, հայերէն գիրքէս օրինակ մը նուիրեցի իրեն, որովհետեւ հոն կար իր մեծ հօր եւ մօր լուսանկարը: Սկիզբը շատ ուրախացած, սակայն աւելի ուշ տխուր ձայնով ըսաւ. «Այս գիրքը իմ լեզուովս գրուած է, սակայն ես մէկ բառ իսկ չեմ կրնար կարդալ»: Չգացի, որ հայուհին այդ վայրկեանին իսկական տառապանք ապրեցաւ:



Այս թղթածրարը բաւական հարուստ է խորքին մէջ: Սուրիոյ մէջ իսլամացած հայերը ցեղախումբ կազմած են՝ 25 հազար անդամներէ բաղկացած: Ունին իրենց յատուկ օրէնքները, ցենզ կը վճարեն, իրարու կ'օգնեն, միմիայն ցեղախումբի անդամներուն միջեւ ամուսնութիւն կը կնքեն: Պետք է նշել, որ թէեւ ցեղախումբը կը փորձէ իր շուրջ համախմբել նմանները, սակայն անկէ դուրս եւս կան մեծ թիւով քրտացած հայեր:

«Ռ.».- Բաւական երկար ճամբայ կտրած էք արդէն. արդեօք կը ծրագրէ՞ք շարունակել պատմութիւններ հաւաքելու եւ գիրքի մէջ ամփոփելու ձեր աշխատանքը:

Գ. Ա.- Եթէ պայմանները ներեն, պիտի շարունակենք այս աշխատանքը: Այս գիրքերը հսկայ արձագանգ ձգեցին ամէնուրեք, շնորհահանդէսներ տեղի ունեցան Պէյրութի, Լաթաքիոյ, Զեսապի, Յալէպի, Այնճարի մէջ: Առիթով մը յայտարարեցի, որ մինչեւ Յայոց ցեղասպանութեան 100-ամեակը պատմութիւններուն թիւը պիտի հասցնեմ 100-ի:

«Ռ.».- Ի՞նչ զգացիք, երբ առաջին անգամ հանդիպեցաք իսլամացած հայերու:

Գ. Ա.- Չզգացի, որ օտար եւք: Չգացի, որ երկուքս հայ ենք, հակառակ անոր որ դիմացինը իսլամ է: Առաջին այցելութենէն ետք յաճախ հեռաձայնային կապ պահեցինք իրարու հետ, երբ խօսիմ անոնց հետ, կարծեք հարազատի մը կամ ազգականի մը հետ կը խօսիմ:

«Ռ.».- Ի՞նչ է ըստ ձեզի, ասոնց ապագան:

Գ. Ա.- Երբ առաջին գիրքս հրատարակեցի, առաջին օրինակս նուիրեցի Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին, որպէսզի ինք նաեւ հարցին կարելութեան անդրադառնայ:

Այս հարցը մեծ հարց է, որովհետեւ կը խօսինք 25 հազար հոգինոց ամբողջական հաւաքականութեան մը մասին, որոնք կը դաւանեն հայ ըլլալը: Ցեղախումբին անունն էր «Աշիրաթ արման մուսլիմին», իմ ունեցած հանդիպումներէս ետք փոխած են անունը եւ այսօր կը կոչուին «Սփիւռքի հայոց ցեղախումբը»: Անոնք հետաքրքրուած են իրենց անցեալով եւ արմատներով: Առաջարկներ եղած են, որ այդ ցեղախումբը Յայաստան տանին, ուր Արարատեան դաշտը իրենց յանձնուելով Յայաստան կը դառնայ շրջանի թիւ 1 ցորեն արտադրողը: Սակայն դիւրին գործ չէ, ցարդ 70-80 հոգի տարուած է արդէն: Առաջարկուած է նաեւ Ղարաբաղ ղրկել գիրքնք. պապուկներէն մէկը հարց տուած է, որ կարելի՞ է հոն մզկիթ կառուցել... Այո՛, ասոնք հայ են արմատներով, սակայն ամբողջ կենցաղով այլ կերպ ապրած են, մէկ օրէն միւսը ամէն ինչ փոխելը դիւրին չէ, անոնք հայ են՝ կառնած իրենց իսլամութեան: Գոնէ հին սերունդը այդպէս է: Մեծ աշխատանք կայ տանելիք եւ հսկայ ուսումնասիրութիւններ պէտք է կատարուին այս մասին. որպէս ազգ մենք պատասխանատուութիւններ ունինք այս զանգուածին

Նկատմամբ: Այս աշխատանքը պետք է կատարուի պետական մակարդակի վրայ, Հայաստանի Հանրապետությունը իր կարգին պետք է լրջօրեն գործէ եւ ճիգ թափէ այս գծով: Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը եւս իր աջակցութիւնը պետք է բերէ որպէս տիրական ներկայութիւն: Տարդ սերունդներ իբրեւ իսլամ ապրեցան, սակայն պետք է աշխատինք նոր սերունդը փրկելու ուղղութեամբ. օրինակ կարելի է Հայաստանի մէջ որոշ շրջան մը յատկացնել անոնց, որպէսզի կարենան քիչ քիչ հայրենի հողին վրայ, հայկական մթնոլորտի մէջ ապրիլ, հայերէն սորվիլ, հայկական ասանդութիւնները իւրացնել, եկեղեցի երթալ եւ քրիստոնեայ դառնալ, մանաւանդ որ հայկական զգացումը արդէն կայ անոնց մօտ: Կան նաեւ անձեր, որոնք սուրիական շրջաններէն հեռանալով գացած են Եւրոպա եւ քրիստոնեայ դարձած են: Հայ երիտասարդներ եւս կրնան անհատական կապեր հաստատել ասոնց հետ, սակայն խորքին մէջ աշխատանքը պետական մակարդակով պետք է ըլլայ: Մարդիկը իրենք գիրենք զուտ հայկական հաւաքականութիւն կը նկատեն, ուրեմն ճիշդ պիտի չըլլայ զանոնք երեսի վրայ ձգել եւ անտեսել զանոնք:



«Ռ.»- Գիտենք, որ «Ցկեանս նահատակութիւն»ը թարգմանուեցաւ արաբերէն ու սպաներէնի. «Աղբարի՛կ, ափիկ մը ջո՛ւր»ի գծով ի՞նչ աշխատանք կը տարուի:

Գ. Ա.- Առաջին հատորին արաբերէն թարգմանութիւնը շատ արագ կերպով կատարուեցաւ Նորա Արիսեանի կողմէ: Անիկա բաւական ընդունելութիւն գտաւ:

2008-ի ամառը Գրողներու միութեան համագումարին մասնակցեցայ. մասնակցողներէն էր նաեւ Պետրոս Հաճեան անունով տարեց գրող մը, Արժանթիւնէն, որուն տուի երեք օրինակ: Քանի մը ամիս ետք լուր դրկեց, որ բարեկամը հետաքրքրուած է գիրքը սպաներէնով լոյս ընծայելով: Որոշ պատմութիւններ ճշդուեցան եւ 12 պատմութիւն թարգմանուեցաւ Վարդան Մաթեոսեանի կողմէ (Նիւ Ճըրզի): Ես ալ իմ կարգին անգլերէնի թարգմանած եմ գիրքը, խմբագրական կարգ մը աշխատանքներու կը կարօտի, յոյսով եմ, որ մօտ օրէն լոյս կը տեսնէ:

Ինծի համար շատ կարեւոր է, որ այս գիրքերը նաեւ թրքերէնի թարգմանուին, այդ գծով աշխատանք կը տանիմ: Ըսեմ, որ Չարաքողուն տեսած է գիրքիս եւ հետաքրքրուած է. կը կարծեմ, որ իր միջոցով կարելի կ'ըլլայ հրատարակել: Թրքերէնի թարգմանութիւնը կարեւոր է, որովհետեւ պետք է նոր սերունդի տղաք ու աղջիկներ այս գիրքը կարդան: Ասիկա քարոզչութեան ամենէն լաւ ձեւն է, ասոնք հարիւր առ հարիւր տոկոսով իրական պատմութիւններ են, եւ ես միշտ կը ջանամ անունները իրենց հարազատութեամբ պահել: Ըսեմ նաեւ, որ Լաթաքիա եղած ատենս «Աղբարի՛կ, ափիկ մը ջո՛ւր» գիրքին արաբերէնի թարգմանութեան եւ հրատարակութեան առաջարկ ստացայ. հաւանական է, որ մայիսին աւարտի:

Իմ երագս է նաեւ, որ 40 պատմուածքներէն զոնէ մէկը ժապաւենի վերածուի, աշխատանք տարի այս ուղղութեամբ, սակայն տակաւին չյաջողեցանք, սակայն չեմ յուսահատած եւ կարելի է այս ալ իրականացնել:

Հարցազրոյցը վարեց՝ Զ. Ա.



ՕԳՏԱՇԱՏ ԿԱՅՔԷՁ ՄԸ՝

«ՎԵՐԱԴԱՐՁ ՁԵՐ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ. ՈՄԱՆՅ ՀԱՄԱՐ՝ ԱՐԵՒՄՏԱՅԱՅԱՍՏԱՆ, ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ՝ ԴԵՊԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ»

Դարուս պատերազմի միջոցները փոխուած են, սակայն նպատակն ու թիրախը կը մնան նոյնը: Մամուլի եւ համացանցի միջոցով հակահայ քարոզչութիւն տանելու համար Թուրքիա միլիոններ կը ծախսէ, որպէսզի տգետ ու Հայ դատին մասին բան չգիտցող օտարին իր «պատմութիւնը» ծախէ: Ներկայ դրութեամբ ասոր դիմաց գիտուիլը եւ թրջական ապատեղեկատուութեան հակադարձելը նոյնքան կարեւոր են, որքան իսկապէս գիտուիլն ու պայքարիլը: Այս առումով համացանցի վրայ գոյութիւն ունին բազմաթիւ կայքէջեր, որոնք կը փորձեն հակակշիռ մը ստեղծել եւ Հայ դատին իսկութիւնը ներկայացնել հայութեան թէ օտարներուն:

www.akunq.net կայքէջը՝ «Արեւմտահայաստանի եւ արեւմտահայութեան հարցերու կեդրոն» վերնագիրով, հայերէն եւ թրքերէն տարբերակներով ելեկտրոնային հասցէ մըն է: Այս կայքէջին նպատակն է «Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիոյ Հանրապետութեան այլ շրջաններուն մէջ ապրող հայութեան կեանքի բոլոր բնագաւառներուն վերաբերող տեղեկութիւններ հաւաքել եւ ուսումնասիրել», ինչպէս նշուած է կայքէջի մայր էջին վրայ:



Այլուքը ունի զանազան բաժիններ.

★ «Արեւմտահայերն այսօր» խորագիրին տակ գետեղուած են ներկայ Արեւմտահայաստանի հայերուն վերաբերեալ հարցեր, ինչպէս՝ ծայտեալ հայերուն մասին. հայութիւնը յուզող հարցեր, ինչպէս՝ Թուրքիոյ վարած քաղաքականութիւնը մեր հնամենի եկեղեցիներուն նկատմամբ:

★ «Արեւմտեան Հայաստանն այսօր» բաժինով կայքէջին մէջ կ'արծարծուին Թուրքիոյ կողմէ

բռնագրաւուած հայկական բռնագրաւեալ քաղաքներուն մասին լուրեր. ընթերցողը հոս կարելիութիւն ունի քայլ պահելու իր նախահայրերուն ծննդավայրին մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն հետ, եւ ըստ այնմ պատրաստ ըլլալու իր հողային պահանջներուն ընթացքին գիտակցութեամբ եւ շօշափելի տուեալներէ մեկնելով մօտենալու հարցին:

★ «Թուրքիոյ քաղաքներ» բաժինին մէջ կը գտնուի Թուրքիոյ մասին տեղեկատուական եւ վերլուծական էջեր:

★ «Կիլիկիա» կը պարունակէ Կիլիկիոյ հայկական գաւառներուն, գիւղերուն եւ քաղաքներուն մասին պատմական տուեալներ:

★ «Համշէն»ի մէջ առիթ կը տրուի գտնելու համշէնահայութեան մասին տեղեկութիւններ եւ նորութիւններ թէ՛ հայ եւ թէ օտար աղբիւրներէն:

★ «Հայոց ցեղասպանութիւն» բաժինը կ'ընդգրկէ Ցեղասպանութեան վերաբերեալ յուշեր, լուրեր, անդրադարձներ եւ հարցեր, որոնք թերեւս կարիք ունին յաւելեալ ուսումնասիրութիւններու:

★ «Մեր երկիրը» բաժինով կը ծանօթանանք Արեւմտահայաստանի շրջաններուն:

★ «Մեր ժառանգութիւնը» բաժինը կը բովանդակէ մեր հողային ժառանգներուն աւանդոյթներու, խոհանոցին, արուեստին մասին տեղեկութիւններ եւ այլ գիտելիքներ:

Կայքէջը ունի նաեւ այլ հետաքրքրական բաժիններ, ինչպէս՝ «Մեր իրաւունքը», «Նորութիւններ», «Ուխտագնացութիւն», «Պատկերասրահ», «Պատմութեան էջեր», «Զարտեսներ» եւ հայերէն թրքերէն եւ հակառակը բառարան:

Կայքէջին կարելի է հետեւիլ նաեւ դիմատետրի (facebook) միջոցով՝ ընկերանալով Akunq Այլուք մասնակիցին հետ:

**ԱՐԱՉ ԳՈՏԱՅԵԱՆ
ԼԵՄ-ի «Արաթ» մասնաճիւղ**

ԱՐԵՎՄՏԱՅԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Բոլորս ալ ապրած ենք Արեւմտահայաստանի կարօտով, չենք այցելած մեր պապենական հողերը, տուները եւ մանաւանդ մեր Մասիսը. այո՛, կ'ուզենք անպայման վերատիրանալ այդ սրբազան հողերուն, նոյնիսկ եթէ պետք է զենքի ուժով, բայց ինչպէ՞ս, ե՞րբ... Այդ գծով ծրագիր մը չունինք:

Ուրեմն պետք է մշակենք ծրագիր մը եւ երեւակայենք, որ, ըստ այս ծրագիրին, ի՞նչ պիտի ըլլայ յառաջիկային Արեւմտահայաստանի եւ իսլամացած հայերուն վիճակը: Հաւանաբար առաջարկներս եւ գաղափարներս շատերու համար երեւակայական ու անկարելի պիտի թուին, սակայն եթէ նայինք ներկայ համաշխարհային քաղաքականութեան, կը տեսնենք, որ Հայ դատը նահանջ կ'արձանագրէ, իսկ ներկայ իրավիճակով եթէ սոր գինեալ պայքար մը վերսկսի, մենք թաղած կ'ըլլանք նոյնիսկ մեր փոքրիկ յաղթանակները: Սակայն կը հաւատամ, որ եթէ հայ ժողովուրդը իր բոլոր հատուածներով համաձայնի յստակ ռազմավարութեան մը շուրջ, անկարելի բան չի մնար:

Ըստ շատ մը աղբիւրներու, ներկայիս Արեւմտահայաստանի մէջ իսլամացած հայերը (տերսիմահայեր եւ համշէնահայեր) մշակութային զարթօնք կ'ապրին, կը բողոքեն թրքական կառավարութեան դէմ եւ կը պահանջեն վերադառնալ իրենց հայկական ու քրիստոնէական արմատներուն: Յիշենք, որ Արեւմտահայաստանի մէջ համշէնահայերուն եւ տերսիմահայերուն թիւը միասնաբար կը հասնի շուրջ 2 միլիոնի, որոնք կ'ապրին աղքատ վիճակի մէջ, բայց անոնց թիւը հետզհետէ կ'աճի, նաեւ անոնք պահած են իրենց հողերը:


Ի՞նչպէս կապ հաստատել արեւմտահայերուն հետ

Ներկայիս դաշնակցութիւնը ուղղակի կամ

անուղղակի կերպով արդէն իսկ կապեր հաստատած է իսլամացած հայերուն հետ: Սակայն այս մէկը անբաւարար է, որովհետեւ եկեղեցին ալ իր դերը պետք է ունենայ այս գործին մէջ:

Ուրեմն, աշխատանքի եւ ոչ թէ խօսքի ժամանակն է. եկեղեցին եւ դաշնակցական մտաւորականութիւնը պետք է թափանցեն այս շրջաններուն մէջ եւ գործուղուին Արեւմտահայաստան, կազմակերպեն սոր գաղութը, եկեղեցիները վերանորոգուին եւ կառուցուին սորերը, հաւանաբար այս մէկը պիտի ըլլայ Պոլսոյ պատրիարքութեան հովանիին տակ, այսինքն՝ նախ պետք է քրիստոնէացնել իսլամացած հայերը: Անշուշտ այս սրբազան գործը պետք է ստանայ եւրոպական կարգ մը քրիստոնէայ կազմակերպութիւններուն աջակցութիւնը. այսպիսով պիտի ապահովենք, որ թրքական կառավարութիւնը չկարենայ միջամտել այս աշխատանքին, որպէսզի իր յարաբերութիւնները չկատարացնէ արեւմուտքին հետ: Իսկ եթէ Թուրքիա միջամտէ, այն ատեն Եւրոպական միութիւնը ճնշում պիտի բանեցնէ Թուրքիոյ վրայ՝ օգտագործելով փոքրամասնութիւններուն իրաւունքի պահպանման պարագան:

Հիմա հասանք ուսումնասիրական ծրագիրին, ուր դաշնակցական ուսուցիչները կամ մտաւորականները իրենց ազգային դերակատարութիւնը պիտի ունենան: Ասիկա պիտի ըլլայ Արեւմտահայաստանի մէջ դպրոցներ եւ ուսումնական կեդրոններ կառուցելով, ներգրաւելով երեխաները այդ կառուցներուն շուրջ, ուր խորքին մէջ դաշնակցական գաղափարաբանութիւն պիտի փոխանցուի, հայկական մշակութային ու ազգային արժէքներ պիտի հաղորդուին, երիտասարդութիւնն ու սոր սերունդը պիտի համախմբուի ազգային զարթօնքի մը շուրջ: Աւելի՛ն. երեխաներուն պետք է հայերէն սորվեցնել, անոնք պարտաւոր պետք է ըլլան սերտելու պատ-






մական, քաղաքական, ազգային-յեղափոխական հայկական գիրքեր: Ուրեմն կարիք կայ ծրագրի մը, որպեսզի կարելի ըլլայ պատրաստել ապագայի արեւմտահայ ուսուցիչն ու մտաւորականը: Արեւմտահայ աշակերտը պիտի ծանօթանայ Յայկ Նահապետին, Վարդան Մամիկոնեանին, Իսրայել Օրիին, զօրավար Անդրանիկին, Յայոց ցեղասպանութեան եւ ամենէն կարելորդ՝ Արցախի ազատագրական պայքարին: Այս վերջինին մէջ գոյութիւն ունեցող պահանջատիրութեան ոգին վարակիչ պիտի դառնայ, որպէսզի անոր մօտ եւս զարգանայ ազատ ու անկախ ապրելու գաղափարը:

Արեւմտահայաստանը դէպի ինքնավարութիւն

Ուրեմն կազմակերպեցինք Արեւմտահայաստանի գաղութը կրօնական ու ազգային դիտանկիւնէ, մեզի մնաց քաղաքականն ու մարտականը:

Նախքան հայ-թրքական արձանագրութիւններուն ստորագրութիւնը ու անկէ ետք եւս, Թուրքիա սկսաւ պայմաններ դնել Յայաստանի վրայ, յատկապէս Ղարաբաղի հարցով, ուր, ըստ թրքական կառավարութեան, «նախքան սահմաններու վերաբացումը հայոց ուժերը պէտք է դուրս գան ազերիական բռնագրաւուած տարածքներէն»: Յայաստանի կառավարութիւնը Յայոց ցեղասպանութիւնը իբրեւ նախապայման չնկատեց արձանագրութիւններու ստորագրութեան. ամէն պարագայի Յայաստան Ցեղասպանութեան հարցէն զատ ուրիշ ոչ մէկ պայման կրնար դնել:

Սակայն երբ մտածենք Արեւմտահայաստանի մէջ գտնուող հայերուն մասին, որոնք արդէն իսկ վերադարձած են իրենց արմատներուն, վստահաբար թրքական իշխանութիւնները պիտի փորձեն ամէն ջանք թափել, որպէսզի տնտեսական, ընկերային, ազգային եւ այլ ճնշումներու ենթարկեն արեւմտահայերը: Իսկ եթէ Թուրքիան Ղարաբաղի հարցը կը տեսնէ իբրեւ պայման հայ-թրքական յարաբերութեան, Յայաստան նաեւ պէտք է իբրեւ նախապայման առաջադրէ արեւմտահայերու տնտեսական, ընկերային եւ ազգային ու այլ իրաւունքներու խնդիրը եւ այսպիսով ճնշում բանեցնէ հակառակորդին վրայ: Այսպիսով, արեւմտահայերուն հարցը պիտի համաշխարհայինանայ, եւ Թուրքիա արեւմտեան երկիրներուն կողմէ ճնշումներու պիտի ենթարկուի, որպէսզի բարենորոգումներ կատարէ Արեւմտահայաստանի մէջ: Սակայն այս մէկը դարձեալ բաւարար չէ. արեւմտահայերը պէտք է քաղաքական որոշ կապ հաստատեն քրտական կազմակերպութիւններուն հետ եւ մարտական ճակատ կազմեն՝ ընդդէմ Թուրքիոյ, ինչպէս նաեւ մշակեն կամ ծրագրեն ապագայի սահմանային քարտէս մը, հաւանաբար



Սերի դաշնագիրը, որուն համաձայն ճնշուեցան Յայաստանի եւ Քիւրտիստանի սահմանները, զորս մինչեւ հիմա հայկական կուսակցութիւնները չկրցան իրականացնել եւ քիւրտ ըմբոստներուն հետ համաձայնիլ այս նիւթին շուրջ: Ահա այսպէս, առաջնորդուելով այն կարգախօսով, որ «թշնամիի թշնամին բարեկամո՞ւ է», արեւմտահայ եւ քիւրտ բնակչութիւնը միասնաբար պիտի պահանջէ իր դաւաւոր քաղաքական իրաւունքները: Այս մէկը պէտք է կատարուի զինեալ յեղափոխութեամբ կամ խորամանկ դիւանագիտութեամբ: Սակայն նախքան անջատողական քայլերու դիմելը, Յայաստանի իշխանութիւնը պէտք է քաջալերէ արեւմտահայերը՝ դիմելու Յայաստանի քաղաքացիութեան, որպէսզի այսպիսով շրջանի բնակչութեան մէկ մասը ըլլայ Յայաստանի քաղաքացի: Այս վերջինները սեփականատերերն են Արեւմտահայաստանի մէկ մասին:

Այսպիսով ստացած կ'ըլլանք միջազգային կազմակերպութեան աջակցութիւնը եւ, միջազգային օրէնքին համաձայն, այդ շրջանին մէջ կարելի կը դառնայ հանրաքուէ կազմակերպել՝ ինքնորոշման հարցով: Ահա մեզի նոր Արցախ մը:

Այս ծրագիրը պէտք է իրագործուի Արեւմտահայաստանի մէջ. ծրագիր մը, որ բաւական երկար ժամանակի կը կարօտի եւ կրնայ ըլլալ, որ իրականանայ 100 կամ 200 տարի ետք, սակայն անկարելի բան չկայ, ինչպէս նաեւ նման ծրագիր մը աւելի յաջող ու վստահելի է, քան Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի ծերակոյտերէն Յայոց ցեղասպանութեան ճանաչում մուրալը:

Ե. Թ.

ԼԵՄ-ի «Յայր Դժոխք» մասնաճիւղ

ՊԱՅՔԱՐ՝ ԹՐԲԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԹԱՓԱՆՑՄԱՆ ԴԵՄ

Ներկայիս Միջին Արեւելքը կը տառապի վարակիչ «հիւանդութենէ» մը, որ կը շարունակէ ցնցել եւ կործանել բազմաթիւ ցեղեր ու ազգեր: Չարմանալին այն է, որ շրջանի հասարակութիւնը տեղեակ է այս «հիւանդութենէն» եւ պարզապէս կ'ընդունի դառնալ անոր յաջորդ գոհը: Բոլոր արաբական երկիրներուն վարակած է այս «հիւանդութիւնը» եւ անիկա անխնայ «կը հարուածէ» բոլորը անխտիր: Խօսքս Միջին Արեւելքի մէջ թրքական մշակոյթի թափանցման մասին է՝ ըլլայ ճարտարարուեստական արտադրութիւններով (ուտեստեղէն, հանդերձեղէն), լրատուական ու պատկերասփիւռի յայտագիրներով եւ քաղաքական բնագաւառին մէջ տարուած աշխատանքով: Այն, ինչ որ անցեալին թուրքը չէր կրցած իրագործել, չէր կրցած թրքացնել իր տիրապետութեան տակ գտնուող ժողովուրդները, ներկայիս կ'իրականանայ հեզասահ կերպով: Փաստօրէն, համաշխարհայնացման պիտակին տակ թրքական մշակոյթը կը թափանցէ լիբանանեան գրեթէ ամէն տունէ ներս: Անոնք կը տարածեն իրենց թրքական մշակոյթը պատկերասփիւռի կայաններուն եւ համացանցի կայքէջներուն ընդմէջէն, ինչպէս նաեւ թրքական արտադրութիւններով, որոնք ո'չ միայն ողողած են Լիբանանը, այլ նաեւ՝ հայկական թաղերն ու վաճառատուները: Դժբախտաբար, կարգ մը հայ վաճառականներ՝ մոռնալով իրենց ազգային պատկանելիութիւնն ու սրբազան դատը, կը մտածեն միայն իբրեւ վաճառականներ, այսինքն՝ «ուր հաց, հոն կաց»:

Դժբախտաբար լիբանանահայ իրականութեան մէջ տեղայնացման եւ նիւթապաշտութեան այս մօտեցումը մեծ համեմատութեան հասած է, եւ անոր հետեւանքները պիտի ըլլան շատ անելի ահաւոր ու ժխտական, քան ինչ որ նոյնինքն թուրքը կը փորձէ իրականացնել: Ծիծաղելի այն է, որ կան միամիտներ, որոնք կը կարծեն, թէ քաջալերելով թրքական արտադրութիւնը, գործակցելով թուրք վաճառականներու հետ ու մանաւանդ հետեւելով արաբերէնի թարգմանուած թրքական ֆիլմաշարերու ընդմէջէն պարզուող հողային տարածքներուն, կարելիութիւն կ'ունենան անելի մօտ զգալու Պատմական Յայաստանի մօտակայ շրջաններուն: Բարեբախտաբար այսօր գեթ ֆիզիքապէս մեզի հետ չեն շաքէներն ու այն հայ հերոսուհիները, որոնք իրենք զիրենք Եփրատ գետը նետեցին չթրքանալու համար...

Լիբանանահայութիւնը եւ յատկապէս Յայ յեղափոխական դաշնակցութիւնը տակաւին կը պայքարին այս անհանդուրժելի երեւոյթին դէմ: Հոս կարելորդ դեր ունին լիբանանահայ երիտասարդները եւ յատկապէս ԼԵՄ-ը: Արդարեւ, պատմութիւնը ցոյց կու տայ, որ յեղափոխութիւնները ընդհանրապէս ծնունդ են, արդիւնք են յանդուգն երիտասարդներու միացեալ ջանքերուն եւ մշակուած մտքերու համախոհութեան: Վկայ Յայ յեղափոխական դաշնակցութեան հիմնադիր երրորդութիւնը՝

Քրիստափոր, Ռոստոմ, Չաւարեանը, որոնք

համալսարանական նորահաս երիտասարդներ էին, երբ 1980-ին Թիֆլիսի մէջ հիմնեցին այս կուսակցութիւնը: Աւելի'ն. հայ երիտասարդը պետք է ըմբռնէ իր ազգային ծագումն ու պատկանելիութիւնը օտար մշակոյթներուն դիմաց, պետք է հասկնայ իր մշակոյթին դերակատարութիւնը հայ ժողովուրդի գոյապայքարին մէջ՝ իբրեւ ինքնուրոյն դիմագիծ ունեցող ազգ: Այս իմաստով, թրքական մշակոյթին թափանցումը մեծ վտանգ կը սպառնայ Միջին Արեւելքի հայութեան եւ առհասարակ սփիւռքահայութեան, մինչեւ իսկ հայրենի հայութեան համար: Պահանջատեր երիտասարդութիւնը պետք է մերժէ ու պայքարի լիբանանահայութեան դէմ ցցուած թրքական թափանցումի այս հոսանքին դէմ: Ցաւալին այն է, որ ո'չ միայն նիւթապէս համեստ հայերը կը փութան գնելու թրքական արտադրութիւններ, այլ նաեւ մեծահարուստ կարգ մը հայեր կը նախընտրեն թրքական ապրանքները, զանոնք գերադասելով տեղականին ու այլ երկիրներէ ներածուած արտադ-





րութիւններուն: Երկրին տնտեսական վատ վիճակը պատրուակելով՝ երիտասարդներ կը փութան մատչելի գիտելիքներու եւ հագուստեղէնի կողմը՝ առանց մտածելու, թէ մնան քայլ մը ինչ հետեւանք կրնայ ունենալ: Ուրիշներ ժամերով կը յուզին թուրք դերասանուհիներուն կեղծ արցունքներուն պատճառով՝ մոռնալով



ի ր ե ն ց մեծ մայրերուն ու հայրերուն ճիչերն ու լացուկոծերը, երբ նոյն դերասանուհիներուն նախնիները 1915 թուականին անմարդկային ոճիրներ գործեցին՝ մեզ ոչնչացնելու կամ թրջացնելու նպատակով: Արդեօք ի՞նչ պիտի մտածէին այն հայ մայրերը, որոնք թուրքէն փախուստ տալով եւ չթրջանալու համար իրենց իսկ ձեռքերով խեղդեցին իրենց լացող մանկիկները: Տարիներէ ի վեր ՀԶԴ-ն իր տարբեր ճիւղաւորումներով կը պայքարի այս երեւոյթին դէմ՝ բաժնելով թղթիկներ, *սթիքըրներ* եւ այլ միջոցներով հասարակութեան ուշադրութեան յանձնելով նման վտանգի առկայութիւնը եւ զգուշաւորութեան հրաւիրելով հայորդիները: Մեծ մայրս կը պատմէր, որ ԼԵՄ-ականներ հայաբնակ տուններուն պատուհաններէն վար գլորած են թրքերէն երաժշտութիւն սփռող ձայնասփիւռի կազմածները: Այսօր սակայն հաղորդակցութեան միջոցներու այս արագընթաց հոսանքին մէջ, շնորհիւ կոճակի մը կարելի է հասնիլ ամէն տեղ: Այո՛, ամէն տեղ, նոյնիսկ թրքական հաղորդակցութեան միջոցներ կը սփռուին համացանցի միջոցով: Վստահաբար կարելի չէ հասնիլ ամէն տեղ ու արգիլել բոլոր կոճակներու սեղմումը: Այդ

մէկը կախեալ է իւրաքանչիւր հայու գիտակցութենէն, թէ իբրեւ հայ հարկ է մերժել թրքական մշակոյթի թափանցումը մեր տուններէն ներս: Այս արտադրութիւններու թափանցումը լոկ բարոյական վնասներ չեն պատճառեր, այլ նաեւ նիւթական, որովհետեւ որքան ալ ջնջին ըլլայ լիբանանահայութենէն թուրքերուն ունեցած շահերը, պէտք է գիտակցիլ, որ այդ քիչն իսկ պիտի ծառայէ մեզի դէմ պայքարի:

Ուրեմն, պէտք է մնայուն կերպով շեշտել, յատկապէս երիտասարդական մակարդակի վրայ, որ պայքարը անհրաժեշտութիւն է, իսկ երիտասարդութեան դերը շատ կարեւոր ու մեծ է այս վարակիչ հիւանդութիւնը հայ շրջանակներէն հեռու պահելու համար:

Անցնինք գործնականի. պէտք է, նախ եւ առաջ, շեշտաւորել հայեցի դաստիարակութիւնը դպրոցներուն եւ համալսարաններուն մէջ, որովհետեւ վերջ ի վերջոյ հայեցի դաստիարակութիւնն է, որ պիտի կազմաւորէ հայ երիտասարդը՝ կերտելով անոր ազգային ոգին ու մարդկային հարուստ նկարագիրը: Հայ երիտասարդութեան մէկ մասը անտարբեր է նման հարցերու նկատմամբ, անոր համար կարեւորը անձնական հաճոյքն է, ոչ թէ ազգային գիտակցութիւնը: Հետեւաբար, հարկ է դիմել ուշագրաւ եւ ազդու միջոցներու՝ ներգրաւելու եւ զօրաշարժի ենթարկելու լիբանանահայութիւնը, պայքարելու թրջացման այս անուղղակի ոճերուն ու ձեւերուն դէմ: Պէտք է կազմակերպել սեմինարներ, ձեռնարկներ, արշաւներ, ուր պիտի մատնանշուին նման մտեցումներու ժխտական ազդեցութիւնն ու հետեւանքները ապագայ հայ սերունդին վրայ, յատկապէս Հայ դատի իրականացման մէջ: Հայութիւնը հետզհետէ կը կորսնցնէ իր երիտասարդութիւնը... Շատեր արշաւ կը տանին թմրամոլութեան, ծխախոտի գործածութեան եւ այլ վնասակար երեւոյթներու դէմ, սակայն կայ նաեւ այս «հիւանդութիւնը», որուն դէմ իսկական ու ազդու պայքար պէտք է ծաւալիլ եւ զայն կասեցնելու ուղիներ գտնել:

ՄՈՒՇԵՂ ԳՈՐԱՎՈՐԴԱՆԵԱՆ
ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղ

«ԷԼ ՉԽՕՍԵՑ ԱՐԱՔՍԸ»

**Հայ ժողովուրդը հողին մեջ ուրիշ է...
Հողեն դուրս կը մեռնի:
ՍԱՐԳԻՍ ՉԷՅՅԼԵԱՆ**

Երգ, պար, երաժշտություն, մշակոյթ, ստեղծագործություն, կեանք, ինքնություն... հայու ինքնություն:

«Հայը»՝ իբրեւ աշխարհի ամենէն հին ժողովուրդներէն մէկը, ունի իր հազարաւոր տարիներու պատմութիւնը եւ՝ ի՛նչ պատմութիւն... Պատերազմ, յաղթանակներ, թագաւորութիւններ, աւանդութիւն, մշակոյթ, ցեղասպանութիւն եւ, ամենէն կարելորդ, վերածնունդ: Մէկ խօսքով՝ հայը մէկն է այն ժողովուրդներէն, որոնք մեռնիլ չեն գիտեր:

Ահա հասանք 21-րդ դար, երբ համաշխարհայնացումը գլուխը առած՝ գացած է, մենք եւս սկսած ենք շեղիլ հայ ժողովուրդի իսկական տիպարէն, փիւնիկեան ինքնութենէն եւ հայկական մշակութային ու այլ արժէքներուն դիմաց կանգնեցուցած են հաստ ու հսկայ պատեր... Դարձած ենք օտարամոլ, դարձած ենք կեղծիքներով առաջնորդուող: Յիշեցնեմ Ուիլիըմ Սարոյեանի խօսքը. «Ուրանալ ինքնութիւնը՝ կը նշանակէ գոյութիւն չունենալ»:

Վերջին շաբաթներուն բաւական ցնցիչ իրադարձութիւններ տեղի ունեցան իսկապէս. քանի մը ԼԵՄ-ականներով պտոյտ մը կատարեցինք Արաքս փողոցին մէջ՝ Պուրճ Համուտի սրտին վրայ, որ կը կոչուի սփիւռքի մայրաքաղաքը, լիբանանահայութեան կորիզը:

Երեւակայեցէք պահ մը, թէ ո՛ր կը գտնուէինք. տեղ մը, ուր հայը հերոս է, ուր փողոցները Եռագոյնով զարդարուած են, շէքերուն մուտքերը զինանշաններով օրհնուած են, ուր կը խօսին հայերէն... Իջանք մեր փոքրիկ Հայաստանը, սփիւռքի Հայաստանը:

Գիտակցաբար ուղղուեցանք հոն, որպէսզի համտեսենք Արաքսի գուլալ ջուրէն, բայց դժբախտաբար տեսանք, որ «Արաքս»ի ջուրը կարծէք սկսած է պղտորիլ, ցեխոտիլ եւ թունաւորուիլ:

Մենք մեզ գտանք տեղ մը, ուր թրքացման ալիքը սկսած է հարուածել, ուր ազգային արժանապատուութիւնն ու հպարտութիւնը նահանջ արձանագրած է, ուր մեր քաղցր լեզուն կ'աղաւաղի, ուր մեր թշնամիին արտադրութիւնները կը վաճառուին:

Մենք մեզ գտանք այնպիսի տարածքի մէջ, ուր օտար լեզուն կը գերադասէ մայրենիին, ուր կը քաշալերուին թրքական արտադրութիւնները, ուտելիքները եւ հագուստները, անշուշտ կը դիտուին թրքական անբարոյ ֆիլմաշարերը:

Մենք մեզ գտանք այնպիսի հողի մը վրայ, ուր սկսած է տիրական ըլլալ «Ո՛ր հաց, հոն կաց» փիլիսոփայութիւնը... Ուր անհատական շահերը կը գերադասեն ազգին շահերուն...

Հանդիպեցայ այնպիսի անձերու, որոնց հայ ըլլալը անհաւատալի կը թուի, անոնք հաւանաբար չակերտեալ հայ պետք է կոչուին...

Տակաւին մտքիս մէջ կը հարուածէ երիտասարդ հայ վաճառականի մը պատասխանը, երբ հարցուցի, թէ ի՛նչ կը զգայ թուրքիա երթալով... «Հանգիստ,- ըսաւ,- կը յարգեն մեզ, շա՛տ, մենք եղբայրներ ենք՝ կ'ըսեն», հաստատեց՝ իսկապէս հաւատալով իր ըսածին: Շատ հաւանաբար Յեղասպանութեան վերաբերող դասաւանդութեան քննութեան ձախողած է այս երիտասարդը, որովհետեւ անոր համար համիտեան ջարդերն ու ապրիլեան ցեղասպանութիւնը ոչինչ կ'ըսեն, Հրանդ Տիկի ահաբեկումն ու ազրայեճանական ջարդերը կրնան «յարգանք»ի արտայայտութիւն ըլլալ իրեն համար, իսկ Էրտողանի սպառնալիքները՝ թուրքոյ մէջ ապրող 100 հազար հայութեան, «եղբայրութեան» նշան էին, ըստ երեւոյթին...

Իսկ աւելի ցնցիչ ու սահմնկեցուցիչ պատասխանը ապտակի նման դեմքիս դպաւ, երբ հարց տուի,



թե Թուրքիա գացած ատեն արդեօք նաեւ Արեւմտահայաստան կ'երթա՞յ, մեր հողերը կ'այցելէ՞. «Մեր հողերը ո՞րն են», դուրս եկաւ անոր բերնէն: Ուզեցի ինծի հասած աներեւոյթ ապտակին փոխարէն իսկական ապտակ մը դրոշմել անոր դէմքին...

«Մեր հողերը ո՞րն են»... Արդեօք այս երիտասարդին մեծ հայրը կամ անոր հայր ո՞ւր ծնած են, Սասնոյ եարխուշտան եւ քոչարին ո՞ր շրջանի պարերն են, Մշոյ խըրը եւ Տիգրանակերտի մարտականը ո՞ր ազգի պարերն են, Խարբերդի թամզարան ու Էրզրումի շորորը ո՞ր ազգի ազգագրական պարերն են... Մուսա լեռան տեպքէն եւ ցունտըր հաւան որո՞ւ հողերուն վրայ ծնունդ առին... Մե՛ր հողերէն, «հա՛յ» երիտասարդ:

Տաւ ի սիրտ, կայ նաեւ այլ ցաւալի երեւոյթ մը. կարգ մը հայ ուսուցիչներ, որոնք սկզբունքով հայ աշակերտին իտեալը պէտք է ըլլան, գացած են ու իրենց ամառնային արձակուրդը անցուցած են Պոլսոյ մէջ, անոնք կը կրեն թրքական հագուստներ, կը դիտեն թրքական յայտագիրներ... Հաւանաբար շատ ալ զարմանալի պէտք չէ թուի, որ նոր սերունդը ինչո՞ւ երբեմն շատ անտարբեր կ'ըլլայ իր ինքնութեան ու արժէքներուն նկատմամբ:

Բնականաբար պէտք չէ մոռնալ կամ ուրանալ, որ կան տիպար հայ ուսուցիչներ, որոնք իսկական հայ սերունդներ կերտելու աշխատանքին լծուած են, բայց կարելի չէ նաեւ աչք խփել միասնորոն գոյութեան, որովհետեւ անոնք ւաւերներ կը գործեն եւ սերունդներ կը քայքայեն: Նմաններուն մօտ անտրամաբանական պատճառաբանութիւնները անպակաս են՝ թրքական արտադրութիւններ կարելի է սպառել, որովհետեւ անոնք խորքին մէջ մեր հայկական հողերուն վրայ պատրաստուած են, թրքական ժապաւեններ կարելի է դիտել, որովհետեւ անոնք արաբերէնով կը ներկայացուին, Թուրքիա կարելի է այցելել, որովհետեւ նպատակը ուխտագնացութիւն է, սակայն Պոլսոյ մէջ շրջագայիլը արդեօք նոյն նպատակի՞ն կը ծառայէ...

Անոնք կ'ուզեն մեզ համոզել, որ եթէ առիծին մագերը կտրենք անիկա, վագրի կը վերածուի. անոնք կը մոռնան կամ կ'ուզեն անտեսել, որ թրքական ժապաւեններուն միջոցով թրքական «արժէքներ» կը փոխանցուին՝ անգութ, բարբարոսութեամբ դրոշմուած, մարդասպանական ու անմարդկային արժէքներ:

Թուրքիա այցելելը երբեք պէտք չէ առնչել Արեւմտահայաստան երթալուն, թրքական արտադրու-



թիւնները քաջալերողը նաեւ քաջալերած կ'ըլլայ հայութեան դէմ մղուող ամէն տեսակին պատերազմ ու անոր դէմ գործադրուած ամէն տեսակի սպանդ:

Թշնամին քաջալերողը այն է, որ Ղարաբաղեան պատերազմին թշնամիին թիկունք կը կանգի, հայկական պատմամշակութային կառոյցներու բնաջնջման կը նպաստէ, թրքական սուտերով լեցուն քարոզչութիւնը կը հովանաւորէ:

Տակաւին մեզ կը քաջալերեն Արեւմտահայաստան «ուխտագնացութեան» երթալու. մենք կը մերժենք այս բոլորը, թէկուզ ուխտագնացութիւն անուան տակ տեղի ունեցող:

Այսպէ՞ս կ'ուզեք, որ շարունակենք մեր սրբազան պայքարը... Այսպէ՞ս պիտի վերատիրանանք մեր իրաւունքներուն: Ա՞յս է 1.5 միլիոն նահատակներուն կտակը, ա՞յս է Տեր Չօրի աւագներուն տակ անթաղ մնացած մեր նահատակներուն պատգամը, ա՞յս է Լիզպոնի տղոց պարտքը...

Հաւանաբար անցեալի օրերը պէտք է վերադառնան, թրքական ձայնապնակները պէտք է հաւաքել ու այրել նոյնինքն Արաքս փողոցին մէջտեղը, Թուրքիա գացողները պէտք է ազգային դաւաճաններ նկատել:

Այս ուղիով քալողները ոչ թէ անտարբերներ, այլ դաւաճաններ են, անոնք կը պղծեն մեր պատմութիւնը, աշխարհի աչքին փոշի կը ցանեն եւ այդ բոլորը կ'ընեն մեր քսակէն, Արաքս փողոցի երբեմնի փառքին հաշուոյն:

Ընդվզած ու տխուր հեռացանք Արաքսէն ու «Էլ չխօսեց Արաքսը»:

**ՀՐԱԿ ԹՈՐՈՍ ԱՒԵՏԱՆԵԱՆ
ԼԵՍ-ի «Հայաստան» մասնաճիւղ**

ԱՆԵԾՔԸ ՄԵՐ ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Սարսառացի աճիւնները անոնց... անոնց՝ մէկուկէս միլիոն նահատակներուն. անոնք անգամ մը եւս զգացին թուրքին սուրին ահաւորութիւնը իրենց պարանոցներուն վրայ, անգամ մը եւս Տեր Զօրի աւազներուն կրակը այրեց անոնց ներքանները, հարազատներուն սպանդին պատճառով հեղեղած արցունքները անգամ մը եւս խեղդեցին անոնց կոկորդները, պահ մը վերապրեցան անոնք՝ կրկին նահատակուելու համար... Այս անգամ սպաննողը թուրքը չէր, այլ՝ «հայ»ը...

Շաբաթներ առաջ ՀՀԴ ԼԵՄ-ի անդամներ «Վա՛նայ ձայն»-էն սփռուած «Արծիւ» յայտագիրով ներկայացուցին զրոյցներ՝ Արաքս փողոցին մէջ խա՛նութեան ունեցողներու եւ անցորդներու հետ: Շուրջ քառորդ ժամուան զրոյցներ, սակայն յաւերժական տանջանք պատճառով, մտածելու եւ ցաւելու մղող խօսքեր, որոնք մուրճի հարուածներու պէս կ'իջնեն իւրաքանչիւր հայու մտքին եւ սրտին վրայ: Պատկերը բաւական վիրաւորական եւ զգայացունց էր, ԼԵՄ-ականներուն ուղղած հարցումներուն տրուած

Իր պապենական տուններէն տեղահան եղած, չարչարանքներուն ամենէն ահաւորը ապրած, մարդկային դժբախտութիւններուն եւ անարդարութիւններուն դառնագոյնը կրած, Տեր Զօրի անապատներուն մէջ քալած ու քալած, ինկած ու կրկին ոտքի ելած, մեռած ու վերապրած հայորդիներէն ոչ մէկը, Ո՛Չ մէկը վստահաբար երեւակայեց, որ պիտի գար այս օրը, երբ հայութեան շարունակականութիւնը երաշխաւորելու համար ոչինչ ինչայած իրենց վճռակամութենէն ծնած սերունդները պիտի կարենային թերթութեամբ մօտենալ այս բոլորին, թրքականին նկատմամբ ոչ մէկ զգայնութիւն ունենային, թուրքերուն հետ կարենային բնական կապեր հաստատել, այլ խօսքով՝ մոռնալ իրենց կտակը...



«Թուրքերը մեզ շատ կը յարգեն, «եղբայր եք» կ'ըսեն, շատ հանգիստ կը զգամ, երբ հոն երթամ...»:

Հայու բերնէն արտասանուած խօսքեր, որոնք աշխարհին ամբողջ նախատիկնքը կը թափեն հայութեան վրայ. հայ մը հանգիստ կը զգայ իր թշնամիին գիրկը, հայը եղբայրական զգացումներ կը տածէ իր հայրերն ու մայրերը սպաննածներուն նկատմամբ. հա՞, երբեք, հայ չէ ան...

պատասխանները՝ պապանձեցուցիչ: Ուրեմն, ըստ այդ «հայերուն», թրքական արտադրութիւնները պահանջուած են, բնական է անոնց ողողումը հայութեան բարբախուն երակը հանդիսացող Արաքս փողոցին մէջ, թրքական ֆիլմաշարերուն հետեւիլը ընտանեկան ջերմ մթնոլորտ կը ստեղծէ, այնքան ջերմ, որքան Արեւմտահայաստանէն տեղահանուած մեր ընտանիքներուն թափած արեան տաքութիւնը, Թուրքիա երթալը՝ վաճառականութեան թէ զբօսաշրջութեան համար, պարզ երեւոյթ է, թերեւս հայրենիք երթալէն աւելի ալ նախընտրելի է:



Արտայայտութիւններ, որոնք ուժգին հարուածի նման իշան եւ ցնցեցին ամբողջ եւրօպայ... Պահ մը վերադարձայ Տեր Չօր, ուր անծայրածիր անապատներուն ի տես գարմանք եւ նոյն ատեն հիացմունք ապրեցայ, թէ մարդ արարած, շնչաւոր էակ մը, ինչպէ՞ս կրնայ այդքան տարածութիւն քալել՝ անօթի ու մերկ, ահաւոր չարչարանքի ու ցաւի բերան տակ կքած, քալել ու հասնիլ, տակաւին շնչաւոր, որպէսզի շունչ փչէ նորանոր սերունդներուն... Արդէն սկսած ենք արդեօք մոռնալ, մոռնալ ու թեթեւի առնել ամէն ինչ, արդեօք մոռցա՞նք ցաւը, մոռցա՞նք պատգամը, մոռցա՞նք, որ թուրքին գործած սպանդին գինը շա՛տ սուղ վճարեց հայութիւնը եւ կը շարունակէ վճարել, մոռցա՞նք մեր նախահայրերուն տառապանքը եւ կրնա՞նք «եղբայրաբար» սեղմել թուրքին ձեռքը, առեւտուր ընել անոր հետ, անոր պանդոկներուն մէջ ժամանցի երթալ... Ո՛ր հասած ենք, հաւանաբար նման մտայնութեամբ մարդիկ պետք է կրկին Տեր Չօր երթան եւ քալեն, գեթ որոշ տարածք մը, որպէսզի իրենք զգան անարդարութիւնն ու ցաւը, որովհետեւ կտակը՝ հոնկէ մեզի հասնող պատգամը նահատակներուն, արդէն անլսելի է իրենց համար...

Մեր «հայրենակից»ները մտահոգ են, որ եթէ Թուրքիա երթալով ապրանք չբերեն ու չծախեն, անօթի կրնան մնալ եւ այն ատեն «դատը ի՞նչ պիտի ընէ իրենց»: Իսկապէս ամօթի զգացումը այլեւս չքացած է. անօթի՞ մնալ, արդեօք իրենք այդ տեսակի առեւտուրով չզբաղելով անելի՞ անօթի պիտի ըլլան, քան մեր պապերը, որոնցմէ շատ-շատեր անօթութեան ու ծարաւի պատճառով գրկեցին անապատի աւազները... Նախընտրելի է անօթի մնալ, քան մեր նախահայրերը մահուան յանձնած թուրքին հացը ուտել:

Բարեբախտաբար, տակաւին կան այս հոսանքին դէմ թիավարողներ, որոնք կարգին՝ ԼԵՄ-ականներ, որոնք ոչ միայն կը մերժեն թրքական արտադրութիւնները քաջալերել եւ ունէ պայմանի տակ Թուրքիա երթալ, այլ կը դատապարտեն նման արարքներ: «Վանայ ձայն»ի յայտագիրին մէջ այս ԼԵՄ-ականները հետեւեալը կ'ըսեն՝ նախ թրքականը քաջալերողներուն խօսքերը մէջբերելով, ապա իրենց կարծիքը փոխանցելով.

«Չէ, տղաք, իրապէս, թրքական արտադրութիւնները լաւ որակի են.

«Այո՛, ո՛վ հայորդի, լաւ որակի է թրքական եաթաղանը, որ մորթեց քու մեծ մայրդ. քու նախահայ-



րերուդ արիւնը, պատիւը եւ բարոյականութիւնը շատ անելի սուղ էին, քան քուկդ: Յաճախորդի համար անշուշտ կարելոր է աժան եւ լաւորակ արտադրութիւն գնել, սակայն, ո՛վ հայորդի, մի՛ մոռնար, որ այդ լաւորակ արտադրութիւնը քաջալերելով թշնամիին քսակը կը հարստացնես, այդ քսակը, որ պիտի գործածուի քու ազգիդ դէմ իսկ:

«Ճամբորդը անշուշտ կը փափաքի իր արծակուրդը անցընել գեղեցիկ, հանդարտ ու հաճելի շրջանի մը մէջ, թերեւս այդ է պատճառը, որ շատեր կ'այցելեն թրքական ծովափները: Թուրքիա անելի աժան է, ի՞նչ կրնանք ընել, ես միայն վաճառականութեան կ'երթամ Թուրքիա. ես մեր պատմական հողերը տեսնելու կ'երթամ:

«Ժողովուրդին պատճառաբանութիւնները չվերջացան. փաստեցինք, որ կարգ մը հայորդիներու համար որակն ու արժէքը լոկ առարկայական են, անոնց մօտ սկզբունքն ու պատիւը այլեւս արժէք չունին»:

Փա՛նք ձեզի, տղա՛ք, ձեր գոյութիւնը կը յուշէ, որ երթը պիտի շարունակուի եւ կտակը պահպանուի, շարունակեցէք ամբօրէն կառչիլ ձեր ազգային ջիղերուն, թէկուզ քիչ մը ծայրայեղական թուիք ոմանց:

Պետք է սթափիլ այսօր, վաղը կրնայ ուշ ըլլալ, մեզ օրինած նահատակներուն անէծքը կրնայ ոչնչացնող ըլլալ: Արդէն նահատակուածները մեր կեցուածքով կրկին սպաննելուն պատիժը տակաւին չէ սահմանուած եւ մահը կրնայ քիչ ըլլալ ատոր համար...

ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՍԹԱՓԻՐ, Ո՛Վ ՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Մարդկային ընկերութեան մէջ երիտասարդութիւնը կը հանդիսանայ ամենէն գործօն տարրը: Բոլոր կազմակերպութիւններուն, միութիւններուն, կուսակցութիւններուն մէջ երիտասարդը ունի անհրաժեշտ դեր մը, որ իր անդամակցած տուեալ կառույցը ծաղկեցնելու եւ զարգացնելու մէջ կը կայանայ: Երիտասարդին արժեքը կ'երեւի անոր կատարած գործերուն, ունեցած հետաքրքրութիւններուն եւ հետապնդումներուն ընդմէջէն: Առանց երիտասարդութեան որեւէ կազմակերպութիւն չի կրնալ իրագործել իր գաղափարներն ու ծրագիրներ: Երիտասարդը կեանք, ուժ եւ կորով կը ներշնչէ բոլոր կազմակերպութիւններուն: Պատմութեան մէջ, նաեւ այսօր, որեւէ բարեկարգում կամ յեղափոխութիւն ծնունդ չէ առած առանց երիտասարդութեան: Երիտասարդը կը տարբերի իր հետապնդումի ոգիով եւ կարծիքով զիմադրութեամբ: Երիտասարդը կ'ըլլայ հմուտ, ձեռներեց, կրքոտ, չի հանդուրժեր սխալ արարքներ, կը մատնանշէ թերին ու կը ձգտի սրբագրելու զայն, այդ պատճառով ալ յաճախ կ'ունենայ վէճեր, բախումներ իր շրջանակին հետ: Երիտասարդը կը դրսեւորէ ընկերային մթնոլորտ մը, որուն նմանը չենք գտներ այլ տարիքի անդամներուն մօտ: Ամենէն կարեւորը այն է, որ երիտասարդութիւնը ազգի մը կամ ժողովուրդի մը հայելին է: Այս պատճառով ալ երիտասարդը պետք է ըլլայ բարեհամբաւ, պատուաւոր եւ ազնիւ անձ մը: Ազգ մը կը դատուի երիտասարդութեան վարուելակերպէն, իրագործումներէն: Եթէ ազգի մը երիտասարդութիւնը աշխատասեր է եւ առաքինի, օտարին կողմէ այդ ազգը կ'արժանանայ ակնածանքի եւ գնահատանքի: Երիտասարդութենէն ի յայտ կու գայ ազգին ապագան, եւ այդ պատճառով անկկա կը հանդիսանայ ամենէն արժեքաւոր տարրը հաւաքականութեան մէջ, որովհետեւ ապագային ան պիտի վարէ ազգային գործերը, պիտի ստանձնէ ղեկավարումը, շրջանցէ դժուարութիւնները եւ օրինակ հանդիսանայ իրմէ փոքրերուն, որոնք պիտի ըլլան իր յաջորդները, նոր երիտասարդները: Այս բոլորը երիտասարդին վրայ պարտք կը դնեն, որ ան յարգելի նկարագիր ունենայ:

Վերոնշեալ տողերը կը ներկայացնեն իտեալ երիտասարդի մը նկարագիրն ու վարուելակերպը, սակայն արդի դարուն երիտասարդը գիտակից չէ իր արժեքներուն: Այսօր երիտասարդը կը դիմագրաւէ շատ մը դժուարութիւններ, որոնցմէ կարեւորագոյնը անտարբերութիւնն է՝ ամէն տեսակի հարցերու նկատմամբ: Ան ունի կարգ մը զբաղումներ, որոնցմէ զատ որեւէ հարց երիտասարդը չի հետաքրքրէ:

Ան կ'ապրի ինքնաբաւ կեանք մը եւ հեռու է ընկերային միջավայրէ:

Այս երեւոյթին պատճառները բազմաթիւ են. առաջինը այն է, որ 21-րդ դարուն երիտասարդին հիմնական բարեկամը եղած է համակարգիչը: Երիտասարդը կը նախընտրէ երկար ժամեր անցընել անոր դիմաց, քան՝ ընկերային ու հաւաքական աշխատանքները կատարէ: Համակարգիչի գործածութիւնը անհրաժեշտ է գիտելիք ձեռք ձգելու, աշխարհին հետ կապ հաստատելու, միտքեր ու գաղափարներ տեղ հասցնելու, ընդվզումներ ու մտորումներ արտայայտելու համար: Սակայն համակարգիչի գործածութիւնը ունի նաեւ շարք մը անպատեհութիւններ, անոր գործածութեան չափազանցութիւնը վնասական կ'ըլլայ երիտասարդին համար: Երկրորդ պատճառը այն է, որ երիտասարդը չ'ուզէր պատասխանատուութիւն ստանձնել, ան պատրաստ չէ նուազագոյն զոհողութեան իսկ, ոչ ալ մղում ունի ընկերային աշխատանքի մը համար քանի մը ժամ տրամադրելու: Կայ նաեւ այլ պատճառ մը, որ երիտասարդը չ'ուզէր ծանրաբեռնուած զգալ եւ կը գոհանայ նուազագոյն աշխատանքով:

Այս բոլորը պատճառ կը դառնան, որ երիտասարդը դուրս մնայ ընկերային կեանքէն: Այսպիսի երիտասարդ մը առանձնութիւն եւ ընկերներու բացակայութիւն պիտի զգայ, դժուարութիւններ պիտի ունենայ ընկերութեան մէջ շաղուելու, իր շուրջիններուն հետ կապի մէջ մտնելու, պիտի ձանձրանայ եւ ունենայ սահմանափակ կեանք: Նման պայմաններու լոյսին տակ երիտասարդին անհատականութիւնը պիտի տկարանայ այն աստիճան, որ ան պիտի գժտուի իր ընկերութեան հետ եւ քալէ այնպիսի ճամբէ մը, որ կրնայ ժխտական ազդեցութիւն ունենալ իր ներկային ու ապագային վրայ: Ընկերային կեանքէ հեռու մնալով՝ երիտասարդը պիտի ունենայ սահմանափակ կեանք, պիտի յաճախէ համալսարան կամ դպրոց, առնէ իրեն հրամցուած գիտելիքները, սակայն ատկէ բացի ոչ մէկ իրադարձութիւն կամ զարգացում պիտի հետաքրքրէ զինք եւ ոչինչի մասին տեղեակ պիտի ըլլայ: Այն երիտասարդը, որ ոչ մէկ մասնակցութիւն ունի բարեսիրական, մարզական, մշակութային եւ ազգային միութիւններու աշխատանքներուն, ժամանակի թաւալումով պիտի զգայ, որ ինք անկար է, բարձրագոյն նպատակներ չունի, կը գոհանայ նուազագոյնով. այս ընթացքով ան մնայուն կերպով քիչով գոհացող անհատ պիտի ըլլայ՝ իր աշխատանքին եւ ընտանեկան կեանքին մէջ եւս: Անոր մօտ ինքնաբերաբար պիտի նահանջեն պայքարելու ոգին, փոքր դժուար



րութիւններու դիմաց ան պիտի յանձնուի եւ ընկղմի անոնց մէջ՝ առանց պայքարելու:

Վերոյիշեալ բոլոր տողերը կը ներկայացնեն ընդհանուր երիտասարդութեան արժէքը եւ դիմագրաւած դժուարութիւնները: Մեր կեանքին մէջ եւս երիտասարդը միշտ ալ եղած է մեր ազգին սիրտ ու շունչ տուողը, ժողովուրդին պահապանը: Այդ պատճառով ալ ան միշտ արժանացած է ժողովուրդին յարգանքին եւ գնահատանքին: Հայոց պատմութեան հերոսական յաղթանակները, Հայաստանի անկախութիւնը եւ Արցախի ազատագրութիւնը չէին կրնար իրականանալ առանց հայ երիտասարդներուն: Լիբանանի քաղաքացիական պատերազմին հայ երիտասարդը մոռնալով կեանքի վայելքները, անտեսելով մահը, զենքը ձեռքին պաշտպանեց հայ ժողովուրդն ու հայկական շրջանները: Հայ երիտասարդը չունեցաւ խաղաղ ու վայելքներով լի կեանքի մը, ինչպէս ունեցան այլ երիտասարդներ, անոնք իրենց կեանքի ամենէն գեղեցիկ տարիները անցուցին թաղերու եւ հայկական կառոյցներու մէջ՝ պաշտպանելու համար հայ անհատին պատիւը:

Այլ գետնի վրայ, Հայ դատի աշխատանքները չեն կրնան յառաջդիմել ու շարունակուիլ, եթէ երիտասարդութեան նոր շունչը չշախաղուի այս աշխատանքներուն: Հայ երիտասարդը միշտ պատրաստ եղած է ծառայելու իր ազգին, ամէն տեսակ զոհողութիւն ընելու, նոյնիսկ մինչեւ իր վերջին կաթիլ արիւնը դնելու ի սպաս հայրենիքին ու Հայ դատին: Այս է հայ երիտասարդը, միշտ պատրաստ եղած է եւ ազնիւ, կը յարգէ բոլորը, կը պաշտպանէ իրաւունքը, կը գործէ իր ազգին ու հայրենիքին համար՝ պայքարելով ազգային գերագոյն նպատակներու իրականացման ի խնդիր:

Սակայն այսօր հայ երիտասարդը, ինչպէս բոլոր երիտասարդները, կը դիմագրաւէ մեծ ու բազմաբնոյթ դժուարութիւններ: Հայ երիտասարդութիւնը, որուն մեծամասնութիւնը ներկայիս կ'ապրի հայրենիքէն դուրս, ունի մեծ պարտականութիւններ հայրենիքին, ժողովուրդին, մշակոյթին եւ Հայ դատին նկատմամբ: Նաեւ ան պարտականութիւն ունի ինքնիրեն, ինչպէս նաեւ միւս երիտասարդներուն նկատմամբ: Սփիւռքի մէջ հայ երիտասարդին կը սպառնան բազմաթիւ վտանգներ, որոնք կը տանին դէպի օտարամոլութիւն եւ ձուլում: Հայ երիտասարդին ձուլումով հայ ժողովուրդին մղած բոլոր պայքարները՝ տարբեր մակարդակներու վրայ, պիտի սկսին կաղալ եւ աւելի ուշ դադրիլ: Տրամաբանական է, որ հայ երիտասարդը պայքարի այս ահաւոր վտանգին դէմ, սակայն անտրամաբանական է, որ հայ երիտասարդը նման վտանգի դիմաց, որ կրնայ իր ազգի ապագան ու ինքնութիւնը չեզոքացնել, ան-

տարբեր մնայ: Դժբախտաբար սակայն երկրորդ խումբին պատկանողներուն թիւը սկսած է աճիլ, սփիւռքի մէջ անտարբերութիւնը հասած է իր գագաթնակէտին, որ կ'առաջնորդէ հայոց լեզուի, հայկական մշակոյթի, հայրենիքի եւ Հայ դատի մոռացման: Հայ երիտասարդը փոխանակ պայքարելու ամէն տեսակի վտանգներուն դէմ, կը մխրճուի անոնց մէջ: Հայ երիտասարդին նորօրեայ այս նկարագիրը կը հակադրուի նկարագիրին հետ անցեալի երիտասարդութեան, որ մինչեւ վերջին շունչը պայքարեցաւ ամէն տեսակի վտանգներու դէմ:

Հայ երիտասարդին անտարբերութիւնը կը քաշալերուի օտարին կողմէ. Լիբանանի մէջ տեղական դպրոցները իրենց դռները լայնօրէն կը բանան հայ աշակերտներուն դիմաց՝ նպաստելով անոնց ձուլման: Օտարը ամէն ճիգ կը թափէ հայ աշակերտը ներգրաւելու իր շրջանակին մէջ եւ այս ձեւով տկար անհատականութեամբ օժտուած հայ երիտասարդները կը հեռանան հայկական շրջանակէն, կը միանան օտար շրջանակներուն եւ անուղղակիօրէն կ'իրականացնեն թշնամիին նպատակները:

Սիրելի՛ հայ երիտասարդներ, դուք ամուր անհատականութեան տէր անձ եք, դուք պիտի պայքարիք ամէն տեսակի վտանգներուն դէմ: Պիտի ըլլաք հայ ազգին վահանը՝ ընդդէմ թշնամիներուն, դուք պիտի ըլլաք հայութեան սիրտն ու շունչը: Ձեր հայրենիքին հանդէպ սերը եւ Հայ դատին նկատմամբ ձեր պահանջատիրութեան ոգին ու վճռականութիւնը չեն կրնան ի յայտ գալ, եթէ գետնի վրայ գործնական պայքարի մասնակից չդառնաք:

Հայ երիտասարդներ, եկեք միանանք, մեզի միացնենք բոլոր անտարբեր եւ մեր շրջանակէն հեռու մնացած հայ երիտասարդները: Միասնաբար պայքարինք մեր հայրենիքին համար, չմխրճուինք օտարին սարքած ծուղակներուն մէջ, ըլլանք արթուն եւ պատրաստ՝ դիմագրաւելու բոլոր դժուարութիւնները: Միացէ՛ք մեզի եւ միասնաբար շարունակենք հայոց պայքարը՝ յիշելով Գարեգին Նժդեհի կողմէ երիտասարդութեան ուղղած խօսքը. «Ես ճշմարտութիւններ գիտեմ, որոնցից մէկն ասում է՝ ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովուրդի ապագան, նայի՛ր նրա երիտասարդութեան...: Քո վաղուան յաղթանակի եւ պարտութեան միջեւ հայ ժողովուրդի լինել-չլինելու հարցը կայ, հայ երիտասարդութիւն: Ահա՛ թէ ինչու քեզ պետք է յաղթել, քեզ պետք է յաղթանակի լուսապսակ ստեղծել քո ժողովուրդի անլան ու ճակատագրի շուրջը: Իսկ դրա համար քեզ պետք է լինել աւելի քան հայ եւ մարդ»:

ՍԵՒԱԿ ՏԵՄԻՐՃԵԱՆ
ԼԵՄ-ի «Շուշի» կորիզ

ԵՐԱՊՁ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ

Շատ անգամ կը լսենք արտայայտություններ, որոնք վստահաբար շատերուն համար վշտացուցիչ կը թուին, բայց եւ այնպէս անուղղակի կամ ուղղակի պատճառներէ կը բխին...


94 տարիներ անցան Արեւմտահայաստանի հողերէն բաժանումին: Հայը 94 տարիներ սպասեց, հետապնդեց իր իրաւունքները, երգերով գովերգեց իր հողերուն փառքը, դասախօսեց, պատմեց, ցոյցեր կազմակերպեց, պոռագ-կանչեց եւ այլն... Բայց չհասաւ իր հողերուն եւ հողը սկսաւ երազ դառնալ: Այդ իսկ պատճառով շատ մը սփիւռքահայեր պապենական մեր հողերուն մասին կ'արտայայտուին՝ ըսելով. «Շատ մի՛ երագեր: Դիմացդ հսկայ պետութիւն է: Մոռցի՛ր»:

Իրապէս, երբ պահ մը ուզենք մեր հողերուն մասին մտածել կամ պատկերացնել զանոնք, անոնք երագի մը պէս կը սաւառնին մեր մտքերուն մէջ: Իսկ շատերու մտքերուն մէջ մեր պապենական հողերը արդէն իսկ դարձած են անելորդ երագ:

Արդեօք ինչո՞ւ...

Երբ արդի Հայաստանը փորձենք պատկերացնել, նոյնիսկ եթէ չենք տեսած կամ հեռու ենք՝ այդքան ալ երագ չի թուիր, որքան Պատմական Հայաստանը: Ասոր պատճառը այն է, որ արդի Հայաստանի հետ Սփիւռքը միշտ կապի մէջ է՝ երգիչներով, դերասաններով, դասախօսներով, այցելութիւններով եւ այլն: Այդ հո-

ղին վրայ կ'ապրին հայեր, որոնցմով միշտ հետաքրքրուած է սփիւռքահայութիւնը եւ նորութիւններ լսած անոնց մասին: Սակայն Պատմական Հայաստանի մէջ թեւեւ կան քրտացած կամ թրքացած հայեր, բայց բացայայտ կերպով ո՛չ հայկական բնակչութիւն կայ եւ ո՛չ ալ հայկական կազմակերպութիւններ,



որպէսզի մասնաւոր կերպով կենդանի շունչ տան սփիւռքահայութեան: Գեթ ըլլար փոքրիկ գաղութ մը, որ Սփիւռքը անոր զարգացման եւ

ուրճացման մասին մտածեր: Արդեօք լաւ պիտի չըլլա՞ր հայկական նոր գաղութ մը կամ կազմակերպութիւններ ստեղծել...

Վերջին շրջանին, հայաստանեան կազմակերպութիւն մը «Ակունք» անունով սկսած է լրջօրէն աշխատանք տանիլ Արեւմտահայաստանի մէջ: Անոնք թրքացած կամ քրտացած հայերը կը փորձեն իրենց արմատներուն վերադարձնել եւ կը տանին քարոզչական հսկայ աշխատանք համացանցի միջոցով եւ զանազան լեզուներով (ներառեալ թրքերէն): Յոյսով ենք, որ անոնց տարած աշխատանքը մեծ յաջողութեամբ պսակուի՝ նպաստելով մեր ազգին ու դատին: Սոյն կայքէջներն են www.akunq.net կամ www.facebook.com/akunq:

Իսկ այն անձերը, որոնք յուսալքուած իրենց անձերը տուած են օտարամոլութեան կամ թրքականը քաջալերելու՝ լաւ պիտի ըլլայ, որ պահ մը նային

տարբեր ազգերու պատմութեան: Շատ մը ազգեր հարիւրաւոր տարիներ սպասած են իրենց հողերուն կամ իրաւունքներուն տիրանալու: օրինակ Լիբանանը կամ Սուրիան, որոնք անելի քան 400 տարիներ մնացին Օսմանեան կայսրութեան իշխանութեան տակ: Երբեմն անկախութիւնը ոսկեայ ամանի մը մէջ դրուած կը տրուի, իսկ երբեմն՝ արիւնլուայ: Սակայն այս բոլորը համբերութիւն, հաւատք եւ յոյս կը պահանջեն: Եթէ իբրեւ երագ խօսուի մեր պատմական հողերուն մասին, այդ ժամանակ իրապէս անկարելի երագ կը դառնայ: Թող թուրքը չտեսնէ մեր յուսահատութիւնը, ապա թէ ոչ իր նպատակին կը հասնի: Արդէն անոնց համար կը դառնանք ծաղրանքի առարկայ, երբ «հայեր» անյագօրէն կը դիտեն թրքական յայտագիրները, կը լսեն թրքական «սիրուած» երգերը... Իսկ միւս կողմէ անկէ կ'ընդվզինք: Այս պատկերին զուգահեռ ուրիշ պատկեր մը կ'ուրուագծուի մտքիս մէջ, երբ հայաստանցի համակիրներ իրենց հաւաքականին համար՝ խաղի ժամանակ բարձրացուցին պաստառ մը, ուր գրուած էր. «Հերիք է մեզ խայտառակէք»: Թոյլ թող տան, որ ես ալ նոյն նախադասութեամբ պաստառ մը բարձրացնեմ մեր անյագ «հայերուն»: Կը գիտակցի՞ն... Կը կասկածիմ:

«Հերիք է մեզ խայտառակէք»:

ԱՐԱՍ ԲԱԶԷ
ԼԵՄ-ի «Բաֆֆի»
մասնաճիւղ



ՈՐ ՏԵՍՆԵՆՔ ԱՅՂ ԼՈՒՄԱՇՈՂ ԱՌԱՒՕՏԸ...

1915-ի Մեծ եղեռնեն ետք հայ ժողովուրդը սփռուեցաւ աշխարհի չորս ծագերուն... Հակառակ իր կրած մեծ տառապանքին, մերժեց մեռնիլ... Որոշեց գինք կաշկանդող բոլոր շղթաները փշրել եւ վերածնունդ մը ապրիլ: Իսկ լիբանանահայութիւնը շնորհիւ իր մտաւորական եւ կազմակերպական խաւին, դարձաւ շրջանի հայ աշխարհին կորիզը: Լիբանանը հանդիսացաւ սփիւռքի բարախող սիրտը, ուր պիտի պահպանուէր հայուն տիպարը, պիտի կառուցուէին հայկական եկեղեցիներ, դպրոցներ, ակումբներ, մշակութային եւ մարմամարզական զանազան կեդրոններ... Տեղին է նշել, որ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը հսկայ դեր խաղաց այս գաղութի յառաջացման եւ բարգաւաճման աշխատանքին մէջ:

Լիբանանահայութիւնը Լիբանանի սահմաններուն մէջ կառուցեց փոքրիկ Հայաստան մը, որ հայ աշխարհին նուիրեց ազգային ղեկավարներ, ազատամարտիկներ եւ Հայ դատի գործիչներ... Լիբանանահայութիւնը, այլ գաղութներու հետ բաղդատելով, շատ անելի իրազեկ է հայկական կեանքի վերջին զարգացումներէն, եւ գաղութի զաւակները աճած են որպէս ինքնավստահ հայեր, վճռական հայեր: Գաղութը նաեւ որդեգրած է յատուկ ուղեգիծ մը՝ դաստիարակելով ներկայ աշակերտն ու երիտասարդը՝ ապագայ ղեկավարն ու առաջնորդը, կղերականն ու ազգային գործիչը, հայ մշակոյթի տէրն ու Հայ դատի պաշտպանը... Խիստ գնահատելի է լիբանանահայ գաղութին այս առաքելութիւնը, որպէս սփիւռքի հայ կեանքի գործօն ու ազդեցիկ աշխատանք:

Այս գաղութը օրինակ դարձաւ այլ գաղութներու, որպէսզի իրենք նաեւ կազմակերպուին եւ տէր կանգնին հայութեան անվտանգութեան:

Բայց եւ այնպէս, տեսնելով լիբանանահայ գաղութին վերջին ձեռնարկները, կարելի է մտածել, թէ կարծեք գաղութը սկսած է վարակուիլ ախտով մը... «Դեպի Թուրքիա» ախտով, անշուշտ «ուխտագնացութեան» անուան տակ: Յաճախ սկսած են ՊՏՈՅՏԵՐ դեպի Կիլիկիա-Կապադովկիա եւ Պատմական Հայաստան:

Այս «Դեպի Թուրքիա» ախտը սկսան կարգ մը կառոյցներ, սակայն հաստատ կ'ըսեմ, որ վաղը պիտի փոխանցուին այլ միութիւններու եւ վարժարան-

ներու՝ խաթարելով գաղութի ազգային նպատակները ու Հայ դատի աշխատանքները:

Հետեւաբար մտահոգուելու ենք նախ ապագայի հեռանկարով: Ընդհանրացնելով դիտանկիւնս, այս «Դեպի բռնագրաւեալ Հայաստան» անուան տակ ախտը հեռու եւ մօտ ապագային կրնայ պատճառել թշնամիին հետ հոգեմտաւոր արգելակներու եւ հեռաւորութեան ուժգնութեան նուազեցման: Այսինքն հայկական պահպանողական մտայնութիւնը ու վեհ դաստիարակութիւնը, զորս այս գաղութը մեր մէջ տարիներու ընթացքին ցանեց, կրնայ փոխուիլ հանդուրժողականութեան՝ թշնամիին ու անոր մշակոյթին հանդէպ:

Կը հասկնամ, որ նման ուղեւորութիւններու ընթացքին կը յայտարարուի, որ որոշուած է պատմական հողերը՝ բռնագրաւեալ Հայաստան այցելել եւ մեր ուխտը վերանորոգել: Բայց եթէ այս նախադասութեան այլ բանաձեւում տանք կրնանք ըսել, որ ներկայ քաղաքական քարտէսին նայելով, որոշուած է այցելել հայոց թշնամի երկիրը... Զաջալերել թշնամի... Իրողութիւն մը, որուն բացատրութեան պիտի անդրադառնամ յօդուածիս մէջ:

Խնդրեմ, ըսածս սխալ չհասկնաք: Ըսածս ո՛չ տգիտութիւն է, ո՛չ ալ չափազանցութիւն եւ ոչ ալ ծայրայեղութիւն: Իսկ հարցս ռեւէ մարմինի կամ յանձնախումբի հետ չէ, այլ այս պարզուած պատկերին հետ:

Հայ-թրքական արձանագրութիւններուն պատճառով բարձրացած փոթորիկի շրջանին լիբանանահայ գաղութը աշխուժ կերպով մասնակցեցաւ բողոքի հաւաքներուն՝ մերժելով առանց նախապայմաններու սահմաններու բացումը, քաջ գիտնալով, որ Թուրքիա ռեւէ վայրկեան կրնայ վերստին փակել սահմանը՝ քաղաքական այլ պատճառով մը, սակայն միւս կողմէ Հայաստանի իշխանութիւններուն կողմէ ճանչցուելով որպէս պետութիւն իր հողի ամբողջականութեամբ ու սահմաններու ճշգրտութեամբ:

Իսկ այսօր այդ նոյն գաղութը յօժար է եւ կը քաջալերէ վճարել կոկիկ գումարներ ու խաղաղօրէն «ներխուժել» թրքական սահմանը: Այս գաղութը յօժար է քաջալերել Թուրքիոյ զբօսաշրջութիւնը, քաջալերել Թուրքիոյ տնտեսութիւնը... Եւ հետեւաբար քաջալերել հակահայ քարոզչութիւնը:

Արդեօք այս հզոր ու կանգուն գաղութը տեղեակ չէ՞, որ Թուրքիոյ կառավարութիւնը իր զբօսաշրջութենէն եւ տնտեսութենէն վաստկած հսկայական գումարին որոշ նկատառելի մասը կը գործածէ մեր ժողովուրդին դէմ իր աշխատանքները մատակարարելու: Կը գործածէ Յեղասպանութիւնը ուրանալու եւ թրքական լրպիին օժանդակելու, մեր մշակութային հարստութիւնները բնաջնջելու, Ղարաբաղեան տաճնապը հրահրելու եւ մեր Սուրբ Արարատը սրբապղծելու:

Տամ օրինակ մը, երբ ազերի բանակը 2003-ին թրքական քաջալերանքով եւ աջակցութեամբ, Նախիջեւանի Յին Ջուղայի 400-ամեայ խաչքարերը ջարդուփշուր ըրաւ, ոչնչացնելով աւելի քան 5000 զուտ հայկական հոգեւոր կոթողներ, Լիբանանի մէջ հայկական գանազան կեդրոններու մէջ տեղի ունեցաւ ստորագրահաւաք, միջազգային մակարդակներու վրայ (UNESCO) դատապարտելու համար այս արարքը՝ որպէս մշակութասպանութիւն եւ Օսմանեան Թուրքիոյ սպիտակ ջարդի շարունակութիւն:



Այդ մշակութային սպանկներու ֆինանսաւորումը ուրկէ՞ յատկացուեցաւ: Յիշեցնեմ, որ Թուրքիոյ պետական պիւտճէին մեծամասնութիւնը կ'ապահովուի իր զբօսաշրջութենէն եւ տնտեսութենէն:

Այս բոլորը չէ՞նք գիտեր... Գիտենք եւ շա՛տ լաւ գիտենք: Յետեւաբար ինչպէ՞ս կրնանք քաջալերողը ըլլալ հակահայ քարոզչութեան... ու առանց ամէնալու...

Առանց ամէնալու մեր նախահայրերէն, մեր պատմութենէն եւ մեր նահատակներէն, կը քաջալերուի երիտասարդներու մասնակցութիւնը այս «ուխտագնացութեան»: Ուխտագնացութիւնը չակերտներու մէջ կը դնեմ քանի այլ խօսքով զբօսաշրջութիւն է... Դժբախտաբար զբօսաշրջութիւն դէպի «Թուրքիա», թէկուզ պատմական առումով հայկական հող, բայց ներկայ քաղաքական սահմանումով՝ Թուրքիոյ Յանրապետութիւն:

Արդեօք որպէս հայկական սփիւռքի ամենէն կենսունակ գաղութը, չէ՞նք մտածեր, որ բաւական վտանգաւոր շարժում մը կը քաջալերենք... Շարժում մը՝ անտարբեր ու անզգամ դառնալու, շարժում մը՝ յառաջ բերելու սերունդ մը, որ հարց չունի

Թուրքիա այցելելու, սերունդ մը, որ առիթ ունի թշնամիին հետ շփում ունենալու եւ թերեւս ալ «գործակցելու»:

Արդեօք լիբանանահայ գաղութին առաքելութիւնը փոփոխութեա՞ն ենթարկուած է...

Այս բոլորին կողքին կայ այն, որ մեր այցելութիւնը որքա՞ն կը նպաստէ Թուրքիոյ՝ աշխարհին աչքին փոշի ցանելու... Ան ամենայն պարզութեամբ կը յայտարարէ, որ իրականութեան մէջ հայերը հարց չունին հետս, անոնք պատմական դէպքեր կը կեղծեն եւ որպէս իրողութիւն կը ներկայացնեն նի-

թական եւ կամ հողային շահեր ապահովելու համար: Թուրքը պիտի ըսէ, որ յաճախ երկիրս այցելողները, տնտեսութիւնս ու զբօսաշրջութիւնս քաջալերողները հայեր են, անոնց մէջ ըլլալով նաեւ Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ա Յ Ա Յ Շ , դժբախտաբար: Իսկ թուրքը աշխարհին այդպէս ըսելու համար ունի պետք եղած այն բոլոր «փաստաթուղթերը», զորս հայը պիտի տայ անոր ձեռքը երբ կը մտնէ թրքական սահմանը:

Պիտի աշխատինք ի շահ թուրքին, որ մտնէ Եւրոպական միութիւն առանց ընդունելու իր գործած ցեղասպանութիւնը եւ շարունակելով սպիտակ ջարդը: Եւրոպան թերեւս տեղեակ չէ եւ կամ չ'ուզեր գիտնալ, թէ այդ հողը, պատմական առումով մեզի էր կամ ոչ: Եւրոպան ու համայն աշխարհը միայն գիտեն, թէ քաղաքական քարտէսին նայելով, հայը, լիբանանահայը կը մտնէ թրքական սահմանը, կը կոխէ «թրքական» հողի վրայ:

Նոյնիսկ մոռնալով ծրագրուած պտոյտի ընկերակցող ծախսերը, եթէ միայն նկատի ունենանք սահմանը անցնելու ու որոշուած շրջանները պտտելու համար մուտքի տուգանքը, կրնանք ըսել, որ արդէն իսկ բաւարար է Թուրքիոյ հակահայ քաղաքականութիւնը ֆինանսաւորելու:

Ղարաբաղին դէմ կռուող ազրպէյճանական բանակը կը մարզուի թուրք սպաներուն կողմէ, որոնք կը վճարուին Թուրքիոյ կառավարութեան գանձանակներէն. այն գանձանակներէն, որոնք կը լեցուին Թուրքիա այցելող հայերուն դրամներով:

Գացէ՛ք, ով հայեր, Ղարաբաղի մեր գիւղերուն ըսէք, թէ իրենց կուրծքերը ծակող փամփուշտներուն դրամը դուք տուած էք. գացէ՛ք այդ 17-18



տարեկան նահատակներուն ծնողներուն ըսեք, թէ իրենց գաւազը սպաննող լակոտին մարզումին համար դուք վճարած էք...

Եւ դեռ միջազգային ատեաններուն դիմաց, կը գոռանք «Ո՛չ» թուրքին, հաշիւ կը պահանջենք իրմէ...

«Ո՛չ» կարգախօսը ծանօթ է մեզի... Բողոքահաւաքներ... Անթիլիասի մայր տաճար... Թրքական դեսպանատուն... «Յայտարար» պանդոկ... Եւ այլն, եւ այլն: Ուրեմն որպէս լիբանանահայ, եւ յատկապէս որպէս ԼԵՄ-ական եւ իմ կարգիս «ո՛չ» կ'ըսեմ, այս անգամ «ո՛չ» դէպի Արեւմտահայաստան, Կիլիկիա, Պատմական Հայաստան պտոյտներուն:

Այս պտոյտները քաջալերողները կ'ըսեն, որ այս «ուխտագնացութիւններուն» նպատակը այն է, որ ֆիզիքապէս տեսնենք, ծանօթանանք, զգանք ու շօշափենք այն հողը, որուն համար կը պայքարինք, եւ որ մեր պայքարը նոր թափ ստանայ ու ալ աւելի հզօրանայ երբ տեսնենք մեր բռնագրաւեալ հողերու իրավիճակը:

Բայց հարկ է այս խնդիրին աւելի բծախնդրութեամբ ու խոհեմութեամբ մօտենալ: Արդեօք սփիւռքահայը ընդհանրապէս եւ լիբանանահայը յատկապէս կարիք ունի՞ ֆիզիքապէս տեսնելու այդ հողը, որպէսզի պայքարը շարունակէ: Եթէ այդպէս է, հապա մեր գաղութը, մեր կուսակցութիւնները, մեր ակումբները, մեր մշակութային կեդրոնները, մեր եկեղեցիներն ու վարժարանները ինչպէ՞ս կազմաւորուեցան եւ ինչո՞ւ գոյութիւն ունին, ո՞ր է անոնց առաքելութիւնը եւ հայեցի դաստիարակութիւնը... Իմ ճանչցած լիբանանահայս հողը չտեսած կը պայքարի, կը պայքարի իր ամբողջ եութեամբ ու կարողութեամբ՝ պաշտպան հանդիսանալով հայկական հարցին:

Ուրեմն եթէ հարցին մօտենանք կրօնական առումով պիտի ըսենք, որ մեր հաւատքը աւելի ամրապնդելու եւ ուժեղացնելու համար, մեր հոգեւոր կեանքին նոր թափ տալու համար, հարկ է անպայման ֆիզիքապէս տեսնել Աստուած... Ի՛նչ անտրամաբանական «տրամաբանութիւն»:

Թերեւս պայքարը զօրացնելու գծով պտոյտներուն հետապնդած նպատակը գնահատելի է, սակայն զանգուածային պտոյտով չի կատարուիր այդ մէկը, այլ ծրագրուած ու կազմակերպուած գործողումներով... Աւելցնեմ, որ Սելրի դաշնագիրին ու Ուիլսոնեան սահմանի բովանդակութեամբ Կիլիկիան արդէն իսկ Հայաստանի մաս չի կազմեր, անշուշտ այս ըսել չէ, որ կը դադրին հայկական ըլլալէ, երբեք: Հետեւաբար այդ դրամը, որ պտոյտին պիտի տրամադրէիք, յատկացուցէք Հայ դատի աշխատանքներուն, Արցախի վերաշինութեան, ջաւախքահայութեան կեանքի բարելաման...

Լաւագոյն օրինակներէն են Հայոց ցեղասպանութեան արդարութեան մարտիկները եւ հայ յեղափոխական բանակի անդամները, որոնք պայքարի նոր հորիզոն մը գծեցին, իրենց ամենէն թանկագինը՝ կեանքերը նուիրելով մեր դատին: Այս տղաքը, ոչ թէ Պատմական Հայաստանը, այլ ներկայ Հայաստանի Հանրապետութիւնը, Երեւանը չէին տեսած:

Վերջին հաշուով ո՞ր է լիբանահայութեան արժանապատուութիւնը: Այդ գաղութը, որ մեզ երեկ օտարամուտութեւ փրկեց, այսօր զարկ կու տայ ստրկութեան: Հերոս ուրֆացին, զէյթունցին, սասունցին... չեն կրնար ստրկի նման մտնել իրենց պապենական հողերը:

ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան նման աւելի հեռատես եւ մտահոգ ըլլանք մեր երիտասարդութեամբ ու ներկայ եւ գալիք սերունդներով, որովհետեւ անոնք են ապագան եւ գաղութի բարձրագոյն թիրախը:

Չշեղինք հայու տիպարէն, չդառնանք թոյլ եւ տկար՝ «պայքարը զօրացնելու» պատրուակով: Պահենք հայու յատկանիշները՝ յանդուգնութիւն, խիզախութիւն եւ վճռականութիւն: Չխոնարհինք Թուրքիոյ քաղաքականութեան ու հակահայ քարոզչութեան դիմաց: Մուրացկանի մը նման չաղաչենք թուրքին, որ մտնենք ու տեսնենք մեր պապենական հողերը:

Հայը եւ յատկապէս լիբանանահայը մուրալ չի ճանչնար, թուրքին հետ «գործակցիլ» չի գիտեր, իր պատմութեան չի դաւաճաներ:

Եթէ բռնագրաւեալ Հայաստան երթալ մը կայ, ԼԵՄ-ն ու համայն հայութիւնը պիտի միանան ձեզի, բայց ոչ այս պայմաններով: Պիտի միանան ձեզի, բայց ոչ խոնարհելով թշնամիին դիմաց, պիտի միանան ձեզի՝ «հրացանը» ուսին, խաչը կուրծքին, նայելով յառաջ... դէպի Արարատ: Համայն հայութիւնը պիտի միանայ ձեզի, կանչելով՝ «Վասն Զրիստոսի, վասն հայրենեաց» ու բռնագրաւուած հողերը վերստին ազատագրելու նպատակով: Համայն հայութիւնը պիտի միանայ ձեզի ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի տեսլականով, պիտի միանայ տեսնելու այն լուսաշող առաւօտը, որ պիտի բացուի Մեծ Մասիսի սպիտակ գագաթին ետեւէն, ուր պիտի շողայ հայկական դրօշը:

Փառք ու պատիւ՝ աշխարհով մէկ սփռուած սփիւռքահայութեան:

Փառք ու պատիւ՝ լիբանահայութեան:

ՀՐԱԾԻՆ

«Րաֆֆի» մասնաճիւղ

ՄԵՐ ՀԱՅԻՆԵՆԻՔ





ՔԱՐԵՂԷՆ ՎԿԱՆԵՐԸ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

«Ռազմիկ»ի «Մեր հայրենիք» էջը ընդհանրապես յատկացուած կ'ըլլայ Պատմական Հայաստանէն որոշ շրջաններու, անոնց պատմական, հոգեւոր, կենցաղային, մշակութային, տնտեսական եւ այլ կարեւոր տեղեկութիւններուն, որոնք կը փոխանցուին մեր

զլխագիրով գրել, որ փանթուրանիզմի քաղաքականութիւնը բաւական աշխուժ է եւ Հայոց ցեղասպանութիւնը կը շարունակուի: Այո՛... կը շարունակուի: Այս անգամ մեր հոգեւոր կառոյցներու սուրբ քարերուն վրայ, քարերուն մէջ եւ քարերուն ընդմէջէն:



ընթերցողներուն: Այս թիւին համար նկատի առած ենք քանի մը շրջան: Այս անգամ քիչ մը էջին բնոյթը փոխելով՝ չոր ու ցամաք տեղեկութիւններու փոխանցումէն անդին պիտի երթանք եւ տեսնենք տուեալ կառոյցներու ներկայ վիճակը եւ այդ կացութեան ետին թաքնուած թրքական մշակութային սպանդի քաղաքականութիւնը:

Սկսելու համար պէտք է յստակացնել, որ Թուրքիոյ կառավարութիւնը մինչեւ օրս որեւէ ճիգ չի խնայեր մեր հայկականութիւնը քանդելու: Այլ խօսքով, պէտք է

Վանայ ծովու զուլալ ջուրն ու Անիի մայր տաճարի ժայռերը լուռ վկաներն են այդ սպիտակ ջարդին...

Հաւանաբար առաջին անգամն ըլլալով է, որ այս էջը պիտի բովանդակէ ներկայ Թուրքիոյ ներքին քաղաքականութիւնը եւ կուսակցական խառնաշփոթ աշխատանքները:

Սկսիմք Հայոց լիճերու թագուհի Վանայ Ծովու հարաւ արեւմուտքը գտնուող Ադթամար կղզիէն, որ լիճի 4 կղզիներէն ամենէն նշանաւորն է եւ հետաքրքրական դեր խաղացած է մեր պատմութեան մէջ:

Անշուշտ բաւական նշանաւոր է նաեւ հանճարեղ ճարտարապետ Մանուէլի 915-921 թուականներուն կառուցուած Ս. Խաչ տաճարը՝ որպէս պատմական ու ճարտարապետական արժէք: Աւելի ճիշդը, հայոց ազգային պատմութեան ու մշակոյթի փառքերէն մէկն է անիկա:

Մեր պատմութեան գոհարներէն, կենդանական քանդակներով հարուստ եկեղեցւոյ հիւսիսային մասէն վեր կը խոյանայ նաեւ հայոց երկրորդ Մասիսը՝ Սիփանը:

Իսկ ներկայ առումով Ադթամարը, հակառակ իր տխուր պատմութեան, կը գրկէ գեղեցիկ առիթներ ե՛ւ հայերու ե՛ւ թուրքերուն համար:

Զմոռնանք, որ մեր հայկական աւանդական տարազներու կարգին կայ նաեւ վանեցի զինուորին տարազը, որ նոյնպէս մշակութային հարստութիւն է:

Իսկ Թուրքիոյ պարագային լիճը կը ներկայացնէ շատ կարեւոր տնտեսական եւ զբօսաշրջային արժէք: Նախ եւ առաջ շրջանի բնակչութեան համար ան ունի կենսական եւ կենցաղային նշանակութիւն:

Իսկ կայ նաեւ այլ իրողութիւն մը, որ հազարաւոր զբօսաշրջիկներ կղզիները կ'այցելէն եւ իրենց հանգիստը կ'առնեն լիճի ափերուն...

Հետեւաբար, Թուրքիոյ համար շրջանը որպէս ոչ իսլամական սեպելը երբեք նպաստաւոր չի կրնար ըլլալ. բան մը, որ կու գայ ապացուցելու, որ նախորդ ամիսներուն Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ կայացած Ս. պատարագը պարգապէս քաղաքակիրթ երեւելու ձեւ մըն էր: Օսմանեան բարբարոս դէմքը փոխարինուած էր ժողովրդավար եւրոպացիի դիմագիծով...

Եթէ իսկապէս ժողովրդավար դարձած էին, թող թոյլ տային, որ խաչը բարձրացուէր նախքան Ս. եւ անմահ պատարագի կայացումը: Թուրքերը մեր սուրբ տաճարը օգտագործեցին միջազգային

հանրութիւնը խաբելու՝ ըսելով, որ Թուրքիոյ նման քաղաքակիրթ ազգ մը չի կրնար ցեղասպանութիւն կազմակերպել... Յետեւաբար, ուրացման քաղաքականութիւնը արդիւնք տուաւ, ըստ իրենց:

Իբրեւ անդրադարձ Աղթամարի մէջ հայերուն տրուած աղօթքի արտօնութեան՝ Թուրքիոյ կառավարութեան ընդդիմադիր Ազգայնական շարժում կուսակցութեան ղեկավար Տելէթ Պահչելի ու անոր կուսակցութեան նահանգային 40 կառոյցներու ղեկավարները 1 հոկտեմբեր 2010-ին ուրբաթօրեայ նամազ կատարեցին Անիի մայր տաճարին մէջ (մզկիթի վերածուած):

Անին Պատմական Հայաստանի քաղաքաշինական եւ կառուցողական գլխաւոր կեդրոնն ու Բագրատունեաց թագաւորութեան մայրաքաղաքն է, որ նշաւաւոր է իր 40 դռներով եւ 1001 եկեղեցիներով: Մասնագետներու կողմէ Կովկասի ճարտարապետութեան զարդը նկատուող Անիի մայր տաճարի կառուցումը սկսած է 989 թուականին եւ աւարտած է 1001-ին: Տաճարին ճարտարապետն է Տրդատը, որ նաեւ կառուցած է Պոլսոյ Ս. Սոֆիա տաճարի գմբէթը: Անին հայկական շինարարական արուեստի լաւագոյն նմուշներէն էր՝ իր շքեղ պատկերով, լայն փողոցներով, հրապարակներով, եկեղեցիներով ու պալատներով: Շրջանի բնակիչները սովորութիւն ունեին երդուելու Անիի 1001 եկեղեցիներու անունով: Ճարտարապետական եւ կառուցողական մարզին մէջ Անին պատմութեան մէջ յիշատակուած է որպէս քաղաքամայր, լոյսի եւ մշակոյթի կեդրոն եւ վաճառաշահ մեծ ոստան:

Քրիստոնեական քաղաքականութեան եւ արուեստի հոյակապ օճախը գրաւուեցաւ 16 օգոստոս 1064-ին Արփարսլանի կողմէ:

Ապա՝ 4 օր ետք, տաճարի խաչը իջեցուց եւ ուրբաթօրեայ նամազ կատարեց. այդ պատճառով ներկայիս նախկին հայկական եկեղեցին կը կոչուի «Ֆեթիհէ» մզկիթ:

Ահաւասիկ 946 տարի ետք անգամ մը եւս հաւաքուեցան ուրբաթօրեայ նամազ կատարելու. բան մը, որ ուղղակի հակազդե-

2000 թրքական դրօշակ բաժնուեցաւ հոն եղողներուն:

Առ ի տեղեկութիւն աւելցնենք, որ Անիի աւերակները մինչեւ 2002 թուական զինուորական առաջին կարգի արգիլել գօտի էին, սակայն 2002-ին արգելքը վերցուեցաւ: Այս թուականէն ի վեր Թուրքիա այցելող հայերը մնալուն հետաքրքրութիւն կը ցուցա-



ցութիւնն էր Աղթամարի արարողութեան: Անոնք նաեւ բողոքեցին Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն գծով արձանագրուած զարգացումներուն դէմ: Պահչելիի ուզածը քաղաքական ցուցադրական արարք մըն էր պարզապէս:

Իսկ Պոլսոյ հայոց պատրիարքարանը չկրցաւ արգելք հանդիսանալ նամազի կայացման, որովհետեւ եկեղեցին Թուրքիոյ տիրապետութեան տակ է: Հայերը հոն փոքրամասնութիւն են, մինչդեռ իրեն՝ մեծամասնութիւն:

Նշենք, որ նամազին իրենց մասնակցութիւնը բերին հարիւրաւոր թուրք ազգայնամուլներ եւ մինչեւ 10 հազարի հասաւ թուրքերուն ու ազերիներուն թիւը, իսկ

բերեն Անիի նկատմամբ:

2006-ին վարչապետ Էրտողան, իսկ 2008-ին նախագահ Կիլ այցելած են Անիի աւերակները...

Վերջերս տեսանք, որ առեւտրական նորաձեւութեան ընկերութիւն մը այս պատմական-կրօնական վայրերուն մէջ նկարահանումներ կատարեց եւ լուսանկարները տեղադրեց Եւրոպական «Elle» թերթի թրքական տարբերակին մէջ:

Իսկ մեզի համար Անին կը մնայ մեր գեղակերտ շինութիւններէն եւ ճարտարապետական գոհարներէն մէկը:

Ուրբաթօրեայ նամազէն մէկ օր ետք՝ 2 հոկտեմբերին թուրք ազգայնականներ ընդառաջելով իրենց ղեկավարին կոչին՝ Հայաս-



տան-Թուրքիա սահմանին վրայ կողք կողքի շարուելով մարդկային պատ մը կազմեցին:

Պահչելի յայտարարեց, որ այդ սահմանը պիտի չբացուի եւ Երեւանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ պիտի չհաստատուին, այնքան ատեն որ «հայկական ուժերը չեն հեռացած ազրպէյճանական բռնագրաւուած տարածքներէն»: Անշուշտ խօսքը Ղարաբաղի մասին է, մէր արեամբ ազատագրուած Ղարաբաղին...

Հայոց պատասխանն ալ չուշացաւ: 1980-էն ի վեր փակ մնացող Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթէշեան շաբաթ, 23 հոկտեմբերին աղօթք արտասանեց՝ մաղթելով, որ մօտիկ ապագային կարելի կ'ըլլայ եկեղեցւոյ մէջ արարողութիւն կատարել:

Տիգրանակերտի մայր քաղաքապետութեան նախաձեռնութեամբ, 2 տարի առաջ սկսած է Ս. Կիրակոս եկեղեցւոյ նորոգութիւնը: Այս եկեղեցին, որ կառուցուած է 1367-ին եւ կը նկատուի Միջին Արեւելքի մեծագոյն եկեղեցին, 1980-էն ի վեր փակ կը մնար: Եկեղեցին «Սիւմերպանք»ի կողմէ ժամանակ մը գործածուած էր իբրեւ շտեմարան: Հետագային,



անխնամ մնալուն իբրեւ հետեւանք փուլ եկած է եկեղեցւոյ տանիքը, սիւները քայքայուած են, իսկ ներքին մասը անձրեւի եւ խոնաւութեան պատճառով փճացած էր: Այս եկեղեցւոյ նորոգութեան համար նախատեսուած էր 2,5 միլիոն տոլար, որուն 70 առ հարիւրը պիտի ապահովուէր հայ համայնքին, իսկ 30 առ հարիւրը Տիգրանակերտի քաղաքապետութեան կողմէ:

Նման ծրագիր մը համար կարիք կայ աշխարհի հայութեան գ օ ր ա կ ց ու թեան, որպէսզի Ս. Կիրակոսի կողքին նաեւ այլ հայկական եկեղեցիներ նորոգուին:

Տեղին է նշել, որ քաղաքապետը ըսաւ. «Այս քաղաքը որքան մերը կը նկատուի, կը նկատուի նաեւ ձերը: Ես այս քաղաքին մէջ որքան

իրաւունք ունիմ, այնքան ունիք նաեւ դուք»:

Հետեւաբար, այս վերջին քանի մը ամիսներուն Թուրքիոյ ներքին քաղաքական իրադարձութիւնները բաւական արձագանգ ձգեցին...

Շատեր գոհ էին պատահածէն, իսկ շատեր անարգուած զգացին:

Այս բոլորէն ետք Վանայ ծովու թագուհին՝ Աղթամարը, 1001 եկեղեցիներու քաղաքը՝ Անին եւ Մեծն Տիգրանի Տիգրանակերտը կը մնան քարեղէն վկաները մեր պատմութեան: Անոնք լուրթեան մէջ խօսող վկաներն են մեր կերտած պատմութեան, կերտելիք պատմութեան եւ ապագային:

ՀՐԱԿ ԱՒԵՏԱՆԵԱՆ
ԼԵՄ-ի «Րաֆֆի» մասնաճիւղ







ԿԱՌՉԻՆՔ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ

Շատ ցաւալի է տեսել, թէ հայ երիտասարդութեան մէջ կայ կարելոր թիւ մը, որ պէտք եղած հետաքրքրութիւնը չի ցուցաբերեր իր մայրենի լեզուին եւ պատմութեան նկատմամբ, ինչպէս նաեւ չ'արժեւորեր ազգն ու ինքնութիւնը:

Ճիշդ է, որ սփիւռքահայութիւնը այսօր կը գտնուի մեծ, վտանգաւոր եւ հայկական արժէքներուն սպառնացող բազմաթիւ մարտահրաւերներու դեմ յանդիման, բայց եւ այնպէս ոմանք ոչ մէկ ճիգ կը թափեն զինուելու եւ պայքարելու այս վտանգաւոր երեւոյթներուն դեմ:

Ներկայիս համաշխարհայնացման ալիքը մեծապէս կը վտանգէ սփիւռքահայութեան ապագան: Օրըստօրէ նոր սովորութիւններ եւ ապրելաձեւեր ի յայտ կու գան. այսպիսով, տարբեր ազգերու աւանդութիւններ նոյնանման կը դառնան, հիները կը խառնուին նորերուն: Հայութիւնը եւս, այլ ազգերու նման, եւթարկուած է այս ազդեցութիւններուն, որոնք կրնան պատճառ դառնալ ազգային իւրայատկութիւններու եւ սովորութիւններու կորուստին, հայկական աւանդութիւններու եւ մշակոյթի մոռացման՝ հասնելով մինչեւ հայ գաղութի քայքայման:

Սփիւռքի մէջ բազմացած է թիւը այն երիտասարդներուն, որոնց մօտ ազգային պատկանելիութեան զգացումը գրեթէ չքացած է, հայ երիտասարդը տարուած է այլ հետաքրքրութիւններով՝ միշտ նախընտրելով օտարը, փախուստ տալով հայկականէն, ունկնդրելով օտար երաժշտութիւն, մօտենալով օտարին եւ անտեսելով հայկականը: Նման երիտասարդներ անգլերէն կամ արաբերէն լեզուն կը գերադասեն հայերէնին: Երիտասարդութեան մօտ ներկայիս տարածուած է նոր սովորութիւն մը՝ լատինատառ հայերէնով գրելը:

Տաւ ի սիրտ, այս վերջին տարիներուն հայ աշակերտութեան թիւը նուազած է հայկական վարժարաններուն մէջ, իսկ օտար վարժարաններ յաճախող հայ աշակերտներուն թիւը օրըստօրէ աճ կ'արձանագրէ: Այս ծնողները կ'ենթադրեն, որ իրենց զաւակները օտար վարժարան ուղարկելը աւելի նպաստաւոր է, քան հայկական վարժարան ուղարկելը. իբրեւ թէ անոնք հոն աւելի բարձր ուսում կը ստանան ու աւելի բարձր վկայականներու կը տիրանան, կը դառնան «տիպար» անհատներ, որոնց մակարդակին չի կրնար հասնիլ հայկական վարժարան յաճախող ոեւէ աշակերտ: Այս մտայնութեան

հիմնական պատճառներէն մէկը քաղքենիացումն է: Հայ ժողովուրդին մէջ կան անհատներ, որոնք կուրցած են օտարին բարքերէն, կառչած են նիւթական ու սին արժէքներու, դարձած են եսասեր, ինկած են ցուցամոլութեան գիրկը: Նմանները շատ անտարբեր են իրենց ազգին նկատմամբ, օտարամոլութիւնը հասած է գագաթնակէտին եւ ամբողջովին գերած է զանոնք: Ճիշդ է, որ կան բացառութիւններ, սակայն սփիւռքահայութեան ընդհանուր իրավիճակը մտահոգիչ ու վատ ճամբով կ'ընթանայ, ու հետզհետէ նահանջը տիրական կը դառնայ:

Այս բոլորէն շատ աւելի ցաւալի ու մտահոգիչ երեւոյթ է այն, որ երիտասարդութեան որոշ մաս մը կ'ուղղուի դեպի թրքացում: Ան ո'չ միայն կը մերժէ հայերէն ու հայոց պատմութիւն սորվիլ, այլ կ'ոտնակոխէ ու կ'արհամարհէ զանոնք, կ'անտեսէ իր դարերու պատմութիւնը: Օտարացած հայ երիտասարդները անկարելոր կը նկատեն իրենց պապերուն պայքարն ու դիմադրութիւնը թշնամիին դեմ, համաձայն կը գտնուին հայկական հողերու եւ իրաւունքներու խլման՝ ամբողջովին արժեզրկելով մեր ֆետայիներուն զոհաբերութիւնն ու մղած սրբազան պայքարը: Այսպիսով կարգ մը «հայ» անհատներ մեծ հաճոյքով կը գործածեն թրքականը, կ'ունկնդրեն թրքական երաժշտութիւն եւ կը դիտեն թրքական ժապաւեններ, ամենայն հանգստութեամբ կ'այցելեն Թուրքիա ու կը խօսին իրենց թշնամիներու լեզուն...

Ճիշդ է, սերունդները փոխուած են, կեանքի պայմանները փոփոխութիւն կրած են, սակայն այդ մէկը չի նշանակեր, որ մենք ալ պիտի քալենք այս ուղիով: Պարտաւոր ենք դիմադրել ծովման տանող տարբեր հոսանքներուն դեմ: Հայ մնալու համար պէտք է պահպանենք հայկական մշակոյթն ու սովորութիւնները, հայոց պատմութիւնն ու հայերէն լեզուն:

Հայ գաղութը միշտ ալ ունեցած է իր կրթական, մշակութային եւ հոգեւոր կառոյցներ, կեդրոնները, ազգային հաստատութիւններն ու ակումբները, որոնք աշխատած են կերտելու հայ մարդը, արժէքներով հարստացնելու հայ տիպարը, հայեցի դաստիարակութիւն ջամբելու սփիւռքահայ պատանիին ու երիտասարդին:

Հայ մարդ կերտելը կը սկսի հայ ընտանիքէն. մանուկը բնականաբար իր ընտանիքէն է, որ կը ստանայ սկզբնական հայեցի դաստիարակութիւն: Տան

մէջ հայերէն խօսելով, հայկական ձայնասփիւռի կայան ունկնդրելով, պատկերասփիւռէն հայկական կայաններու հետեւելով, հայերէն թերթերն ու գիրքերը տունէն անպակաս ընելով է, որ պատանին կը ստանայ իր նախնական հայեցի կրթութիւնը եւ կը դառնայ ազգասէր, հայրենասէր: Հայ ծնողներուն պարտականութիւնն է նաեւ իրենց զաւակները հայկական վարժարաններ ուղարկել, որովհետեւ հայկական վարժարանը հայապահպանման հիմնական ու կարեւորագոյն սիւներէն մէկն է, ունի բարձր առաքելութիւն՝ կերտել հայ մարդը, արժէքներով հարստացնել զայն եւ հայօրէն դաստիարակել նոր սերունդները:

Դպրոցներուն կողքին ազգային, մշակութային եւ կրօնական հաստատութիւնները եւս մեծ դերակատարութիւն ունին հայ տիպարի ստեղծման մէջ: Երիտասարդը հայկական միջավայրի մէջ շատ ակտիվ մօտէն կը ծանօթանայ իր ազգի պատմութեան,

մշակոյթին եւ արժէքներուն, կը սորվի մեկդի դնել իր սին ու անձնական շահերը՝ առաջնահերթութիւն նկատելով հաւաքականն ու ազգայինը: Սակայն, դժբախտաբար, ազգային հաստատութիւններուն մէջ երիտասարդութեան թիւը հետզհետէ կը նուազի, եւ մեր պարտականութիւնն է ճիգ չինայել կասեցնելու այս թիւի նահանջը՝ երիտասարդները ներգրաւելով մեր հաստատութիւններուն մէջ:

Հայապահպանումը ձուլումի դէմ դնելու միակ ու անհրաժեշտ գէնքն է: Պահպանենք մեր մայրենի լեզուն, հայոց դարաւոր պատմութիւնն ու արժէքաւոր մշակոյթը, մնանք հայ եւ հպարտանանք մեր ինքնութեամբ:

ՎԱՐԱՆԴԱ ԵԱԳՈՒՊԵԱՆ
ԼԵՄ-ի «Շուշի» կորիզը

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՍԵԼԻՍ

Հայաստան ասելիս,
Սեր է բուրում,
Նրա բուրմունքն ինձ մօտ է հասնում
Եւ աշխարհով մէկ է տարածում:

Հայաստան ասելիս,
Սիրտս է խփում
Որ կարծես նա այդտեղ է ապրում
Եւ ես նրանով եմ շնչում:

Հայաստան ասելիս,
Կարօտն է կանչում,
Արեան տենչն ու ցաւն է փոխանցում
Եւ ինձ դարձեալ պայքարի է մղում:

Հայաստան ասելիս,
Արարատն եմ տեսնում,
Մասիսի կատարին Եռագոյնն է ծածանում,
Ուր մեր ծիծեռնակներն են սաւառնում:

Հայաստան իմ սիրուն,
Երեւան իմ սիրասուն,
Գէթ մի յոյսով եմ ապրում՝
Թէ Հայաստանում շինեմ իմ բոյն:

ՔՐԻՍԹԻՆԱ ՍՐԱՊՈՆԵԱՆ
ԼԵՄ-ի «Ա. Շիրակեան» մասնաճիւղ



ԱՆՆԱՅԱՆՁ ՔԱՅԼԵՐ

Արեւմուտքի մէկ անկիւնէն եկած էր պանդուխտ մը օտար. ան նոր լսած էր իր պապերուն պատմութեան մասին ու ապշած, որ ունեցած է այդքան քաջ հայրեր, մայրեր, քոյրեր, եղբայրներ, սակայն տակաւին չէր լսած անոնց մասին խօսք մը հարազատ: Ան որոշեց գտնել անոնց ծննդավայրը սուրբ, տարիներով ստրկացած, լքուած ու քարուքանդ եղած, բայց եւ այնպէս ոչ մէկ ազգ կրցաւ տիրել այդ վայրերուն սրբութեան, իսկ տիրողը չկարողացաւ դառնալ հարազատ կամ հասկնալ հոն ապրող այդ քաջ ազգին ողջ պատմութիւնը:

Այժմ կանգնած էր պանդուխտը՝ դիմացն առած գոյգ ճանապարհ. շուարած էր, թէ ո՞ր ճամբէն պետք էր առնէր քայլն առաջին, որ զինք պիտի հասցնէր իր պապերուն սրբավայրին: Աչքին առաջ էին տանջանքներն ու ցաւերը ապագային, բայց երբ հասներ նպատակին պիտի մոռնար ողբն անցեալին:

Պանդուխտ.- Ո՞ր ճամբէն ես պիտի քալեմ հասնելու իմ հայրենիքը՝ թառած ապառաժներուն վրայ հսկայ, ա՛խ աչքերս արիւն կու լան: Ինչպէ՞ս կրնամ ես հասնիլ հոն՝ բարձունքները մագլցելով. առիւծները կրնան միայն ելլել հոն, ու արծիւները ճախրելով՝ աչքերն սառած իրենց բոյնին:

Ճակատագիր.- Քալէ՛ արահետէն, ոչ լայն ճանապարհէն, քալէ յաւիտեան, քալէ աննահանջ. ետդարձի կամուրջները պիտի այրին, երբ անցնիս անոնց վրայէն, ու պիտի հնչէ պայքարի փողը ականջիդ, պետք է պատրաստ ըլլաս դուն հոն պայքարի, ու երբ հասնիս վերջին քայլերուդ, պիտի մնաս հոն, վերաշինես քու տունդ:

Պանդուխտ.- Վստա՛հ ես պետք է քալեմ ու պիտի քալեմ այդ արահետէն, սակայն ինչու՞ ինծի կը խրատես, որ չքալեմ քու այդ հանգիստ ու լայն ճանապարհէդ:

Ճակատագիր.- Եւ տե՛ս, ով պանդուխտ, ես տարիներէ կը քալեմ այս ճանապարհէն, որուն հետեւիլը դիրին թուեցաւ ինծի. ու տարիներէ կը քալեմ այս անվերջ ճանապարհովս: Ո՞վ պանդուխտ, օտար այս վայրերուն մէջ դուն քալէ արահետէն եւ ոչ այս հսկայ ճանապարհէն, գուցէ արահետը ըլլայ շատ դժուար, Աստուած քեզ լոյս ու յոյս պիտի տայ: Լսե՛մ ես պանդուխտ քու ոտնաձայնդ, պայքարի ճամբէն ընդմիջտ յաղթական, քու ճամբադ, ո՞վ պանդուխտ, դժուար ու փշոտ է, բայց ունի մէկ վերջ՝ ազատու-

թիւն: Քալէ՛, ո՞վ պանդուխտ, քալէ՛ դուն անվախ, տողանցե՛ հպարտ, իմ մասիս մի՛ մտածեր դուն ոչ մէկ վայրկեան, ճամբուս վերջը խաչ է, խաչը քեզ օրհնէ, մի՛ վհատիր, որովհետեւ ազատութիւնը անմահութիւն է: Արեգակը հոն քեզ կը սպասէ՝ կտակը ձեռքին, քեզի կը յանձնէ զայն, հարազատ տէրն ես դուն այդ վայրերուն, լեռներ ու ձորեր, կապոյտ երկնքով կու տան քեզ ցնծութիւն եւ ուրախութիւն:

Պանդուխտ.- Ես կ'ուզեմ քալել այդ արահետէն, երբեք չե՛մ վախնար հոն գտնուող վտանգներէն, որովհետեւ ազգը, որ այդտեղ կ'ապրէր, ինչպէս ինծի կ'ըսէր իմ ճակատագիր, քաջ ազգ մըն էր եղած, սակայն տեղահանուած իր սուրբ աշխարհէն, այժմ ամայացած, որուն սիրոյն ազգն իր արիւն թափած էր, իր կոկորդէն, ուրկէ անբաժան կը մնար գազանի սիրտ ունեցող թշնամիին մագիլները. վստահ, որ խիզախ ազգ մըն էր եղած, որուն ժառանգող չէ եղած:

Ճակատագիր.- Ո՛չ անոնք մի՛շտ ուխտեցին, թէ կը շարունակեն եւ կը վերադառնան:

Պանդուխտն իր առաջին քայլը կ'առնէ ու անձամբ կը զգայ ցաւերն ու տառապանքները այդ հերոս ազգին ու դժուարութիւնը այդ խորթ ճամբային. եւ այսպէս տարիներ քալեց ու հասաւ անմահութեան...

Պանդուխտ.- Արդեօք ա՞յս էր տարիներու պանդխտութեան ու մղած պայքարիս վերջը:

Արեգակ.- Այո,դուն հասար ո՞վ պանդուխտ քաջ, ինկած այս ճամբին օտար, հասար քու ճամբուդ վերջին քայլերուն, ալ չկայ ճամբայ, ալ չկայ պայքար, դուն հոս կը մնաս ու հոս կը թաղուիս ու հոս կը կերտես քու կեանքդ ուրախ, ազատ, համարձակ: Տես, դուն հասեր ես անմահութեան, աղբիւրին գուլալ՝ ջուրով արքայական:

Պանդուխտը օտար, կը դիտէր ապշած իր շուրջ ձախ ու աջ, կը դիտէր ան լուռ, կարծես կը յիշէր պատմութիւն մը հին՝ դարերու խորքէն, իր իսկ հայրերուն:

Արեգակ.- Խօսէ՛, ով պանդուխտ, կանգնած ես ապշած, դուն ծանօթ ես ազգին ազատասէր, որ տարիներ առաջ այստեղ կ'ապրէր, ազատ ու ան-

կախ,ան յաւերժ անմահութիւն կը շնչէր,տես այս աղբիւրը արիւն կը յորդի, երբ ազգն այդ խիզախ,քայլ մը առնէ պայքարի ուղիին վրայ ու ժայռերն այս լեռան կոչեցին Արարատ,ժայռերը կը բաբախեն հայ սրտի նման, երբ վնասուին անոնք ամէն մէկ վայրկեան:

Պանդուխտ.- Իմ ծնողներս կ'արտասանէին այսպիսի խօսքեր, սակայն յուզուելով, յիշելով իրենց չտեսած հայրենիքը ու իրենց պապերուն արիւնալի ցաւը, որոնք քարոտուած էին հայրենի հողէն, բռնի, ակամայ...Յայ կը կոչուէին անոնք դարերու ընդմէջէն, ունէին երկիր անունն Յայաստան, անպակաս ընդմիշտ Աստուծոյ օրհնութենէն:

Արեգակ.- Դուն հասար քու տունդ, տունդ հայրական, պանդուխտ չես դուն հոս, այլ հարազատ. ուխտ ըրած էին քու հայրերդ, թէ օր մը անոնք կը վերադառնան, կը վերականգնեն տունը հայկական ու պապենական: Վերադարձար դուն անմար սրտիդ մօտ, այժմ բարձրացի՛ր սառն այս Արարատ, բարձրացուր հպարտ անոր զագաթին Եռագոյնը համայն հայ ազգին, Մասիսի գլխէն դուն գոռայ կրկին՝ կեցցէ՛ հայ ազգը պաշտպան իր դատին:

**ՃԱՆՐՈՂ ԳՐԻՉ
ԼԵՄ-ի «Բաֆֆի» մասնաճիւղ**

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

«Պայքարը արժէք է՝ ինչպէս մեր կեանքը, պայքարը սուրբ է՝ ինչպէս աշխատանքը, պայքարը ուրիշ բան չէ, եթէ ոչ մտքի, հոգիի եւ աշխատանքի խտացումը իր գերազանց ոճով: Պայքարէն յոգնածը պիտի մահանայ, պայքարի եռանդով լեցուածն է, որ պիտի ապրի եւ տիրէ»:

96 տարիներ առաջ հայոց բաժակները երգեցին ազատութեան եղանակներ ու խմելով զոհուածներուն կենացները՝ ուխտեցին պայքարիլ մինչեւ արեան վերջին կաթիլ ու հաւատալով այդ երդման, շարունակեցին մինչեւ մահ պահպանել այդ արեամբ շաղախուած անկախութիւնը:

Ո՛ր եւ այդ խօսքերը այսօր, ո՛ր թաքնուած են անոնք... Ըսէ՛ք, երթամ, փնտռեմ, գտնեմ զանոնք ու բաշխեմ հայութեան...

Արդեօք այս բոլոր երդումները մոռացումի մոխրակոյտին տակ թաղուա՞ծ են, թէ՞ տարիներու փոշիները ջնջեցին զանոնք... Ո՛ր եւ անոնք այսօ՛ր հայ անհատին մօտ...

Այսօ՛ր դարերու ընթացքին հայութիւնը իր բռնատիրութեան տակ առնող հսկայ զագան թուրքը չէ մեզի սպառնացող վտանգը, այլ օտարամոլութիւնը, որ հայը դարձուցած է անտարբեր հայրենիքին նկատմամբ ու ստրուկ՝ ուրիշներուն կամքերուն...

Այսօրուան «հայը» մէկդի ձգելով իր անձնական կարողութիւնները, փակ աչքերով կը քալէ օտարութեան ուղիներէն, մինչեւ որ հանդիպի ամէնէն մօտիկ հանգստաւետ ու տաքուկ անկողինին, ուր պիտի շարունակէ իր մնացեալ աննպատակ կեանքը:

Ի՞նչ կը նշանակէ ապրիլ, եթէ ոչ մեր ինքնութիւնը ճանչնալ ու հմտանալ՝ անոր իմաստ տալու մէջ: Ի՞նչ կը նշանակէ պայքարիլ, եթէ ոչ ըմբոստանալ ու դէմ դնել ձուլումի փուշերուն, որոնք կան ամենուրեք օտար ափերուն վրայ:

Մենք՝ հայ ժողովուրդի սերմերը, եթէ խոչընդոտներ նշմարելով նահանջէնք եւ կամ կեանքին յանձնէնք այն, ինչ որ մերն է, միայն մերը՝ մեր ինքնութիւնը, մեր գոյատեւման միակ յոյսը, հայ ժողովուրդի անընդհատ պայքարը, Առիւծ Միերի հզօրութիւնը, վարդանեան կամքը, անդրանիկներու զօրութիւնը, մէկուկէս միլիոն հայութեան ջարդը, տեղահանումը հայ ժողովուրդին, ուրեմն մենք ծնրադրած կ'ըլլանք ապերախտ ու դաւաճան գահին՝ պայքարի «բռնութեան» դիմաց:

Եկէ՛ք պահպանենք մեր միակ փրկութիւնը: Պահպանենք այն բոլորը, զորս հարուածել փորձեցին վատ ձեռքեր, ազատենք ինչ որ չար լեզուներ փորձեցին բռնագրաւել: Ծարունակէնք մեր պայքարը, ընդարձակէնք հայկականութիւնը եւ անլի եւս հզօրանանք, որպէսզի կարենանք հասնիլ մեր երազային ու յաճախ անմատչելի հայ հերոսութեան իտեալացումի բաղձանքին:

Կոչ կ'ունդղեմ ձեզի՝ ո՛վ ապագայ հայ երիտասարդներ,

«Առաջ անցէ՛ք, ուսանող հայրենակիցներ... Պարզեցէ՛ք ձեր ձեռքերը՝ նշանակ ուխտի եւ ուխտեցէք պատմութեան տօնին առջեւ, բայց մանաւանդ ձեր արիւնտ ժողովուրդին առջեւ, միշտ հաւատալ, մի՛շտ պայքարի մէջ մնալ»:

**ՇԱՂԻԿ ԶԱՊՈՅԵԱՆ
ԼԵՄ-ի «Արաբօ» մասնաճիւղ**



ՆԱՄԱԿ ԱՆՄԱՅՆԵՐՈՒՄ

**«Ո՞ր է, ո՞վ մահ քու խայթոցդ,
Ո՞ր է, ո՞վ գերեզման քու յաղթութիւնդ»:
Ա. Թոթ. Կրկթց.**

Դարձեալ «Ազդակ» օրաթերթի առաջին էջին վրայ կը կարդամ. «Ազրպէյճան դարձեալ կը խախտէ զինադադարը. Արցախի բանակէն՝ մէկ զոհ». ա՛խ, այդ խաւար ու հոգեխռով պահը, որ յանկարծակիօրէն կ'ամպոտեցնէ ամբողջ ներաշխարհս: Կրկին հայ մը ինկաւ, կրկին զոհ մը՝ մեր սուրբ երթի ճանապարհին վրայ:

Կ'երեւակայեմ այն պահը, հա՛յ զինուոր, երբ դուն՝ իբրեւ հայոց լեռներու արծիւ, ճակատաբաց մաքառեցար ոտնձգութիւններ ընող ոսոխին դէմ. կը զգամ հեւքը՝ կռուի պահուն, կայծկլտող աչքերդ՝ համարձակութեամբ վարձկաններու սարսափահար աչքերուն մէջ նայող: Այո՛, նահատակութեանդ զինը սուղ կը վճառեն թշնամիները՝ հայ զինուորի մը դիմաց՝ ազերիներու հունձք մը, բայց ինչպէս առաժը կ'ըսէ. «Չագար կայ՝ մէկ չ'արժէր, մէկ կայ՝ հագար կ'արժէ»: Մեր ամեն զինուորի նահատակութեամբ դիւցազն մըն է, որ կը կորսնցնենք, ապա մաքո՛ւր ու սիրոյ արցունքներն են, որ կ'օծեն զայն, հայ օճախ մըն է, որ կը մարի. օճախ մը, որ ի՛նչ-ի՛նչ գերմարդկային ճիգերով էր կառուցուած: Կը տժգունիմ, սակաւախօս կը դառնամ եւ կարծես ներաշխարհս կ'անեանայ, լո՛ւռ ու մահասփի՛ւռ կը դառնայ...

Կը տեսնեմ քեզ պատկերասփիւռէն՝ ջղուտ մարմնով, լռակեաց ու խոնարհութեամբ ճաճանջուն. ձեր դէմքերուն վրայ, ձեր աչքերուն մէջ խորհուրդ մը կը տեսնեմ, գաղտնիք մը՝ ձեզի յատուկ: Եւ երբեք չի շիջիր երջանկութեանս ու ներշնչմանս ճրագը, անդադար դիտելով ձեզ. դո՛ւք էք անցեալի ցոլացումը ներկային մէջ, «Դաւիթ բէկեան զինուոր»ի մարմնաւորումը, խռո՛խտ էք ձեր լեռներուն պէս: Ձեր մէջ կը գտնեմ հայրենասիրական ապրումներուս պապակին յագեցումը, անցեալի ֆետային՝

սո՛սկ զինուորական համազգեստով: «Ինչպէ՛ս չուզեմ ըլլալ ընկերդ, երբ գիտես նոյնիսկ վատ ընկերոջ համար կեանքդ դնել զոհասեղանին վրայ»: Ձիւն ու մաքուր հայու՝ դուն թանկագին կտակն ես:

Ձեր քարերու ամրոցը, հրաշալի լեռնապատ աշխարհը գրաւականն է Չայաստանի գոյութեան. ձեր աշխարհը պիտի դառնայ հայուն ինքնավստահութեան, հպարտութեան, հերոսութեան եւ խիզախութեան մշտահոս գետը:



Ձեր երկրէն ծնած են հայոց յեղափոխութեան կորիւնները, Խանասորայ Վարդանը, Նիկոլ Դումանը, Մենակը եւ շա՛տ ուրիշներ: Պահ մը կը մտածեմ, որ եթէ բնութիւնը լեզու ունենար, ինչե՛ր պիտի պատմեր. դրուագներ, որոնց մէջ իմացեալ մահն էր ընդմիշտ միտք բանին, դաստիարակման աղբիւրը, ձեր նկարագրի

առանձնայատկութիւններուն ամենէն վսեմը: Ինչպէս Արամ Մանուկեան ըսաւ անցեալին. «Չայերով ո՛չ ոք չի հետաքրքրում շօշափել օգնութեան հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք»: Այո՛, այսօր քեզ արծաթասիրութեամբ, ազահութեամբ եւ լորձունքահոս բերնով կը դիտեն. նաեւ քեզ կը դաւեն՝ եղբայրներդ, մոլորեա՛լ կայէնները: Մէկ ճշմարտութիւն սակայն անխուսափելի է՝ նոյնիսկ ամենէն նիւթապաշտ հայն անգամ իր վերածնունդը կը գտնէ քու մէջդ:

«Չայ ըլլալը շատ դժուար է». խօսք մը, որ յաճախ դպրոցի դասատուն կը կրկնէր ինծի հետ զրուցելու ատեն: Այո՛, շատ դժուար է հայ ըլլալ ազնուական դիմագիծով. սրբութիւն մը, որ քու մէջդ կը տեսնեմ տակաւին, սիրելի՛ հայ զինուոր: Այսօր երկուքս իրարմէ հեռու, երկուքս սուրբ առաքելութեամբ, դուն՝ հողին պաշտպանութեամբ եւ ես մէկուկէս միլիոնի արդար դատի պահանջատիրութեամբ պիտի քալենք մի՛շտ յառա՛ջ...

**ԳՐԻՉ
ԼԵՄ-ի «Չայաստան» մասնաճիւղ**

ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԴԵՊԻ Ո՞ՒՐ...

Այս օրերուն բոլորս իրարու կ'ուղղենք հարցում մը, թե արաքական աշխարհին մէջ տեղի ունեցած այս պատմական յեղափոխութիւններէն եւ ժողովրդային ըմբոստութիւններէն ետք ի՞նչ պիտի ըլլայ արաքական երկիրներուն քաղաքական կացութիւնը:

2003-ին Միացեալ Նահանգներ եւ անոնց դաշնակիցները ներխուժեցին Իրաք եւ տապալեցին Սատտամ Հիւսէյնի սիւննի կառավարութիւնը, մինչ արդէն երկու տարի առաջ Աֆղանիստանի մէջ տապալած էին այլ սիւննի կառավարութիւն մը՝ Թալեպան շարժումի իշխանութիւնը:

Հարկ է նշել, որ Իրաքի եւ Աֆղանիստանի գլխուն հակաիրանեան իշխանութիւններ էին. այս երկուքին տապալումով իրանեան շիի իշխանութիւնը՝ շրջանին մէջ քաղաքական դատարկութիւն մը զգալով, սկսաւ թափանցել Միջին Արեւելք եւ դաշնակցեցաւ Սուրիոյ հետ. անոնք միասնաբար քաջալերեցին լիբանանեան եւ պաղեստինեան դիմադրութիւնները՝ ընդդէմ Իսրայելի, այսպիսով քաղաքական հաւասարակշռութիւն մը ստեղծելով ընդդէմ Յորդանանի, Եգիպտոսի եւ Սեւտական Արաբիոյ:

Ամերիկեան իշխանութիւններուն համար այս պարագան մտահոգիչ դարձաւ, ուստի անոնք սկսան վարել հակաիրանեան եւ հակասուրիական քաղաքականութիւն. իբրեւ արդիւնք ամերիկեան ճնշումներուն՝ սուրիական ուժերը լքեցին Լիբանանը, եւ երկիրը վերածուեցաւ պատերազմի դաշտի մը, ուր սիւննի-շիի լարուածութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Սակայն քաղաքական հարցերէն շատ անելի կարելոր էր արաք ժողովուրդին տնտեսական եւ ընկերային վիճակը. արաք ղեկավարները ժողովուրդը վախցնելով ծայրայեղ իսլամութենէն, սկսան օգտագործել զայն, կողոպտեցին ու ոտնակոխեցին ժողովուրդին իրաւունքները՝ զայն տարբեր ձեւերու ճնշումներու ենթարկելով: Այսպիսով ժողովուրդին մօտ սկսաւ ռիսկալիութիւնը աճիլ, եւ այս կացութեան հաստատումէն 30-40 տարի ետք արդէն բաժակը յորդեցաւ:

Նախ պետք է յստակացնել, որ ինչ որ պատահեցաւ Եգիպտոսի, Թունուզի եւ Լիպիոյ մէջ, ոչ մէկ ամենութիւն ունի իսլամական ծայրայեղականութեան հետ:

Ի՞նչ տեղի ունեցաւ Թունուզի, Եգիպտոսի եւ Լիպիոյ մէջ

Թունուզի երիտասարդութիւնը, մտաւորականները, աշխատաւորները ռումբի նման պայթեցան իրենց նախագահին՝ Չէյն Էլ Ապիտին Պըն Ալիի վարչակարգին դէմ, պահանջեցին ընկերային ու տնտեսական բարեկարգումներ, իբրեւ զէնք սկսան գործածել համացանցը (Twitter, Youtube, Facebook), իսկ Wikileaks-ը իր կարգին հրապարակեց նախագահին ընտանիքին շուրջ գաղտնի տեղեկութիւններ, որոնք կը բացայայտէին, թէ նախագահն ու անոր ընտանիքը որքա՞ն շահագործած ու կողոպտած են ժողովուրդը: Ասոր իբրեւ անդրադարձ՝ անգործ ուսանող մը՝ Պու Ազիզի ինքզինք իրկիզեց ոստիկանութեան դիմաց բողոքելով նախագահին դէմ: Ժողովուրդը այս բոլորէն ետք բռնկեցաւ, գործադուլներ կատարուեցան եւ ճամբաները փակուեցան ըմբոստներուն կողմէ: Ներքին ապահովութեան ուժերը նախագահին հրամանով փորձեցին ճզմել ժողովուրդը եւ լռեցնել զայն, սակայն այդ մէկը այդքան ալ դիւրին չէր: Բախումներ տեղի ունեցան եւ բազմաթիւ անձեր զոհուեցան ու վիրաւորուեցան: Նախագահը հրամայեց բանակին, որ դէմ դնէ ժողովուրդին, բանակը մերժեց. նոյն օրը Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա յայտարարեց, որ իր երկիրը թիկունք կը կանգնի Թունուզի ժողովուրդին եւ անոր իրաւունքներուն: Այս բոլոր զարգացումներուն եւ երկիրին մէջ տեղի ունեցած դէպքերուն լոյսին տակ նախագահ Պըն Ալի լքեց երկիրը:



Սակայն Թունուզի ընդդիմութեան մէջ չկար անձ մը, որ ստանձներ երկիրն ղեկավարութիւնը. միակ թեկնածուն համայնավար կուսակցութիւնն էր, իսկ իսլամները ոչ մէկ առիթ ունին հասնելու իշխանու-





թեան, որովհետեւ անոնք կազմակերպուած չեն եւ բանակին մէջ չեն թափանցած:

Թունուզի յաղթական յեղափոխութենէն քաջալերուած՝ Եգիպտոսի երիտասարդութիւնը, ուսանողները եւ մտաւորականութիւնը պահանջեցին Նախագահ Յիւսնի Մուպարաբի հրաժարականը: Մուպարաբ մօտ 30 տարի իշխեց երկիրին. ան իր շուրջ կազմակերպած էր ներքին ապահովութեան հզօր ուժ մը, բանակը որոշ չափով նեցուկ կանգնած էր իրեն: Եգիպտոսի յեղափոխութեան մէջ ընդդիմութիւնը, մասնաւորաբար «Իսլամ եղբայրներ» կազմակերպութիւնը զգալի դեր մը չունեցաւ: Մինչ այդ Իսրայէլ զգուշ կերպով կը դիտէր Եգիպտոսի իրադարձութիւնները: 25 յունուարին երկրին չորս կողմերը ծագեցան ցոյցեր, մայրաքաղաք Գահիբէի կեդրոնը՝ «Ազատութեան հրապարակ»ը լեցունեցաւ ցուցարարներով, ծանր բախումներ տեղի ունեցան ըմբոստներուն եւ Նախագահին կողմակիցներուն միջեւ, երկու կողմերէն զոհեր արձանագրուեցան: Նախագահը՝ իբրեւ բարենորոգումի նշան, զաղտնի սպասարկութեան Նախագահ Օմար Սուլէյմանը նշանակեց փոխ-Նախագահ, բայց եւ այնպէս ժողովուրդը չհրաժարեցաւ իր վճռական կեցումէն, եւ ցոյցերն ու բախումները շարունակուեցան: Արաբական երկիրներն ու Իսրայէլ մեծ մտահոգութեամբ դիտեցին



դէպքերու զարգացումը, արեւմուտքը՝ քաջ գիտնալով, որ պիտի կորսնցնէ իր ռազմավարական դաշնակիցը, պահանջեց Մուպարաբէն, որ հսկայական բարենորոգումներ կատարէ, իսկ Իրան Եգիպտոսի յեղափոխութիւնը քաջալերեց եւ զայն նկատեց իսլամական յեղափոխութիւն մը, միւս կողմէ իր երկրին մէջ ճգմելով իրանեան ընդդիմութիւնը:

Լիպիացիները ուզեցին տապալել 40 տարուան բարբարոսական իշխանութիւնը եւ անոր ղեկավար գնդապետ Մոամմար Բազաֆին. ըմբոստները

գրաւեցին երկրի արեւելեան շրջանները, իսկ Բազաֆին ուժերը մնացին երկրին արեւմտեան շրջանին եւ մայրաքաղաքին մէջ: Իշխանութիւնը բոլոր ռազմական միջոցներով հարուածեց ըմբոստները, բանակը բաժնուեցաւ, իսկ ներքին գործոց Նախարարը հրաժարեցաւ իր պաշտօնէն եւ դարձաւ ընդդիմութեան հերոսը, երկիրը մտաւ քաղաքացիական պատերազմի մէջ, գիւղեր եւ քաղաքներ ռմբակոծուեցան իշխանութեան կողմէ: Բազաֆի ընդդիմութիւնը տեսաւ որպէս ահաբեկչական Բալիստայի աջակից

ըմբոստներ եւ իր ժողովուրդին դէմ անմարդկային ոճիրներ գործեց: Լիպիոյ իշխանութիւնը Արեւմուտքին վրայ ճնշում բանեցուց իր քարիւզի «զէնք»ին միջոցով. յիշենք, որ Լիպիա Եւրոպային կ'արտածէ մեծ քանակութեամբ քարիւղ: Երկիրը մտաւ քառսային վիճակի մէջ, իսկ Արեւմուտքի համար քարիւղը վստահաբար ժողովրդականութենէ եւ ազատութենէ շատ ավելի կարեւոր է: Բազաֆիի ուժերը մինչեւ օրս ռազմական ծանր հարուածներ կը հասցնէն ըմբոստներուն: Աշխարհը կը դիտէ, հոգ չէ, կարեւորը քարիւղը ապահով է:

Պահրէյնի ռազմադաշտը՝ Իրան-Սեւուտական Արաբիա մրցակցութիւն

Ներկայիս բոլորին ուշադրութիւնը գրաւած են Պահրէյնի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները: Ինչպէս գիտենք, 31 դեկտեմբեր 2011-ին բոլոր արեւմտեան ուժերը, մէջը ըլլալով 50 հազար ամերիկեան ուժերը, պիտի քաշուին Իրաքէն: Իրաքի մէջ այս պարապութիւնը պիտի օգտագործուի Իրանի կողմէ, որովհետեւ անկայուն Իրաք մը բնականաբար կը ծառայէ Իրանեան շահերուն: Սակայն այսօր Իրաքի մէջ կատարուած ցոյցերը առաջնահերթութիւն չեն Իրանի համար, որովհետեւ կարեւորը Պահրէյնն է:

Պահրէյնը Սեւուտական Արաբիոյ նման քարիւղային հանքեր չունի, բայց ան դրամատնային հսկայ կեդրոն մըն է եւ Արաբական ծոցին մէջ ունի ռազմավարական տեղ: Ան նաեւ ամերիկեան 5-րդ նաւատորմի կեդրոնն է եւ մօտիկ յարաբերութիւններ

ԵՐԿ ԹԱՇՇԵԱՆ
ԼԵՄ-ի «Յրայր Դժոխք» մասնաճիւղ
Շար.ը էջ 48

ԸՆԿԵՐ ԴՐՕ

Նոր ժամանակներու Սասունցի Դաւիթը, որ մրրիկով աշխարհ եկաւ ու փոթորկով հեռացաւ, հայ յեղափոխութեան լուսաւոր դէմքերէն մէկը եղաւ եւ գրաւեց յեղափոխական հսկաներու փառանգին առաջնակարգ դիրքերը: Ան աստիճանի, տիտղոսի եւ փառքի հետամուտ չէր, այլ փառքը ինք կը հետապնդէր զայն: Ս. Վրացեանի վկայութեամբ, ան տիտղոս չունէր, իր տիտղոսը երեք տառէ բաղկացած էր՝ ԴՐՕ կամ լաւագոյն պարագային՝ ընկեր Դրօ: Անդրանիկի կռիւներէն ոգեւորուած Դրոն՝ յեղափոխութեան համար ծնունդ առած այս երիտասարդը, կը նուիրուի Դաշնակցութեան աշխատանքներուն:

Երկրաշարժի եւ փոթորիկի գիշեր էր, 31 մայիս 1884, երբ Սուրմալու գաւառի Իգտիր գիւղին մէջ Մարտիրոս Կանայեանի մեծ ու բարեկեցիկ տան մէջ աշխարհ կու գայ վահանգնեան սերունդին մրրկածին Դրօն՝ Դրաստամատ Կանայեանը:

... Նա հուր հեր ուներ

Եւ աչկունքն էիր արեգակունք...

Դրոյի հայրը՝ Մարտիրոս Կանայեան խելացի, ուժեղ կամքով, հարուստ, ազդեցիկ եւ ժողովուրդին մօտ յարգանք վայելող մարդ էր: Իր մեծ տան մէջ հայկական շունչ ու ոգի կար մնայուն կերպով:

Դրօ հասակ կը նետէ ու կը կազմաւորուի բնութեան ծոցը, գիւղի հասակակից տղոց հետ: Փոքր տարիքէն արդէն անդրադարձ կը ձգէ բոլորին մօտ՝ իբրեւ խաղերու առաջնորդ՝ իշխելու եւ հրամայելու հակումով ու տիրական բնավորութեամբ: Երբ մանուկ Դրօ կը հասնի դպրոցական տարիքի, կը սկսի յաճախել Իգտիր ծխական ուսումնարանը, բայց Դրօ մեծ սէր չէր ցուցաբերէր դպրոցին նկատմամբ: Հայրը կը համոզուի, որ գիւղին դպրոցը յարմար տեղ չէր Դրոյի համար. կ'որոշէ զայն դրկել Երեւանի գիմնազիան, բայց ի յայտ կու գայ, որ այդ եւս Դրոյի տեղը չէր: Հակառակ անոր որ ան ուշիմ եւ օրինակելի յիշողութիւն ուներ, սակայն գիմնազիայի մթնոլորտը Դրոյի հոգեբանութեան եւ երագներուն չէր համապատասխանէր:

Գիմնազիային մէջ պաշտօնեանները՝ հայատեաց ուսուցիչներ, ամէն ձեւով կը փորձէին ռուսամուլ ոգիի մը արմատները դնել հայ աշակերտներուն մէջ՝ հեռու պահելով զանոնք հայկական դիմագիծէ եւ որեւէ հետքէ: Բայց հայութիւնը քնացած չէր այդ տարիներուն (ԺԹ դար), հայկական քաղաքական զարթոնքի շրջան էր. Դաշնակցութիւնը ժողովրդականութիւն կ'առնէր հայութեան մէջ: Վրեժխնդրութեան ոգին ներկայ էր, յեղափոխութիւնն ալ զայրացած ալիքի մը նման հասած էր մինչեւ պետական դպրոցներ: Յեղափոխականներու առաջին շարքին վրայ էր Դրոն եւ այդ օրերուն յեղափոխութեան ոգին իր մէջ ներշնչողը հերոս Անդրանիկն էր. անոր մղած կռիւները կարծես կ'ոգեւորէին Դրոն: Դրօ, հակառակ իր ուշիմութեան եւ սուր մտքին,

դասով չէր հրապուրուէր, արդարեւ, սահմանէն անդին հրացաններու ձայները, քաջ Անդրանիկն ու անոր սիրագործութիւնները կը հրապուրէին Դրօն: Շատ արագ որոշումով մը ան ուզեց զինուորական դպրոց յաճախել՝ յեղափոխական մարտիկ դառնալու նպատակով, բայց տարիքը չէր ներեր: Կը հաստատուի ծննդավայրին մէջ, նոյն տարիներուն՝ 1903-ին, կը հրապարակուի ցարական հրամանագիրը՝ հայ ազգային-եկեղեցական կալուածներու գրաւման մասին: Դաշնակցութեան ղեկավարութեամբ, հայութիւնը ոտքի կը կանգի դեմ դնելու ցարի այս որոշումին: Դրօ՝ պայքարով եւ յեղափոխութեամբ լեցուն երիտասարդը, ամբողջ իր եութեամբ կը նետուի կռուի ասպարեզ. հոս է, որ եղաւ Դրոյի առաջին մարտական գործը, երբ իր գիւղի դաւաճան Մարտիրոսին «հաշիւը տուաւ»:

Այդ դէպքէն ետք անհրաժեշտ էր, որ Դրօ հեռանար Սուրմալուէն, բայց ինչպէ՛ս հեռանար, երբ սիրահարած էր Աւագեան ընտանիքէն օր. Արծուիկի. անյոյս էր անոր սերը Աւագեան եւ Կանայեան ընտանիքներու անդադար թշնամութեան պատճառով: Դրօ ստիպուած կը հեռանայ ծննդավայրէն եւ կը մտնէ Ախուլգինակի զօրագունդը՝ իբրեւ կամաւոր զինուոր, զինամարզական բաժնին մէջ: Իր ծառայութեան հանգրուանը կը զուգահիւսէր պայքարի բորբոքման, հայ-թաթարական ընդհարումներուն, Սասնոյ ապստամբութեան: Դրօ այս բոլորը լսելով փախուստ կու տայ դէպի Պաքու՝ միանալով Նիկոլ Դումանի ղեկավարած դաշնակցական մարտիկներու շրջանակին:

Պաքու կը գտնուէր տնտեսական եւ մշակութային մեծ կշիռ ներկայացնող հայութիւնը. հոն հաւաքուած էին նաեւ մարտական ղեկավարներ, ինչպէս՝ Նիկոլ Դուման, Խանասորայ Վարդան եւ ուրիշներ: Նակաշիճէի ծրագիրով եւ որոշումով 1905 փետրուար 6-ին կը սկսի հայութեան վրայ թալան ու յարձակում, հայերը նիւթական մեծ կորուստներ կ'ունենան: Կեդրոնական կոմիտէն կ'որոշէ ահաբեկել Նակաշիճէն. Դրոն, որ այդ օրերուն Հիւսիսային Կովկասի Պիատիգորով քաղաքին մէջ զինուոր էր, կ'որոշէ ինք գործադրել մահավճիռը՝ Նիկոլ Դումանի խօսքերէն տպաւորուած. «Շա՛տ լաւ, Տէրը քեզի հետ, գնա՛, կը վերադառնաս կա՛մ վահանը ձեռքիդ, կա՛մ վահանին վրայ»: Դրոն ինքզինք կաղ ձեւացնելով, կ'եսորուան ժամը 3:00-ին իր ձեռքի ռումբը կը նետէ Նակաշիճէի կառքին վրայ, որ կը ջախջախուի, իսկ անոր դիակը արիւնլուայ վիճակի մէջ կը փռուի հրապարակին վրայ:

Կեդրոնական կոմիտէն կ'որոշէ զայն իսկոյն հեռացնել Պաքուէն. Դրօ մեծ տխրութեամբ կ'անցնի Երեւան, ուր մեծ ուրախութեամբ կ'ընդունին զինք դաշնակցական Խեչոն եւ օգնականը Փառկեցի Մկրտիչը: Կեդրոնական կոմիտէի հաւանութեամբ Դրօ կը նշանակուի «Թռուցիկ» խումբի պետը. նոյն օրերուն կը



սկսին հայ-թաթարական կռիւները, թուրքերը կը յաջողին անգամ մը եւս հարուածով վնաս հասցնել. Խեչոն, Մկրտիչը եւ Դրոն իրարու հետ խորհրդակցաբար կ'որոշէն ուժեղ հակահարուած մը հասցնել թշնամիին. մեծ աշխատանք կը տանին Դրոյի «Թռուցիկ» խումբի անդամները: Յաջորդ օրը հայ ժողովուրդը մեծ ուրախութեամբ կ'ողջունէ յաղթանակը:

Դրո հազիւ 21 տարեկան վառվառն էր յուսատու երիտասարդ էր. Նակաշիճէի ահաբեկումը մեծ համբաւ տուաւ Դրոյի, սակայն տակաւին փորձառութեան պետք ուներ կարգապահ լեղափոխական դառնալու համար: Նիկոլ Դուման կ'որոշէ զինք ուղարկել արեւի ապահով ու հանգիստ վայր մը՝ Դրքիբուլախ, ուր կը հսկէ ժողովրդական ինքնապաշտպանութեան գործին՝ Դումանի բոլոր հրահանգները կատարելով: Նորս գիւղը կ'ընտրէ իբրեւ կեդրոն եւ կը սկսի գիւղերու ինքնապաշտպանութեան գործին: Շրջանի եռուզեռը նկատելով, թուրքերը յարձակում կը գործեն, սակայն կը հանդիպին Դրոյի խումբին բուռն դիմադրութեան: Այս դէպքով մեծապէս կը բարձրանայ Դրոյի հեղինակութիւնը՝ հայդուկներուն եւ ժողովուրդին մօտ: Այնուհետեւ, Քեռիի ընդհանուր հրամանատարութեան կողքին ան կը վարէ Լեռնային Նախիջեանի եւ Չանգեզուրի ինքնապաշտպանութեան շատ մը կռիւներ, եւ ի վերջոյ, պարտուած թշնամիին կը դիմէ հաշտութեան: Նակաշիճէի ահաբեկիչը կը փաստէ, որ ինք հմուտ կազմակերպիչ, տաղանդաւոր խմբապետ եւ ռազմագէտ է: Այս խաղաղութեան միջոցին Դրո կը վերադառնայ ծննդավայրը եւ կ'ամուսնանայ օրդ. Արծուիկին հետ՝ վերջ դնելով Կանայեան-Աւագեան ընտանիքներու երկարատեւ հակառակութեան:

1908-ին Դրո կը հաստատուի հին Պայազիտի մէջ՝ իբրեւ քարիւղի վաճառական Սուրէն Էֆենտի: Ան գործի եւ բարեկամական կապեր կը հաստատէ քրտական ցեղախումբերու եւ թուրք պաշտօնեաներու հետ: Իր քաղցր բնավորութեամբ կը գրաւէ անոնց սրտերը, բայց գաղտնաբար Կովկասի սահմանագլուխի Դաշնակցութեան այս ներկայացուցիչը հաղորդակցութեան, կապի եւ զենքի փոխադրութեան վարիչը կ'ըլլայ:

Վրայ կը հասնի Ա. Զամաշխարիային պատերազը: Դրո կը մեկնի Թիֆլիս, ուր Դաշնակցութիւնը կ'որոշէ ռուսական զօրքերուն կողքին Թուրքիոյ դէմ կռուելու համար հայ կամաւորական գունդեր ուղարկել ճակատ: Դրո կը ստանձնէ երկրորդ գունդի հրամանատարութիւնը: Ան շուտով իր շուրջ կը համախմբէ 400-ի մօտ դաշնակցական մարտիկներ ու լաւագոյն տարրեր, կապեր կը հաստատէ ռուս բանակի հրամանատարութեան հետ, կ'ապահովէ նիւթական, ռազմական պահանջները: Հոկտեմբերի սկիզբը երկրորդ գունդը պատրաստ կ'ըլլայ արդէն:

Դրոյի ճակատ մեկնելուն առիթով սարքուած ընթրիքի մը ընթացքին Դրո հետեւեալը կ'ըսէ. «Սա կը լինի վերջին եւ վճռական ճակատամարտը... Կա՛մ ազա-

տութիւն, կա՛մ մահ... Ես գգում եմ նոյնպէս, որ ով գիտէ քանիսը մեզմէ չեն վերադառնայ կռուի դաշտից... Մեծ գործերը մեծ զոհեր են պահանջում... Տղերք ջան, ցտեսութիւն Էրզրում...»: Կռիւներու ընթացքին Դրոն կը վիրաւորուի եւ դժուարութեամբ զինք կը հասցնեն Թիֆլիս՝ դարմանումի համար, սակայն գնդակը կը մնայ իր թոքերուն մէջ եւ կ'ընկերանայ իրեն ամբողջ կեանքին: Նիկոլա ցարը կ'այցելէ Դրոյի եւ շքանշան մը նուիրելով հարց կու տայ Դրոյին, եթէ սորվա՞ծ է զինուորական արուեստը:

«Յեղափոխութեան մէջ», համարձակօրէն կը պատասխանէ Դրոն: Նկարագիրով վախկոտ ցարը կ'ուզէ դուրս գալ սենեակէն:

1915-ի ապրիլ 4-ին կամաւորական գունդերը կը միանան «Արարատեան ջոկատ» անուան տակ՝ իբրեւ յառաջապապ մաս դէպի Վան արշաւելու պատրաստուող զօրախումբ. կամաւորական գունդին գլուխը անցած Դրոն կ'ըլլայ առաջին Վան մտնողներէն:

1918-ի մայիսեան հրեղէն օրերուն, երբ կ'որոշուի հայրենիքի եւ հայ ժողովուրդի գոյութեան հարցը, Դրոն իր քաջերով կը վարէ Բաշ Ապարանի հերոսական ճակատամարտը, որ վճռական կշիռ կ'ունենայ մարտնչող հայութեան յաղթանակի ապահովման իմաստով: 1920-ին խմբապետը կը դառնայ պետական մարդ, 2 դեկտեմբեր 1920-ին Դրո Զայաստանի կառավարութեան կողմէ համայնավարներուն հետ կը ստորագրէ համաձայնագիր մը, որուն համաձայն, Զայաստան կ'ընդունի համայնավար վարչակարգը: 2 ամիս ետք կ'աքսորուի Մոսկուա, ուր կը մնայ 5 տարի: 1925-ին կ'արտօսեն, որ անցնի Փարիզ, ապա՝ Ռումանիա:

1933-ի Դաշնակցութեան 12-րդ Ընդհանուր ժողովը Դրոն կ'ընտրէ ՀՀԴ Բիւրոյի անդամ:

1952- 1955 թուականներուն ան Պէյրութի մէջ կ'ապրի Սիմոն Վրացեանի յարկին տակ եւ յաճախ կը գանգատի յօդացաւ: 8 մարտ 1956-ին, յետ երկարատեւ հիւանդութեան, ան հոգին կ'աւանդէ Պոսթոնի մէջ: Թոքէն կը հանուի փամփուշտ մը, զոր ստացած էր 1914 հոկտեմբերին, նոյն ատեն կը հանուի սիրտը, որ Դրոյի փափաքով բախտաւոր օր մը տարուի Զայաստան եւ հոն թաղուի:

Այդ օրերուն կարելի չէր Դրոյի փափաքը իրականացնել, սակայն 2000-ին պետական եւ ժողովրդական մեծ շուքով հերոսին աճիւնները Պոսթոնէն կը փոխադրուին Զայաստան եւ կը տեղաւորուի Բաշ Ապարանի հողին մէջ:

**ՍՍԼԻՍ ՏՕՆԱՊԵՏԱՆ
ԼԵՍ-Ի «Արաբօ» մասնաճիւղ**

**Օգտագործուած աղբիւրներ՝
«Մրրկածին Դրոն», Սիմոն Վրացեան
«Դաշնակցական պատանիին գիրքը»**

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԼԵՄ-Ի «ՌԱԶՄԻԿ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ

ՀՀ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԹԻՒՆ ԱՌԻԹՈՎ

ՅԱՆՁՆԱԴՌՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Իրերայաջորդ երիտասարդական փաղանգներ յատկանշուած են իրենց մտածումներուն եւ կենսափորձերուն իւրայատկութեամբ:

Շատ անգամ անոնք կլանուած ըլլալով օրուան քաղաքական թէ ընկերային հոսանքներէն, գտնուած են լուրջ կացութիւններու դէմ յանդիման՝ հետագայ աշխատանքներու ճիշդ հունաւորումներու տեսակէտէ:

Բարեբախտաբար, դաշնակցական իրականութեան մէջ նման երեւոյթներու առկայութիւնը այդքան ալ մտահոգիչ տարողութիւն չէ զգեցած, պարզ այն պատճառով, որ սերունդներու միջեւ ստեղծուած շաղախը, եթէ մէկ կողմէ եղած է գաղափարական դաստիարակութիւնը, ապա միւս կողմէ՝ եւ առաւելաբար, զիրար սնուցող եւ կենսաւորող աւիշը եղած է քննական մտքի զարգացումն ու տարբեր երեւոյթներու հանդէպ կեցուածքի ճշդորոշումը:

Այլ ասած, ճիշդ է, որ երիտասարդականի թէ ուսանողական միջավայրերու մէջ հասակ նետած դաշնակցական սերունդներէ գաղափարական արժէքներու պաշտամունքի եւ կենսակերպի կեդրոնացում պահանջուած է, այդուհանդերձ, ինքնակազմաւորման ամէն հրայրքի առիթներ անպակաս եղած են այս միջավայրէն, որովհետեւ պատմութեան ընդմէջէն ժառանգուած արժէքային ամէն սկզբունք համոզումի եւ աշխարհահայեացքի վերածուած է ըստ ամենայնի:

Անցնինք:

Նմանօրինակ մտորումներու առիթ մը հանդիսացաւ «Ռազմիկ»ի վերջին հրատարակութիւնը, որ ամբողջութեամբ նուիրուած էր ՀՀ Դաշնակցութեան 120-ամեակին:

Առաջին հայեացքով մատնանշելին կը մնայ այն, թէ երիտասարդ գրիչներ ըստ արժանւոյն փորձ մը կատարած են վերաթարմացնելու դաշնակցական գաղափարախօսական ակունքները, վերահաստատելու ծրագրային թէ առաջադրանքային արժէքներ, վերապրելու գաղափարական հնչեղութիւնն ու անժամանցելիութիւնը ամբողջ պատմական իրողութիւններու: Իսկ ամէնէն էականը, այն է, որ յանձնառու մօտեցումով եւ ընկալչութեամբ անոնք երիտասարդութիւնը հրաւիրած են ինքնագիտակցական արեւելումներու յստակեցման:

Խորքին մէջ, մտածումներու եւ կեցուածքներու նմանօրինակ արտայայտութիւններ իրենց նպաստը ունին եւ մեծապէս ընդգծելի են իբրեւ ուժական վահանակներ՝ նկատի առած մեր անմիջական կեանքին ու ժամանակներուն ունեցած բացասական ազդեցութիւնները:

Փաստօրէն, երբ պարբերաթերթին մէջ անդրադարձ կը կատարուի ազգային կեանքին մէջ առկայ յոռի եւ անըմբռնելի երեւոյթներուն, երիտասարդական մակարդակի մոլութիւններու թէ դժբախտ ունակութիւններու, կրկին անգամ ի յայտ կու գան

դաշնակցական մտածումներու եւ կենսակերպի իւրայատկութիւնները:

Ըսինք, երիտասարդ գրիչներ, պարզապէս շեշտադրելու տարիքային հանգամանքն ու ներկայ ժամանակներու հետ անոնց կապն ու յարաբերութիւնը: Այլապէս ալ արձանագրելու, թէ այս փաղանգի տղաքը կ'ապրին արդի պայմաններու ամբողջ արհաւիրքը, հաղորդակից են ներկայ դարու պարտադրած բոլոր դժուարութիւններուն, քաջատեղեակ են իրենց դէմ ցցուած մարտահրաւերներուն եւ, աւելի'ն. անոնք առանց վարանումի կ'ուզեն դիմակայել պահպանողական բոլոր մօտեցումները, որոնք կ'արգելակեն ազգային ու մարդկային յառաջդիմութիւնը:

Առաւելաբար, «Ռազմիկ»ի ներկայ թիւին մէջ յիշատակելի կը մնայ այն պատգամը, թէ Դաշնակցութիւնը իր 120-ամեայ երթին մէջ, ազգային իր առաքելութեան ու կոչումին կառչած մատուցելով՝ ունի անյետաձգելի պարտաւորութիւններ եւ ընելիքներ:

Հետաքրքրական հայեացքներու ընդմէջէն՝ ըստ էութեան կ'արժեւորուին նաեւ Դաշնակցութեան հովանիին տակ գործող ուղեկից թէ քոյր միութիւններ, որոնց ծնունդին ու աշխատանքներու ծիրին մասին տրուած են շնորհակալ ու համապարփակ մանրամասնութիւններ:

Իսկ, Այս հրատարակութեան մէջ առկայ յոյժ գնահատելի պատկերը կը կազմէ հարցազրոյցը, որ կատարուած է հայրենի



պատմաբան Աշոտ Մելքոնեանի հետ:

Անհրաժեշտ է ընդգծել, թե վաստակաւոր մանկավարժի եւ հմուտ գիտնականի գերազանց արժանիքներով օժտեալ Աշոտ Մելքոնեան, ընձեռնուած այս առիթին եւ սահմանափակ էջերու ընդմէջէն՝ կրցած է բնութագրել ԶՅ Դաշնակցութեան պատմական դերակատարութիւնն ու ունեցած կշիռը ազգային ազատագրական պայքարին մէջ՝ մատնանշելով անոր իւրայատկութիւնն ու փորձառութիւնը ազգային-գաղափարական թէ պետական-քաղաքական հարթակին վրայ:

Փաստօրէն, հարցազրոյցի ամբողջ տեսադաշտը Էապէս խարսխուած է հայոց պատմութեան թէ ներկայ ժամանակներու առնչուող հարցերու նկատմամբ քննական մօտեցում կատարելով, հայրենի պետական այրերու ապիկար վարքագիծերը նշելով ու մանաւանդ՝ պատմական իրողութիւններէ թելադրուած ներագային կեանքի ճիշդ հունաւորումին վրայ գրաւը դնելով:

Յայտնապէս, պատմաբան Աշոտ Մելքոնեանի ժիր ու խանդավառ, ինքնավստահ ու հեռահայեաց մտքերուն եւ վերլուծութիւններուն պատուանդանը կը կազմէ անոր խոր հաւատքն ու համոզումը հանդէպ իր ժողովուրդին, հայրենիքին՝ ոգեկան բարձր տրամադրութիւններու եւ կեցուածքներու պայծառ յիշատակութեամբ:

Մտահան պէտք չէ ընել նաեւ այն իրողութիւնը, թէ անկուսակցական պատմաբանին գիտական եւ հետազօտող աշխարհահայեացքը յաւելեալ փայլք ու գրաւչութիւն տուած է անոր խօսքերուն, այլապէս Դաշնակցութեան մասին իր ունեցած արտայայտութիւններուն ընդամաք:

Արդարեւ, ԶՅԴ ԼԵՄ-ի պաշտօնաթերթը իր անցեալի թէ ներկայի դերակատար ունեցած է եզակի հնչեղութիւն, որ տարբեր սերունդի պատկանող երիտասարդներու համար եղած է հոգեմտաւոր դաստիարակութեան դարբնոց եւ ինքնակազմաւորման միջավայր:

Իր գոյութեան ամբողջ տեւողութեան, թէեւ ան դիմագրաւած է զանազան տեսակի դժուարութիւններ (մարդուժի, արհեստավարժ մօտեցումի, արհեստագիտական նորութիւններու ձեռքբերման) եւ այլն, այդուհանդերձ, որոշակի ինքնակազմակերպումի եւ խմբագրական աշխատանքներու ձեւաւորումներու օժանդակութեամբ ցարդ կը շարունակէ ապրիլ եւ դրսեւորել երիտասարդական խանդավառութիւն:

Առհասարակ գնահատանքի եւ քաջալերանքի առընթեր, ու մանաւանդ համացանցի եւ ընթերցանութեան նահանջի այս օրերուն, դաշնակցական երիտասարդութիւնը պարտաւոր է յարատեւօրէն վերաթարմացնելու ինք գինք, յատկապէս «Ռազմիկ»ի բովանդակութեան տեսակետէ, ուր անպակաս պէտք է ըլլան՝ ներագային կեանքի տխուր եւ դատապարտելի երեւոյթներ, քննական հայեացքներու առաւել ճառագայթումներ, խարանող եւ զգաստութեան հրաւիրող նշանակներ, ինչպէս նաեւ՝ հայ մշակոյթի թէ գրականութեան գոհարներու մասին անդրադարձներ:

Ի հարկին, պարբերաթերթին



մէջ համարձակութեամբ բաբախուն նիւթերու մատուցումը, յատկապէս միջազգային իրադարձութիւններու ծիրին մէջ, կամ համաշխարհային երիտասարդութեան հետ առնչուող բազմաթիւ երեւոյթներու կամ հարցերու գծով, անպայման որ իր շահեկանութիւնը պիտի ունենայ նորահաս սերունդի դաստիարակութեան մէջ:

ԶՅԴ ԼԵՄ-ի պաշտօնաթերթը նուաճած է լինելութեան հանգրուանը, վաստկած է փորձառութիւն եւ հասունացման մակարդակ, սակայն, մաղթելին կը մնայ կառուցային հասկացողութեամբ օժտելու զայն, դառնալու կայացած երիտասարդական օրկան, այլապէս դիմակայելու հետագայ տարիներու յորձանուտները:

Աւելին. «Ռազմիկ»ի աւելի քան 25-ամեայ երթը՝ տեղատուութիւններով եւ յաջողութիւններով հանդերձ, կը մնայ խրախուսիչ՝ երիտասարդական խօսքի ու մտքի իբրեւ հոգեփոխիչ շտեմարան:

Այս առումով, դաշնակցական երիտասարդութիւնը վաղուց նուաճած է յանձնառութեան իրաւունքին տիրութիւն ընելու անյեղի հանգամանքին:

ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱՆԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ՀՅԴ ԼԵՄ. ԶԱՂԱԶԱԿԱՆԱՑԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

ՀՅԴ ԼԵՄ-ի դաստիարակչական յանձնախումբին կազմակերպությամբ, Համազգայինի Մ. Ե. Հ. Արսլանեան ճեմարանի սրահին մէջ 20 Ե. 27 մարտի



տին տեղի ունեցան դաստիարակչական սեմինարներ, որոնք հերթաբար իրենց մասնակցութիւնը բերին ԼԵՄ-ի մասնաճիւղերն ու կորիզները: Սեմինարներուն խորագիրն էր քաղաքականացած երիտասարդութիւնը:

Յանձնախումբի կողմէ սեմինարին բացման խօսքը արտասանեց Արամ Սոմունճեան, որ յայտնեց, թէ ազգի մը ապագան կախեալ է իր երիտասարդութեան ուժականութենէն, երիտասարդութիւնը նաեւ որոշիչ դեր կը խաղայ ազգին ներկայ ընթացքին մէջ: Ան նաեւ օրինակներ տուաւ հայոց պատմութենէն, ուր հայ երիտասարդները անկիւնադարձային դեր ունեցած են:

Ապա, ԼԵՄականներուն դասախօսեց Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի: Ան բացատրեց քաղաքականութեան Ե. քաղաքականացած երիտասարդութեան իմաստները՝ շեշտը դնելով տարբեր քաղաքական դերակատարներուն վրայ: Ան նաեւ անդ-

րադարձաւ հայ ժողովուրդի ներկայի Ե. ապագայի կերտման մէջ երիտասարդութեան դերին:

Դասախօսութենէն ետք մասնակիցները բաժնետեղան եօթը խումբերու՝ պատրաստելու համար ուղրքշափի մը Ե. գայն ներկայացնելու բոլորին: Ուղրքշափի ին նիւթերն էին՝

- ա.- Հայաստան Թուրքիա յարաբերութիւններ
- բ.- Զրտացած Ե. իսլամացած հայեր
- գ.- Արցախի բարգաւաճում
- դ.- Օտարամոլութիւն Ե. հայապահպանում
- ե.- Լիբանանի մէջ հակաթուրք պայքարի ձեւեր
- զ.- Սփիւռքի երեւոյթ Ե. հայրենադարձութեան կարելիութիւններ

Է.- Հայ դատի հետապնդման միջոցներ
Սեմինարի աւարտին իւրաքանչիւր խումբ ներկայացուց իր պատրաստած աշխատանքը, որմէ ետք մասնակիցներուն միջեւ քննարկումներ Ե. բակալեճեր տեղի ունեցան:

ԼԵՄ-ԱԿԱՆՆԵՐ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ ԹՐՔԱԿԱՆ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՇԱԲՈՒՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՍ

15 մարտի երեկոյեան ժամը 8:00-ին, ի հակադրեցութիւն Լիբանանի մէջ թրքական ժապաւեններու ցուցադրութեան շաբթուան, խումբ մը ԼԵՄ-ականներ «Սոֆիլ» շարժապատկերի սրահ ուղղուելով ներկաներուն ցրուեցան Լիբանանի Հայ դատի մարմին կողմէ պատրաստուած կոչեր, որոնք կը բացայայտեն Թուրքիոյ մշակութային կեղծ դիմագիծը:

Կոչերու ցրուումին ընթացքին ստեղծուեցաւ իրարանցում: Թրքական շարժապատկերի շաբթուան բացումին ներկայ էին Լիբանանի մէջ Թուրքիոյ դեսպանատան ներկայացուցիչը, լրագրողներ, թրքական ժապաւեններու դերասաններ Ե. բեմադրիչներ:

ԼԵՄ-ականները կոչերը շարունակեցին ցրուել նաեւ շարժապատկերի սրահէն դուրս ճամբու անցորդներուն:



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ԼԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

Կազմակերպութեամբ ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան Կեդրոնական վարչութեան, ուրբաթ, 25 փետրուար 2011-ին, երեկոյեան ժամը 8:30-էն սկսեալ, Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեճի սրահին մէջ տեղի ունեցաւ հայկական երեկոյ մը՝ մասնակցութեամբ երկրորդական տարբեր վարժարաններէ աւելի քան 300 աշակերտներու:

Յայտագիրը սկսաւ ԼԵՄ-ի խօսքով, զոր փոխանցեց Յարութ Պոյաճեան: Ան բարի գալուստ մաղթեց բոլորին ու շեշտեց, որ ԼԵՄ-ի հիմնադրութենէն ի վեր անոր նպատակը եղած է իր շուրջ համախմբել ու կազմակերպել առողջ ու գիտակից սերունդ մը, որ պիտի ըլլայ գաղութային կեանքին շարունակութիւնը երաշխաւորողը: Ուստի, դիտել տուաւ ան, այս ձեռնարկով լիբանանահայ երիտասարդութիւնը կը համախմբուի մէկ սրահի մէջ, հայկական մթնոլորտի մէջ, ուր ամէն բան հայկական է՝ մշակութային ծրագիր, ճաշեր եւ այլն: Յ. Պոյաճեան աւելցուց, որ ԼԵՄ-ի համար հայութիւնը, անոր շահերն ու հայապահպանման աշխատանքը ամէն բանէ աւելի վեր ու բարձր են:

Իր խօսքի աւարտին ան կոչ ուղղեց կառչած մնալու ամէն ինչի, որ հայկական է, շեշտելով, որ ԼԵՄ-ը թիկունքն է ու կը մնայ հայ աշակերտին ու ժողովուրդին: «Միացէ՛ք ԼԵՄ-ին եւ միասնական ուժով ու բռունցքով շարունակենք Հայ դատի երկարաշունչ պայքարը՝ աւելի մեծ յաղթանակներու կերտման տեսլականով», եզրափակեց Յ. Պոյաճեան:

Ապա տեղի ունեցաւ տեսաերիզի ու սահիկներու ցուցադրութիւն. ներկայացուցաւ ԼԵՄ-ը իր ընկերային ու դաստիարակչական կեանքով՝ սկսելով ընկերային խրախճանքներէն մինչեւ բողոքի հաւաքներ, հայապահպանման աշխատանք եւ «Անուշ հայրենիք» ծրագիր, որ նախորդ տարի իրականացաւ Հայաստանի մէջ:

Քաջ գիտնալով, թէ ամէն բան, որ հայկական է, պատուական է, ԼԵՄ-ի կազմակերպած երեկոն հայկական էր, զուտ հայկական: Սեղանները լի էին հայկական աւանդական ճաշատեսակներով, սրահը զարդարուած էր հայկական մշակութային գործերով, մթնոլորտը իսկապէս հայկական էր, իսկ հնչած երգերն ու թնդացող պարերը հայկականէն բացի ոչ մէկ բանի տեղ տուին:

Աշակերտութեան մօտ ուրախութիւնն ու հրճուանքը շատ յստակ էր ու շօշափելի, մինչեւ առաւօտեան ժամերը տեւող շուրջպարերը չդադրե-

ցան ու լիբանանահայ աշակերտներուն դէմքերէն ժպիտը չանհետացաւ:

ԼԵՄ-ի կազմակերպած այս հայկական երեկոն անգամ մը եւս եկաւ ապացուցելու, որ ԼԵՄ-ը ճիգ պիտի չի նայէ այս գաղութի ամրապնդման ու հայկական սերունդներու պատրաստութեան ի խնդիր իր կարելին ընելու:

ԲՈՂՈՔ՝ ԸՆԴԴԵՍ ԹԵՔԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԻՆ

Կազմակերպութեամբ ՀՅԴ ԼԵՄ-ի եւ ՀՅԴ ՉՈՍ-ի շաբաթ, 12 փետրուար 2011-ի երեկոյեան ժամը 6:15-ին, շուրջ 50 դաշնակցական երիտասարդներ ժամանեցին ցուցահանդէսներու «Պիել» համալիր, ուր տեղի կ'ունենար թրքական արտադրութիւններու ցուցահանդէս:



Անոնք ներկաներուն ցուցեցին լիբանանեան արտադրութիւնը քաջալերելու կոչ ուղղող թռուցիկներ: Անոնց վրայ գրուած էին՝ «Ասիկա արտադրութիւնն է ցեղասպանութեան եւ ոճիւրի երկիր Թուրքիոյ», «Պոյքթի ենթարկե՛ թրքական արտադրութիւնները եւ զօրակցե՛ լիբանանեան տնտեսութեան», «Մերժե՛ թրքական միջամտութիւնը լիբանանեան հարցերուն»: Դաշնակցական ուսանողները եւ երիտասարդները միեւնոյն կարգախօսները կրող թի-շըրթներ ալ հագած էին:

Թռուցիկներու ցրուումին ընթացքին, թուրք վաճառականներ դաշնակցական երիտասարդներու կեցուածքին հակադրեցին՝ ապահովական ուժերու ներկայացուցիչներուն աչքերուն ներքեւ խոշտանգելով զանոնք:

ԼԵՄ-Ի ՁՄԵՆԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Կազմակերպութեամբ ՀՀԴ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան, 6-էն 9 յունուար 2011-ին տեղի ունեցաւ ԼԵՄ-ի ձմեռնային բանակումը՝ ՀՀԴ Չահլէի ակումբին մէջ:

Դաստիարակչական բնոյթ ունեցող այս բանակումին իրենց մասնակցութիւնը բերին 60 ԼԵՄ-ականներ: Անոնք բաժնուեցան 2 խումբերու, որոնք կը կրէին Արցախի մէջ զոհուած լիբանանահայ ազատամարտիկներ Կիգէն Չաքարեանի եւ Սիեր Ջուլիաճեանի անունները: Բանակումին մասնակիցները լսեցին դասախօսութիւններ «Հայ երիտասարդութեան ինքնութիւնը եւ դիմագիծի հարցեր», «ԼԵՄ-ի ծնունդը եւ նպատակը», «ՀՀԴ-ն եւ լիբանանեան քաղաքականութիւնը» նիւթերով: Այս բանակումին ընթացքին նաեւ շեշտը դրուեցաւ հրատապ հարցերու շուրջ գրոյցներու վրայ, ինչպիսին

են՝ Պուրճ Համուտի հայեցի դիմագիծի պահպանման տազնապալից խնդիրը, դեպի Արեւմտահայաստան եւ Կիլիկիա կատարուող ուխտազնացութիւններու երեւոյթը, ԼԵՄ-լիբանանահայ երիտասարդ կապի ամրապնդման հոլովոյթը, հակաթուրք պայքարի միջոցները: Մասնակիցները նաեւ փոքր խումբերու բաժնուելով կատարեցին ուրբըջափի աշխատանք՝ նիւթ ունենալով ԼԵՄ-ի գործունեութեան զանազան դաշտերն ու այդ կապակցութեամբ 2011-ին իրականացուելիք ծրագիրները: Դաստիարակչական յանձնախումբին կողմէ պատրաստուած զարգացման մրցումն ու զանազան մարզական խաղերը մրցակցութեան առողջ մթնոլորտ ստեղծեցին երկու խումբերուն միջեւ:

Բանակումին մասնակիցները իրարմէ բաժնուեցան բանակումի ընթացքին ստացած իրենց գիտելիքներն ու փորձառութիւնը ԼԵՄ-ի աշխատանքներուն ի սպաս դնելու եւ զանոնք գործնականացնելու հրամայականով:

ԱՇԿԿԵՐՏԻ ԱՆԿԻՆ


«Ռազմիկ»ի խմբագրական կազմը մեր սիրելի աշակերտներուն կը յայտնէ, որ անոնք, որոնք կ'ուզեն իրենց գրութիւնները հրապարակուած տեսնել «Ռազմիկ»ի մէջ, մենք առիթ պիտի տանք, որ անոնք իրենց գրութիւնները յղեն lemagan@lemagan.org հասցէին կամ անձամբ ներկայանալ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան գրասենեակ եւ յանձնել գրութիւնները:

Այս թիւին նիւթն է՝ **Հայաստանը քու աչքերովդ...**

Այս բաժինին կրնան մասնակցիլ երկրորդական կարգի աշակերտները:

Լաւագոյն երեք գրութիւնները յառաջիկայ թիւին մէջ պիտի հրապարակուին:

Մասնակցիլ փափաքողներէն կը խնդրենք, որ մինչեւ մայիսի աւարտ յանձնած կամ յղած ըլլան իրենց գրութիւնները՝ արձանագրելով ամբողջական անունը:



Երկշաբաթեայ դրութեամբ
(Երեքշաբթի) ունկնդրեցէք
ԼԵՄ-ի «Արծիւ»
յայտագիրը՝ «Վանայ Չայն»էն,
երեկոյեան 7:00-ի լուրերէն անմիջապէս ետք:

www.lemagan.org

ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ...

Շարունակուած 39-րդ էջէն

ունի Միացեալ Նահանգներուն հետ, բնակչութեան մեծամասնութիւնը կը պատկանի իսլամական շիի համայնքին, իսկ արքայական ընտանիքը սիւննի է եւ մօտիկ կապեր ունի Սեուտական Արաբիոյ թագաւորութեան հետ:

Պահրէյնի ընդդիմութիւնը ցոյցեր կազմակերպեց՝ պահանջելով սահմանադրութեան փոփոխութիւններ, նաեւ առիթ ու ազատութիւն շիի համայնքին՝ մասնակցելու իշխանութեան: Սակայն եթէ Պահրէյնի սիւննի արքայական ընտանիքը տապալի ընդդիմադիր շիիներուն կողմէ, Սեուտական Արաբիոյ շիիները (որոնք կը գտնուին երկրին հիւսիս-արեւելեան քարիւղային շրջաններուն մէջ) քաջալերուած՝ պիտի ապստամբին Սեուտական Արաբիոյ սիւննի արքայական ընտանիքին դէմ: Այս մէկը պիտի տկարացնէ Միացեալ Նահանգներուն քաղաքական ազդեցութիւնը շրջանին մէջ եւ պիտի հզօրացնէ իրանեան ազդեցութիւնը:

Յամենայն դէպս, եթէ Սեուտական Արաբիա միջամտէ Պահրէյնի ներքին քաղաքական հարցերուն, Իրան եւս նոյնը պիտի ընէ՝ իբրեւ պաշտպան Պահրէյնի շիի համայնքին, իսկ եթէ Պահրէյնի կառավարութիւնը փորձէ ուժի դիմելով ճգմել ընդդիմութիւնը, այն ատեն վստահ Իրան պիտի արդարացնէ իր միջամտութիւնը, իսկ ամերիկեան զօրամասը (1500 զինուոր) ստիպուած կ'ա՛մ պիտի պայքարի Իրանի դէմ, կ'ամ ալ պիտի լքէ երկիրը: Վստահաբար, իրանեան իշխանութիւնը շահ ունի Պահրէյնի քայքայման մէջ:

Բայց Իրան իր ձեռքին ունի նաեւ այլ խաղաքարտեր, ինչպէս՝ Օմանը, Զուբէյթը (ուր ամերիկեան բանակը ռազմական կեդրոններ ունի) եւ Եմէնը: Վերջերս կը տեսնենք, որ այս երկիրներուն մէջ դարձեալ շիի համայնքն է, որ ընդդիմութեան գլուխ անցած է, եւ հակակառավարական ցոյցեր կը կատարուին: Սակայն եթէ այս երկիրներուն սիւննի իշխանութիւնները տապալին, Սեուտական Արաբիա պիտի կղզիանայ, եւ իր քաղաքական ազդեցութիւնը պիտի տկարանայ շրջանին մէջ: Ճիշդ ասոր համար Սեուտական Արաբիոյ ոստիկանութիւնը շատ խիստ կերպով կը փորձէ ճգմել որեւէ ընդդիմութեան հետք իր երկրին մէջ:

Այսպիսով, Պահրէյն եւ Շոցի այլ երկիրներ դարձան Իրանի եւ Սեուտական Արաբիոյ միջեւ ռազմաճակատ մը, իսկ, ըստ քաղաքական տարբեր վերլուծումներու, եթէ շրջանի քաղաքական ուղեգիծը այսպէս շարունակուի, ապա Իրան յաղթական դուրս կու գայ, մանաւանդ որ Իրան ունենալով գաղափարապաշտ եւ իշխանութիւններուն հաւատարիմ բանակ մը, երբեք դժուարութիւն չի գտներ երկրին ընդդիմութիւնը ճգմելու: Բայց հոս նաեւ հարց կու

տանք, թէ ի՞նչ պիտի ըլլայ սիւննի Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու կեցուածքը, եթէ Իրան յաղթական դուրս գայ: Բնականաբար, այս բոլոր զարգացումներն ու իրադարձութիւնները ազդեցութիւն պիտի ունենան Լիբանանի վրայ:

Սուրիա ապահով, բայց ինչո՞ւ

Ինչպէս Թունուզ, Եգիպտոս, Եմէն, Լիպիա եւ այլ բռնատիրական իշխանութիւններ, Սուրիա եւս վտանգի ենթարկուած է, որովհետեւ, ինչպէս միւս երկիրները, Սուրիոյ մէջ ալ կ'իշխէ մէկ կուսակցութիւն, խօսքի ազատութիւն գոյութիւն չունի, անգործութիւնը հասած է շուրջ 10-15 առ հարիւրի. այս բոլորով հանդերձ, նախագահ Պաշշար Ասատի իշխանութիւնը դժուար է տապալել: Սուրիոյ մէջ իշխանութիւնը ալեւի համայնքին ձեռքն է (որոնք կը կազմեն փոքրամասնութիւն, իսկ սիւննիները մեծամասնութիւն են), Ասատի ընտանիքը ու ալեւի համայնքը տարածուած են բանակին մէջ եւ կը գտնուին իշխանութեան բանակի պաշտօններուն վրայ, ուրեմն բանակը իշխանութիւններուն հաւատարիմ է:

Սուրիա ներկայիս իր յարաբերութիւնները զարգացուց շրջանի երկիրներուն հետ, ինչպէս՝ Թուրքիա, միեւնոյն ատեն լիբանանեան խաղաքարտը օգտագործելով՝ ճնշելու Արեւմուտքին վրայ:

Եզրակացութիւն

Արաբական աշխարհը ժողովրդավարականացնելը դժուար է. այսօր տեսանք ամերիկեան ժողովրդավարութիւնը ի՞նչ ըրաւ Իրաքի մէջ, Թուրքիա կը միջամտէ արաբական իշխանութիւններու ներքին հարցերուն, Լիպիա ներքին պատերազմի մատուցաւ, Եգիպտոսի եւ Թունուզի արեւմտամետ իշխանութիւնները տապալեցան, Պահրէյնի եւ Եմէնի ապագան մշուշոտ է, Իրանի քաղաքական ազդեցութիւնը կը զօրանայ շրջանին մէջ, Պաղեստին-Իսրայէլ լարուածութիւնը կը սաստկանայ, Սեուտական Արաբիա ներքին տագնապներու դէմ յանդիման կանգնած է...

Այս բոլոր իրադարձութիւններուն դիմաց հարց կու տանք՝ արաբական աշխարհը դէպի ո՞ւր...

Օգտագործուած աղբիւրներ

www.foewigaffairs.com

www.stratfor.com

www.bbcnews.com

www.jpost.com

www.economist.com

13 մարտ, 2011